




ՂՈՒՅՈՒՆ

1992
Ղ-Ե



ԽՐ
ՏԱՐԻ

ԵԶՄԻԱԾԻ



ՊԱՇՏՈՆԱԿԱՆ
ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ԱԹՈՌՈՒՅՑ
Ա.ԷԶՄԻԱԾԻ

ՅՈՒՆԻ - ՅՈՒՆԻ

1992



ՀՐԱՄԱՆԱԻ


S. S. ՎԱԶԳԵՆԻ ԱՌԱՋՆՈՑ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

18207-165

35-92

ՀԱՅ ՀԱՅԻ
Դ Դ
Գ Գ



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ Տ. Տ. ՎԱԶԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ «ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԵԴՐԱՄԻ ՍՏԵՂԴՄԸՆ ԱԹԹԻՒ

ՔՐԻՍՏՈՍԱԽԱՆԴ ՍԻՐՈՅ ՈՂՋՈՅՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ
ՀԱՅՈԱՊԵՏԱԿԱՆ Տ. Տ. ՎԱՐԵԳԻՆ ԵՐԿՐՈՐԴԻՒՆ,
ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ՄԵԾԻ ՏԱԽՆ ԿԻԼԻԿԻՈՅ, Տ. ԹՈՐԳՈՄԱՅ
ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ, ՊԱՏՐԻԱՐՔԻՆ ՀԱՅՈՑ ՍՐԲՈՅ
ԵՐՈՒՍԱՂԵՄԻ, Տ. ՎԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ,
ՊԱՏՐԻԱՐՔԻՆ ՀԱՅՈՑ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈՅ, ՀԱՄՈՒՆ
ԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ, ՎԱՐԴԱՊԵՏԱՑ ԵՒ ՔԱՀԱՆԱՑԻՑ ՄԵՐ
ԵԿԵՂԵՑԻՈՅ ԹԵՄԱԿԱՆ ԵՒ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ,
ՀԱՅ ՀԱՍՏՐԱԿԱԿԱՆ, ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԵՒ
ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆՑ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՈՒ
ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆՑ, ՀԱՅ ՄԱՄՈՒԼԻՆ ԵՒ
ՀԱՄԱՅՆ ՍԻՐԵՑԵԱԼ ՀԱԻԱՏԱՑԵԱԼ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ
ՀԱՅՈՑ

Ազգերի պատմոթիւնը բոլոր ժամանակներում մի տևական պայքար է
եղել պահպանելու իրենց ինքնութիւնը և ազատ գոյատևումը:

Հայոց ազգը ոչ միայն բացառութիւն չի կազմել, այլ իր աշխարհաքա-
ղաքական դիրքով ստիպուած է եղել մշտապէս ինքնապաշտպանութեան
հապական մղել, յաճախ իր զատկների հահատակութեան գնով, ապրելու հա-
պայքար մղել, յաճախ իր զատկների հողի վրայ, իր հասատի, իր արժա-
նապատութեան, իր հոգևոր արժեքների պահպանումով:

Մանաւանդ վերջին երկու հազարամետերի ընթացքում, հայոց պատմութիւնը եղել է մի դիցազներգութիւն յանուն պատութեան և յանուն քրիստոնեական հաւատքի: Այդ ներոսական պայքարի հունի մէջ են ստեղծուել ու բիրեղացել՝ մեր ժողովրդի բարոյական նկարագիրը, մեր հոգևոր արձեքները, մեր ինքնասիա ազգային մշակոյթը:

Մեր օրերում էլ մեր ազգի ճակատագիրը նոյնն է: Նոյն ժողովուրդն է, որ նոր պայմաններում նոյն մարտն է շարունակում: Այսպէս է որ մեր պատմութեան հորիզոննի վրայ, արդի Հայաստանի անկախութեան հոչակումը, հանդիսացաւ լիշտակութեան արժանի մեր ազգային պայծառ իրագործութերից մէկը, իր քաջ որդուց սուրբ արինով:

Այսօր, մեր ժողովուրդը իր երիտասարդ ուժերի զարթօնքով, մի անգամ ևս ապացուեց, թէ չի վախենում ազատ ու ինքնիշխան ապրելուց: Անկախութեան դրօսը իր գլխի վերև բարձր պահած, նաև շարունակում է իր գոյանարտը, պահպանելու համար իր ձեռք բերած ազատութիւնը, ամրապնդելու համար հիմքերը իր նոր պետականութեան, բացելու համար նոր ճանապարհներ հայրենիքի հոգևոր ու հիմքական զարգացման:

Այս ապրումներով ու իշերով է, որ այս օրերին Մենք ողջունեցինք մեր Հայրապետութեան նախագամի հրամանագիրը, ուղղուած մեր ամբողջ ազգին որ ի Հայաստան և որ ի ափինս աշխարհի, որով յայտարարում է ստեղծումը «Հայաստան» համահայկական հիմնադրամի, մայր երկրի և յատկապէս մեծ երկրաշարժի աղէտալ շրջանների վերաշինութեան սատար համերիսաւլու մարդասիրական առաջադրանքով:

Ահա ապահով մի պատմական նախաձեռնութիւն, որ պիտի աղջունեն, վստահ ենք, մեր ազգի բոլոր գաւակները ուր ել որ ապրելիս լինեն աշխարհի վրայ: Վստահ ենք, այս՝ որ բոլոր հայերը ամեստի, անսակարի պիտի պատախանեն՝ «Պատրաստ ենք մեր պարտը կատարելու»:

Այս պատախանը ուսի տառերով պիտի արձանագրուի մեր պատմութեան յաղթական կամարի ճակատին:

Ահա ապահով մի պատուաբեր առիթ, երբ ամէն հայ մարդ կամառ կերպով, իր կարողութեան ներած չափով, տարին մէկ անգամ պիտի կամենայ իր լուսան մատուցել հայրենիքի վերականգնման սեղանի առաջ: Եւ փոքր գումար նուիրաբերող ները թող անյարմար չզգան, քանզի ծովերը կարիւերով են կազմում: Եւ գուցէ ուսանք, ովքեր հնարաւորութիւն ունեն, մեծագումար նուիրաբերումներով իրենց անոնք պիտի անմահացնեն շինարար մի իրագործումով հայրենի սուրբ հողի վրայ, ինչպէս անցեալուն հայ իշխանները՝ մեր փառքի օրերուն:

Մենք, ստաջին ապաստորը մեր Սուպերական Մայր Եկեղեցու, նաև ստաջին սպասաւորը մեր մայր երկրի, բարձրաձայն հրաւեր ենք կարդում մեր ազգի զաւակներին՝ սիրով ընդառաջելու հրաւերի ձայնին, որ հնչում է այսօր ազատ Հայաստանի բարձունքից:

«Հայաստան» համահայկական հիմնադրամի մարդասիրական ծրագիրը անսպաման պէտք է յաշողութեամբ պասկոի, ակնկալուածից ել անկիով: Աս պիտի հանդիսանայ նաև՝ փայտուն մի դրսւորումը հայոց համաժողովրդեան միասնութեան: Այս ասին որևէ դանդաղում կամ երկմտութիւն ներեն չի կարող լինել:

Մենք հասաւում ենք մայր հայրենիքի գոյաւենանն ու ծաղկումին, մենք հաւատում ենք, որ այս տեսիլուրով ամէն հայ իր օգնութեան ձեռքը պիտի երկարի այսօր դէպի Հայաստան:

Վաստահ ենք նաև, որ Հայ Առաքելական մեր Եկեղեցու նուիրապետական Աթոռութերը, թեմական և համայնքային կենտրոնները, մեր բոլոր հոգևոր սպասարքները պիտի լսեն Մեր հրաւերը:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը և մեր ամբողջ Եկեղեցին պատրաստ պիտի լինեն իրենց բոլոր ուժերով նուիրուելու սույն առաքելութեան կենսագործմանը:


Տէր Աստուած հարցն մերոց, անփորձ ու անշարժ պահպանեան զՀանրապետութիւն Հայաստան աշխարհի, ի շինութեան, ի խաղաղութեան և յանսասանութեան, այժմ և միշտ. ամէն:


Կոչ Ջե Ռ

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուա կոնդակու ի 17 Մարտի
1992 Փրկչական ամի,
և ի տումարիս Հայոց ԹՆՍԽ.
ի մայրապետական Սրբոյ Էջմիածնի

Հմբ. 1875





ՄԵԾԻ ՏԵՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԻԱԿԸ «ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԵԴՐԱՄԻ ՍՏԵՂԾՄԱՆ ԱԹԹԻՒ

ԳԱՐԵԳԻՆ ՇԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՒ ԱՆՀԱՍԱՆԵԼԻ
ԿԱՄՈՔՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ՀԱՏՐՈՒԹԵԱՄԲ ԱԶԳԻՒ
ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՀԱՅՈՅ ՄԵԾԻ ՏԱՆՆ
ԿԻԼԻԿԻՈՅ

ԾՆՈՐՀՔ, ՍԷՐ ԵՒ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ Ի ՏԵԱՌՆԷ ԵՒ ՈՂՋՈՅՑ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ Ի ՄԷՆՉ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՅԱԶՈՅ
ՄՐԲՈՅ ՀՈՐՆ ՄԵՐՈՅ ԳՐԻԳՈՐԻ ԼՈՒՍԱԽՈՐՉԻՆ

ԹԵՄԱԿԱՆ ՄՐԲԱԶԱՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՑ, ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ
ԵՒ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ, ՎԱՐԴԱՊԵՏԱՑ ԵՒ ՔԱՀԱՆԱՅԻՑ,
ԱԶԳԱՅԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՈՅ ԵՒ ԿԵՐՈՌՆԱԿԱՆ
ՎԱՐՉՈՒԹԵԱՆ, ԵՐԵՍՓՈԽԱՆԱԿԱՆ, ՊԱՏԳԱՄԱԽՈՐԱԿԱՆ,
ԳԱԻԱՌԱԿԱՆ ԵՒ ԹԵՄԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ,
ԹԱՂԱԿԱՆՈՒԹԵԱՆՑ ԵՒ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԵԱՆՑ,
ԲԱՐԵՍԻՐԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆՑ ԵՒ ԾԱՌԱՅԻՑ ՀԱՅ
ԴՊՐՈՒԹԵԱՆ, ԴԱՍԻՆԱՐԱԿ ՈՒԽՈՒՅՇՅԱՆՑ ԵՒ ՄԱՄԼՈՅ
ՍՊԱՍԱԽՈՐԱՑ ԵՒ ՀԱՄՈՐԵՆ ՀԱԿԱՏԱՅԵԱՆ
ՀԱՐԱՋԱՏԱՑ ՄԵՐՈՅ ՀԱՅԿԱՋՆԵԱՆ ԱԶԳԻ ՈՐ Ի ՍՓԻԻՌՈ
ԱՇԽԱՐՀԻ.

ՔՐԻՍՏՈՍԱԽԱՆԴ ՍԻՐՈՅ ԵՒ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՈՂՋՈՅՑ
Ի ՄԷՆՉ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՅԱԶՈՅ ՄՐԲՈՅ ՀՈՐՆ ՄԵՐՈՅ
ԳՐԻԳՈՐԻ ԼՈՒՍԱԽՈՐՉԻՆ.

ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ ՀՈՐ ԱՍՏՈՒԾՈՅ, ՍԷՐ ՈՐԴԻՌՈՅ ՄԻԱԾՆԻ
ԵՒ ԾՆՈՐՀՔ ՀՈԳԻԽՈՅՆ ՄՐԲՈՅ Եղիցին ԸՆԴ ԶԵԶ ԸՆԴ
ԱՄԵՆԵՍԵԱՆԴ ԱՄԵՆ

Հոգեկան անհուն գրիունակութեամբ եւ հայրական ամենաշերմ սիրով
Կ'ուղենք Զեզի Հայրապետական այս Կոնդակը, որ իր տեսակին, տարր-
դութեան եւ խնաստին ու արժեքին մէջ արտօքոյ կարգի հշանակութիւն ունի
Մեզ համար եւ, կը հաւատանք, պիտի ունենայ հաեւ Զեզ համար, անխտիր:

Մեր Մայր Հայրենիքի՝ Հայաստանի Անկախ Հանրապետութեան հոչակումէն եւոք այս առաջին Կոնդակն է, որ Կ'ուղենք մեր հաստացեալ ժողովուրդին, անոր կեանքին մէշ այլազան պատասխանատութիւններ ստանձնած բոլոր անձերուն, հոգեւորական թէ աշխարհական, և բոլոր ազգային եկեղեցական համայնական կազմակերպութիւններուն, բոլոր մակարդակներու վրայ:

Քաջ գիտեք, որ մեր արդի պատմութեան մէշ լուսալից շրջան մը բացուեցաւ եքք 1918-ի Մայիսի 28-ին հոչակուած եւ երկամեայ կեանքէ եւոք բռնատիրական վարչակարգէ մը անարդարօրէն խափանուած Հայաստանի Հանրապետութիւնը վերածնաւ 1990 Օգոստոսի 23-ին նոր հոչակմամբ եւ համագույին կանքի միահամուո, վճռական և սխրալից արտայայտութեամբ:

Եօթանասուն տարիներու համայնատիրական կաշկանդիչ վարչակարգի մը մեր հայրենական ժողովուրդին պարտադրած տառապանքէն եւոք, Հայոց ազգը ի Մայր Հայաստան և ի ծագս աշխարհի, կրակին մէջէն անցած ուկի մետաղին հանգոյն իր ազատութեանը մէշ վերակենդանացաւ հոգեւորապէս և ազգայնօրէն վերաբիրելացեալ պատկերով, «նորափետուր զարդարեալ», իր ինքնութեան և արժանապատութեան շնչտեալ հոգեւորանութեամբ:

Ձեր բոլորին ծանօթ իրողութիւն է, որ Հայաստանի Հանրապետութիւնը այժմ կ'անցնի ծլարձակումի և արմատացումի ճակատագրականօրէն վըճռական օրերու մէջէն: Հոգեւոր, տնտեսական, քաղաքական, ընկերային, կրթական, մշակութային վերականգնումի հրամայականին տակ՝ ան կը դիմագրաւէ բազում տեսակի դժուարութիւններ, հարցեր և տագնապներ: Անմիջական եւ անյետաձգելի կարիքն ունի իր բոլոր զաւակներուն ամրութանուեր, անվերապահ, ներդաշնակ են զոհաբերական աշակցութեան:

Մեր Հանրապետութեան ազգընտիր Նախագահը՝ Լեռնա Տէր-Պետրոսեան, յանուն մեր անկախ պետութեան, հրամանագիր է հանած, ամսոյն՝ Մարտի 3 թուականով, յայտնելով համայն հայ ժողովուրդին, որ որոշած է հիմնել Համահայկական Հիմնադրամ մը «ՀԱՅԱՍՏԱՆ» պարզ ու յանկուցիչ անուան տակ, «Հայ ազգի հնարատութիւնների ու կարողութիւնների համախումք գործադրմամբ» օգնելու Հայաստանի վերաշինման և զօրացնան, կայուն և տոկոն հիմքերու վրայ դնելու երկրի տնտեսութիւնը, յաղթահարելու համար 1988 7 Դեկտեմբերի երկրաշարժի յառաջ քերած շարադիտ հետեւանքները, զօրավիզ կանգնելու Արցախի հայ ժողովուրդին, անոր լինելութեան վճռական և ճակատագրական տագնապայից այս օրերուն, եւ առհասարակ աշակցելու Հայաստանի հայ ժողովուրդի կեանքի վերականգնման հայող համապետական ծրագիրներու իրականացման:

Սրբար ճախանձախնդրութիւն, ազնուական գաղափար և ներքողելի առաջադրութիւն: Վատահ ենք որ որեւէ հայ, ո՞ւր ալ ըլլայ, ի՞նչ պարմաններու տակ ալ որ ապրի, չի կրնար չոգեւորուիլ այս հայրենաշէն ճախանձնութեամբ ու չխանդավառուիլ այս ազգակերտ ճպատակով: Ո՞վ է ազգը, ի՞նչ է հայրենիքը: Մենք ենք՝ մեր սրբանացեալ հողով, մեր արինով, մեր քրիստոնէական հաստաքով, մեր մայրենի լեզուով, մեր քրտինքով, ոգորումներով և մահաւանդ այս բոլորին մեր քերած անհատական, անձնական մասնակցութեամբ: Օգնել հայրենիքին, մասնակցի մեր անկախացեալ ազգի Հանրապետութեան վերակերտումին, չի ճշանակեր տալ որի-շիք: Սա սովորական իմաստով մարդասիրական, գլասափական—ինքնին

այլապէս ազնիւ—արարք չէ: Սա մեր Հանրապետութեան անկախութեան գոյատեաման, առողջ տուեալներու վրայ յառաջացման նորիրականագո՞յն գործն է:

Հայրենիքը մեզմէ իրաքանչիրին եւ մեր բոլորին եղածին, ունեցածին եւ գործուելութեան հասարական հասցէատունն է: Այո՛, մեր բոլորի հարբատառունք, որ մեր կառարած ներդրումները զայն կը վերածեն կենսատունի: Չսովնանք, ինչ որ ենք պայօք՝ որպէս ազգ համայնական մեր գոյութեամբ՝ մեր հայրերու ներդրումներուն «արութեան գործ»երու համահաւաք ժառանգութիւնն է, որով աշնչան կը հաբարտանանք: Եւ ինչ որ վաղը պիտի ըլլանք՝ պարորուած մեր ընծայաբերութեանց ոյժովն է որ պիտի իրագործոի և որպէս այդ հանցողի ապագայ սերունդներուն կողմէ: Պատմութիւնը Աւետարանի այն գանձանակն է, որուն աշշուեն կ'անցնի ամէն մարդ. եւ՝ մարդուն արժէքը կը չափուի իր տուածին որակային տեսակովն ու քանակային չափովը, այդի կենց լուսային հմանատիպովը:

Ահա թէ ինչ զգացումներով և խոնդեռով Մենք այս Կոնդակը որպէս հայրական ամենաաշերս կոչ կ'ուղենք Կիլիկեան դարաւոր Ս. Աթոռի բոլոր զաւակներուոյ, բոլոր թեմերուն մէջ, հրաիրելով ձեզ բոլորի, մեծ ու փոքր, այլ թէ կին, հարուստ թէ ոչ հարուստ, որ իրացնէք, ձեր սեփական մտածումին, շանքին և նորիրումին խառնէք մասնակցութեան կամքը, ձեր կարություն գերագոյն աստիճանով, եւ ձեր սիրոյն լիագոյն արտայացութեամբը: Ով որ ինքզինքը հայ կը զգայ չի կրնար անմասն մնալ այս հանգգական պարտաւորութենէն, որ բացադիկ իմաստ եւ կենսական կարեւորութիւն ունի ա'յժմ, Աերկա'յ ժամանակներուն, ա'յս օրերուն, երբ հայրենիքը կարիքն ունի հաստատուացման և անումի, բարեկիրդութեանց և զարգացումի, հասարակական կեանքի բոլոր մակարդակներու վրայ: Բաւական չէ Անկախ Պետութիւն հոչակելը: Անհրաժեշտ է պետութեան անկախութիւնը պահպանելը և արժեցնելը: Աշխարհն ամբողջ մեզ կը դիտէ: Մեր արժանիքներու իրաւութեան և մեր արժեքի փաստարկութեան ժամանակն է այս: ՀԱՅԱՍՏԱՆ անոնք միշագգային կազմակերպութեանց մէջ արձանագրելը գեղեցիկ իրագործում է. բայց գեղեցկագոյնն է անոր պատուաբեր սահմանումը և զայն շարունակական, մնայոն յարգանքի արժանի դարձելու պարտքը:

Ազգ մը, հայրենիք մը, եկեղեցի մը ամէն բանէ առաջ եւ վեր՝ իր սեփական, իրայտուկ ներքին ոյժերով, կարողականութիւններով եւ իր անդամներու նորիրաբերութեամբ ու զոհողութեամբ կը մնայ առողջ և անսասան յառաջադէմ: Ո՛չ մեկ արտաքին ոյժ եւ օգնութիւն իր ամբողջական իմաստը եւ բարերար արժեքը կը գտնէ առանց այդ ներքին ազգային ինքնեւ առողջութեան և զօրութեան: Մարմնին ներքին դիմացկունութիւնը առողջութեան, ապահովութեան, երկարակեցութեան, ստեղծագործականութեան եւ երշակութեան, նախապայմանն է: Այդ դիմացկունութիւնը ձեռք կը քերտի մարմնի անդամներուն սերտ իրերահաղորդութեամբը: Եւ, Մեզ համար, համայնակական ազնուագոյն և պատուաբեր այս ծրագրի իրագործումին բարիքները անսահման են նաև ի խնդիր մեր ծովովորդի միասնութեան և ամբողջականութեան գաղափարին և գործնական ապրումին ջրեղումին, ողջ Հայութեան ստեղծագործական յաղթական երթին համար:

Ուստի, կը տրուորենք մեր հասաւուեալ և սիրեցեալ ժողովորդը՝ յօժարական պատրաստակամութեամբ, առատաձենութեամբ ընդառաջել հայ-

բենիքի ձայնին, որպէսզի մեր օրերու պատմոթիւնը կերտուի որպէս լուսաշող մէկ օղակ, անցեալի փառքը ապագայի տևակիթին առնչող շքեղ վկալոթիւն:

Ողջ լերոր ո Տէր, զօրացեալք շնորհօք Սուրբ Հոգույն, եւ յաւտ օրինակ ի Մէնջ. Ամէն:

ԿԱԹՈՂԻԿՈՍ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՑ

Տուա Կոնդակս ի Կաթողիկոսարանին

Ի դրուն Մայր Տաճարին Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին


Որ յԱնթիլիաս, Լիքանան

Ի 17-ը Մարտի, 1992 թոին Քրիստոսի, և

Ի թոին Հայոց Ռուսն.

Հնդ Համարա Վ/ԾԾԲ





ՏՕՆ ԿԱԹՈՂԻԿԵ ՍԲ. ԷԶՄԻԱԾՆԻ

Հայ ժողովորդը թերևս միակ ժողովորդն է, որ իր խսկութիւնը գտաւ, ինքզինքը իրականացուց և իր առաւելագոյնը ստեղծեց՝ Քրիստոսի սիրոյ նոր աշխարհին մէջ:

Հելլենները անմահացան իրենց փառապանծ Պերիկլեսեան դարով, Քրիստոսէ հինգ դարեր առաջ, որից ժողովորդներ իրենց վերածնունդը կերտեցին Քրիստոսէ բազում դարեր վերք:

Հայոց մէջ, սակայն, ոսկեայ վերածնունդը՝ սրանչելի հանդիպումը եղաւ մարդու և Աստուծու նիստեղ ծնունդին:

Քրիստոնեութիւնը իշաւ հրեղէն շաղախի մը նման հայ ժողովորդի նոր ընձիւղոյ հոգիին վրայ, ճիշտ այն պահուն, երբ այդ հոգին, տակախին փափուկ կաղապարներու մէջ՝ իր ձները կ'որոներ...


Ս. Էջմիածինը այն մայր հնոցը եղաւ, որ դարբնուեցան անձառ ձները հայոց հանճարին և այն գանձարանը, որ մէկտեղուեցան այդ հանճարի գոհարները լոյս:

Ս. Էջմիածինը մեր Սինա լե՛ռն է, մեր Ակրոպոլը, մեր Ս. Պետրոսը:

Էջմիածինը սալիայն անցեալ չէ միայն, ան է նաև ներկայ և մեր ապագան: Կենդանի է ան ու մշտանորոգ: Ս. Էջմիածինը միշտ կը բաշխուի ու չի նուազիր, ինչքան բաշխուի, այնքան կը շատանայ, ինչքան լոյս սխու՛ այնքան կը շողայ: Դարերը կուգան, դարերը կ'անցնին, ան կը բարձրանայ, կը լուսաւորէ ու կը ներշնչէ միշտ. կեանք տալով՝ կ'ապրի...

Ծովեր, օվկիաններ կամ օսար ձեռքեր կրնան մեզ բաժնել, բայց Էջմիածինը միշտ մօտ է մեզի: Եւ ինչքան հեռու, այնքան մերձ է ան, այնքան կը դառնայ խորհուրդ և հրաշը, երազ և խսկութիւն, լոյս և ստուգութիւն:

ՎԱԶԳԻՆ Ա.
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



**ԱՄԵԽԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏ Տ. Տ. ՎԱԶԳԻՆ Ա-Ի ԽՕՍՔԸ
ՈՒՂԴՈՒԱԾ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻՆ ԵՐԵՒԱՆԻ
ՀԵՌՈՒՍԱՅՈՅՑԻՑ
(17 Յուլիս 1992 թ.)**

«Տէր Աստուած բարեգութ ու ողորմած, մի՛ տանիր զմեզ ի փորձութիւն,
այլ փրկեա՛ զմեզ ի չարէ»:

Հարազատ զաւակներ Հայկազեան մեր ազգի,

Զգում եմ, որ հերոսական Արցախում ստեղծուած առաւել ողբերգական
այս օրերին, Դուք, ի Հայաստան և ի սփիտս աշխարհի, սպասում եք մի
միսիթարական խօսք լուել Սուրբ Էջմիածնից:

Ահաւասիկ, ես պատրաստ եմ այդ պարտքը կատարելու, սակայն ինձ
հարց եմ տալիս՝ ինչպէ՞ս մխիթարեան ես ձեզ, երբ ինքս կարիք ունեմ մխի-
թարուելու, քանզի դժուար է մեղքել ծանր մշուշը, որ իշել է մեր նորաստեղծ
անկայս պետութեան կեանքի հորիզոնի վրայ, տեսնելու համար ողիղ ճա-
նապարհը դեպի փրկութիւն:

Հայ ժողովրդի դարաւոր վշտի երգի՛ Աետիս Ահարոնեանը պիտի ասէր
այսօր Էլ՝ «Վերստին կանգնած ենք մեր ժողովրդի ժանիքաւոր ճակատագրի
առաջ, ճակատ առ ճակատ»:

Սակայն այս պահին, նախ իմ հոգևոր պարտականութիւնն եմ համա-
րում իմ աղօրքը առարել դեպի երկինք, Արցախում և Հայաստանի պահմա-
նամերձ շրջաններում զոհուած ազատամարտիկների հոգիների համար,
որոնք մի անգամ ևս փառաւորեցին մեր ազգի պատմութիւնը իրենց հեղած
արեամբ, ազատութեան ու արդարութեան զոհասեղանի առաջ: Նրանք նախ-
ընտրեցին ազատ մեռնել, քան ստրուկ ապրել:

Իբրև քրիստոնեաներ, մենք բոլորս հաւատում ենք, որ նրանք՝ կեանքից
կեանք գնացին՝ երկնքում արժանանալով փառաց պասկին:

Ես հոգեկան սարտուով լիշում եմ Մայր Սլոռուս միարան Վահան
Դաւթեան արեղային, որ երկու տարի առաջ իր իսկ ցանկութեամբ հոգևոր
ծառայութեան կոչուեց Հայաստանի սահմանամերձ մի շրջանում և ազատա-
մարտիկներին հոգեայս մխիթարելու առթի, ինքը ևս զոհուեց ու թաղուեց
Ս. Գայանեի վանքի միարանական գերեզմանաւոտան մէջ: Երբ հեզ Վահանի՛
ուումբի պացիւնից պտառ-պատառ եղած մարմինը յանձնուում էր հողին, նրա

հայրը՝ պարթևահասակ քաջասիրտ մի հայ գիտացի, բացականչեց՝ «Գնա՛ որդիս, գնա՛, էն տեղից շարունակիր քո պայքարը»:

Մենք ողբում ենք մեր հահատակուած զաւակների կորուստը, բայց մեր հոգին վկայում է, որ նրանք կորած չեն և, այս՝ շարունակում են իրենց սըրբազն պայքարը երկրի վրայ մարտնչող իրենց եղբայրների կողքին:

Ես շգիտեմ ե՞րբ և ինչպէ՞ս կը վերջանայ Արցախեան հերոսամարտը, սակայն ինձ համար մի իրողութիւն ստոյ է, որ յանուն ազատութեան զոհուած մեր ժողովրդի զաւակների հերոսական սխրանքը, աշխարհի պատմութեան ժայռի վրայ անջնջելի տառերով արձանագրուած պիտի մնայ, երկու հազար հինգ հարիր տարի առաջ թերմոպիլէսի հերոսների ծանօթ արձանագրութեան կողքին, Հեղադայում:

Լոյս և խոնկ և օրինութիւն նրանց բոլորի անմոռաց լիշտակին:

Ինձ համար հոգեկան միսիթարութիւն է հաստատել, թէ այս օրերին, մեր Մայր Եկեղեցու հոգեորականներից շատերը, Վահան արեղայի անձնազոհութեան ոգով տոգորուած, իրենց հոգենոր հայրենասիրական պարտը են կատարում թէ Արցախի բարձունքներում, թէ Հայաստանի սահմանամերձ վտանգուած շրջաններում և թէ երկրաշարժի աղետեալ գօտում:

Վշտահար սրտով լիշենք նաև Արցախում ու այլ ահարեկուած շրջաններում հայ ազգաբնակչութեան ծոցից հազարաւոր զոհուած ձեր եղբայրներին ու քոյրերին, ծերունիներին, կանանց ու երեխաններին, ու աղօտենք նրանց արդար հոգիների խաղաղութեան համար երկնային յաւերժութեան լոյսի աշխարհում:

Սյօր իմ խօսքը ուզում եմ ուղղել նաև Հայաստանի ու Արցախի մեր ողջ ժողովրդին, որ կեանքի ծանրածանք պայմաններում, նրանք հոգու անհման տոկունութեամբ ու համբերատարութեամբ իրենց խաչն են տանում անտրտունց՝ Գողգոթայի ճանապարհով հասնելու յոյսով յարութեան յաղթանակին:

Յարգանք և օրինութիւն թեզ արիասիրտ հպարտ իմ ժողովուրդ:

Ես ինձ միսիթարուած եմ զգում, նաև բարձր գնահատելով մեր Հանրապետութեան նախագահի, կառավարութեան, խորհրդարանի և քաղաքական կուսակցութիւնների շանքերը, հաւատալով, որ այդպիսով առաւել կ'ամրապնդեն հիմքերը մեր անկախ Հանրապետութեան և աշխարհով մեկ բարձր կը պահուի եռագոյն դրօշը ազատագրուած մեր հայրենիքի, խորհրդանշից ազատն հայոց աշխարհի և մեր ազգային արժանապատութեան:

Սիրեկիններ մեր, ես հրամանում եմ ձեզ քաջութիւնը ոնենալ, տեսնելու թէ վերջին ամիսներին մահաւանդ, ոչ միայն Արցախի մեր ժողովուրդը, այլ նաև մեր մայր երկիրը Հայաստան, կանգնած են վտանգներով յոյի կացութիւնների առաջ: Մեր հայրենին երկրի աշխարհագրական դիրքը, մեր ազգի անցեալ ողբերգութիւնների լիշողութիւնը, մեր սեփական ուժերի տարողութիւնը, այլև այս անիրաւ աշխարհի անտարբերութիւնը, մեր ազգի արդար իրաւունքների նկատմամբ, որով չենք լսում վճռական մի խօսք՝ ոչ հիմասից, ոչ արևելքից և ոչ էլ արևնոտքից ու շարունակում է իշխող մնալ ոչ թէ օրենքի ուժը, այլ ուժի օրենքը, ահա բախտորոշ մտահոգիչ այս իրաղութիւններն են, որոնք ինչպէս գիտէք, տևապէս քննարկման ու վերլուծման առարկան են հանդիսանում մեր Հանրապետութեան նախագահի, մեր խորհրդարանի ու մեր կառավարութեան, որոնք վստահ են, թէ ամէն հնարաւոր միջնառումներով ու համերաշխ գործեղակերպով կը յաջողեցնեն ապահովել մեր հայրենի ժողովրդի և արցախահայութեան անվտանգութիւնը:

Խօսում է մեր Հանրապետութեան նախագահի, մեր կառավարութեան, մեր խորհրդարանի և կուսակցութիւնների երթեան սխալ կամ շփոթ կողմնորշումների մասին. բայց եկեք արդար լինենք խոստովանելու թէ՝ այն ներքին ու մասնաւոն արտաքին ծանր պայմաններում, որի մէջ գտնում են՝ մեր Հանրապետութիւնը և արցախեան աշխարհը, երբ գրեթէ ամէն օր կանգնած են նրանք յարափոխիս, անհախատեսելի ու իրարամերժ կացութիւնների և իրադարձութիւնների հորձանքի մէջ, դժուար է հաւատալ, թէ որևէ կառավարութիւն կամ խորհրդարան կը կարողանային ամէն կողմից խոցուած մեր երկիրը դեկավարել առանց երթեան սխալուելու: Սխալներ եթէ կատարուել են, նրանք կարող են սրբազրուել, զի միշտ կարելի Ե' այսօր աւելի ողիղ մտածել քան երեկ:

Փոթորկուած այս պայմաններում հրամայական է, որ մեր պետական իշխանութիւնները, խորհրդարանը և քաղաքական կուսակցութիւնները՝ իրենց մտածելու և գործելու ուժերը կենտրոնացնելին հիմնական հարցերի լուծման վրայ, ինչպիսիք են՝ անվտանգ պահպանումն ու ամրապնդումը մեր անկախ պետականութեան, արդար մի լուծում գտնելը Արցախեան դասի ու դուրսբերումը մեր հայրենի ժողովրդի տնտեսական այս անտանելի իրավիճակից: Նոր ցեցումների՝ մեր ժողովրդը այլևս չի կարող տոկալ:

Տագնապալի պահերին հին հոռմեացիք պատգամում էին՝ «Հայրենիքի փրկութիւնը գերագոյն օրէնքն է»:

Աստուծոյ և ժողովրդի առաջ պատասխանատո՝ բոլոր մեր քաղաքական ու հասարակական գործիւներին, հայրական հրաւել եմ կարդում դեկավարուել ա՛յս հրամայականով, միևնույն ազգի հարազատ զաւակները լինելու գիտակցութեամբ, ներքնապէս առաւել միաւորուելով, առաւել գործակցելով, ժողովրդավարական օրինականութեան գործընթացով, առաջնորդուած մեր ազգային պետութեան գերագոյն շահերով:

Պատմութեան ընթացքում, գրեթէ բոլոր պետութիւնների, կայսրութիւնների կործանման պատճառները եղել են առաւելապէս ներքին պատակտումները, ներքին հակամարտութիւններն ու կենտրոնախոյս մղումները: Ֆիշենք Ֆիսուսի հրեղեն խօսքերը «Անենայն թագաւորութիւն բաժանեալ յանձն իր՝ աւերի և ամենայն բաղար կամ տուն բաժանեալ յանձն իր ոչ կացցե» (Մատթ. Ժ. 25), այսինքն՝ «Ինքն իր մէջ բաժանուած ամէն թագաւորութիւն աւերում է, և ինքն իր մէջ բաժանուած ամէն բաղար կամ տուն կանգուն չի մնում»:

Այս ճշմարտութիւնը անշուշտ չի հակադրում ժողովրդավարական բազմակուսակցական պետութեան կառույրման հիմքն իսկ է նաև Պօղոս առաքեալի, նոյն ոգով արտայատած դատողութիւնը, թէ՝ «Ինչպէս մի մարմնի մէջ բազմաթիւ անդամներ ունենք և իրաքանչիւր անդամ նոյն գործը չի կատարում, սակայն բոլոր այդ անդամները մի մարմնի են կազմում» (Հռոմ. Ժ. 4—5), և «եթէ մի մարմնի մի անդամը վշտանայ, կը վշտանան մարմնի բոլոր անդամները, իսկ եթէ մի անդամը փառաւորոյի, նոյն մեն կ'ուրախանան միւս անդամները» (Ա. Կորն. Ժ. 26):

Սիրելիներ մեր, չէ՞ք նկատում թէ ինչքան այժմեական և ինչքան ուսանելի են հնչում այս սրբազն յորդորները մեզ բոլորիս համար, մեր խոպանոյց այս ժամանակներում:

Կամենում եմ վերստին յիշեցնել ձեզ մեր Եկեղեցու պատգամը՝ մշտապէս ողղողած մեր ամբողջ ազգին ի Հայաստան և ի սփիռս աշխարհի. «Ազատութիւն յերկրայականս, միութիւն ի կարևորս, սէր յընդհանուրս»:

Իմ խօսքը վերջացնելուց առաջ, ցանկանում եմ խոստվանել, որ իմ մտածումից բոլորովին հեռու է՝ միշամուխ լինել քաղաքական միջկուսակցական վեճերին, որոնք բնական երևոցներ են ժողովրդավարական իրաւակարգ որդեգրած երկրներում, որովհետև համոզուած եմ, թէ վերջին խօսքը պատկանում է մեր ժողովրդին: Բոլոր պարագաներում, մեր ազգային Առաքեական Եկեղեցին իր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնով, Վատահարքը նաև Մեծի Տաճառ Կիլիկիոյ Կաթողիկոսական Աթոռով և Երոսաղեմի ու Կ. Պոլսի պատրիարքական Աթոռներով, կը մնայ միշտ մեր նորահրաշ անկախ Հանրապետութեան և ազատատենչ ժողովրդի կողքին, միշտ նրանց միխթարող, միշտ նրանց զօրավիգ, միշտ նրանց իր օրինութիւնը և Սուրբ Հոգոյ շնորհները բաշխող:

«Այսուհետու եղաքը, ողջ լեռուր, հաստատուն կացէք՝ մխիթարեցարուր, միաբան լեռուր, խաղաղութիւն արարէք և Աստուած խաղաղութեան և սիրոյ եղիցի ընդ ձեզ» (Բ. Կորնթ. ԺԲ. 11): Ամէն:





ԿԱՐԳԱԶՐԿՄԱՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՎՃԻՌ

Նկատի ունենալով, որ առանց եկեղեցական վերին իշխանութեանց գիտութեան և արտօնութեան, դրմելով հայրենի հողի վրա Մայր Եկեղեցուն ծառայելու իրենց ուխտը, S. Մարտիրոս քհն. Զիլինգարեանը և Դափիթ քհն. Զելվէեանը մեկնել են Միացեալ Նահանգներ մշտական բնակութեան համար, այսու գրով վճռում ենք.

Դասպարութեան համար կարգազորիկ անել՝
ա. Մարտիրոս քհն. Զիլինգարեանին՝ դասելով նրան աշխարհականների
շարքը՝ Հայկ Զիլինգարեան իր անունով:
բ. Դափիթ քհն. Զելվէեանին՝ դասելով նրան աշխարհականների շարքը՝ Գեռգի Զելվէեան իր անունով:

Վ. Զ. Գ. Է. Ա.

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ա. Էջմիածին,
11 Յուլիս 1992 թ.





ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՐԱՊԵՏԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՊԱՏՎԱՎՈՐ ԱՆԴԱՄ

Հայաստանի Հանրապետության գիտությունների ակադեմիայի նախագահության անոնց վերջերս Մայր Աթոռը պաշտոնական գրություն ստացավ, որտեղ հայտնվում էր այն մասին, որ Հայաստանի Հանրապետության գիտությունների ակադեմիայի նախագահության հիմներից մեկի որոշմանը նորին Սուրբ Օծովյան Տ. Տ. Վազգեն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսը ընտրվել է Հայաստանի Հանրապետության գիտությունների ակադեմիայի պատվավոր անդամ: Հայաստանի Հանրապետության գիտությունների ակադեմիայի արտասահմանյան անդամ է ընտրվել նաև Կյուլպենկյան Հաստատության (Լիսարոն) վարչության անդամ և նույն Հաստատության հայկական բաժնի վարիչ պրեմ. Ուրբերտ Կյուլպենկյանը:

Սույն թվականի հունիսի 21-ին, երեքարթի օրը, առավոտյան ժամը 10-ին, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը, ուղեկցությամբ Մայր Աթոռ ոի դիվանապետ գերաշնորհ Տ. Ներսես արքեպոս. Պողապալյանի, մեկնեց Երևան՝ Հայաստանի Հանրապետության գիտությունների ակադեմիա:

Գիտությունների ակադեմիայի նախագահության հիմների սրահը լեկցիոն էր: Այնտեղ էին գիտությունների ակադեմիայի նախագահ Վիկտոր Համբարձումյանը, գիտությունների ակադեմիայի խկական և թղթակից անդամները և պաշտոնական այլ անձինք:

Նախագահության սեղանի շորջ, գիտությունների ակադեմիայի նախագահի աջ և ամյակ կողմերում էին նատաճ Հայոց Հայրապետը և մեծարգ Ուրբերտ Կյուլպենկյանը, որին նոյնպես այդ օրը պիտի հանձնվեր ակադեմիայի վկայական, սակայն արտասահմանյան անդամի: Ուրբերտ Կյուլպենկյանը խկական անդամ է նաև Պողոսոգլիայի պատության ակադեմիայի:

Հանդիսավոր արարողության սկզբին բացման խորով հաշվուեն Ակադեմիայունների ակադեմիայի նախագահ Վիկտոր Համբարձումյանը:

Ակադեմիայի նորընտիր անդամներին ներկայացնելու համար խորը տրվեց ակադեմիայի ակադեմիկոս-քարտուղար Վլադիմիր Բարյանուարյանին, որը հակիրճ կերպով բնութագրեց գիտությունների ակադեմիայի երկու նորընտիր անդամներին և ընթերցեց ակադեմիայի նախագահության որոշումը այդ մասին:

Որոշման հրապարակումից հետո ողջոյնի և շնորհավորանքի խոսքերով հանդես եկան ակադեմիկոսներ Մկրտիչ Ներսիսյանը, Վաշն Նալբանդյանը, Լուն Հայվերդյանը, Գևորգ Ղարիբջանյանը, Գևորգ Բրտյանը և որիշներ, որոնք վեր հանդեցին Վեհափառ Հայրապետի գործունեության պատմական, գիտական, գրական, մանկավարժական, փիլիսոփայական կողմերը՝ բարձր գնահատելով նրա բազմամյա վաստակը:

Այսուհետև շնորհակալության և օրինության խոսքով հանդես եկավ Ամենայն Հայոց Տ. Տ. Վագգեն Ա. Կաթողիկոսը:

ՎԵՀԱ.ՓԱՌ ՀԱՅՐԱ.ՊԵՏԻ ՇՆՈՐՀԱԿՍԼԱԿԱՆ ԽՈՍՔԸ

Մեծահարգ տիար պրեգիդենտ, հարգարժան տիարք ակադեմիկոսներ, որ հավաքվել եք այսօր այստեղ, այս կամարների ներքո՝ հանդիսավորապես հանձնելու ինձ Հայաստանի գիտությունների ակադեմիայի պատվավոր անդամի կոչումը: Ես խորագաց շնորհակալություն եմ հայտնում և նույնիսկ նկատում եմ ինձ անարժան, որովհետև ես գիտնական չեմ անշոշտ, սակայն ընդունում եմ այս իբրև բարոյական արտահայտություն Ձեր կողմից՝ ողբերգական Հայոց Հայրապետին:

Նախ պետք է խոր համոզումով ընդգծեմ, թե ես չափազանց բարձր եմ գնահատում ընդհանրապես ակադեմիան իբրև գիտական հաստատություն: Աշխարհի բոլոր առաջադեմ ազգերը, երկրները ունեն այդպիսի հաստատություններ, և դա բնորոշում է տվյալ ժողովրդի գիտական, ինցագական և մշակութային մակարդակի աստիճանը: Ես երշանիկ եմ իբրև հայ ժողովրդի գավակ, որ նաև մեր ազգը ունեցավ և ունի այդպիսի հաստատություն գիտությունների ակադեմիա անունով:

Ինչպես հայտնի է, ակադեմիաները պատմականորեն ծնունդ առան Արևմտյան Եվրոպայում 16-րդ դարից հետո: Կարծեմ 16-րդ դարում առաջին անգամ Ֆրանսիայում հիմնվեց «Կողեծ դը Ֆրանս», որ ակադեմիա անունը չէր կրում, բայց մի տեսակ նախակարապետություն էր հետազայտմ ծնունդ առնող ակադեմիաների: Բայց 17-րդ դարի սկզբին է, որ Ֆրանսիայում առաջին անգամ ստեղծվեց ակադեմիա անունով մի հաստատություն: Հետագա տասնամյակներին հաջորդեցին Անգլիայի, գերմանական երկրների, հատկապես Պրուսիայի, Խոտալիայի, Խուսաստանի ակադեմիաները: Եվ հետաքրքրական է հիշել այստեղ Պրուսիայի կայսր Ֆրեդերիկ Բ-ի գաղափարը՝ ստեղծելու համաշխարհային մի ակադեմիա, «Ակադեմի ունիվերսալ», որ հումանիստական մի մեծ գաղափար է եղել: Ֆրանդեկ Բ-ն կանքի կոչեց այդ գաղափարը և հրավիրեց տարրեր ազգերի գիտնականներ, հատկապես ֆրանսիացիներ: Հետաքրքրական է հիշել, որ հակառակ գերմանացիների և ֆրանսիացիների մեջ այդ ժամանակներում բաղաքական ոչ բարեկամական հարաբերություններին, նաև ակադեմիայի նախագահ էր ընտրել մի ֆրանսիացու, և ակադեմիայի անդամների մեծ մասը ֆրանսիացի գիտնականներ էին: Հետաքրքրական է նաև, որ Ֆրեդերիկ Բ-ն հրավիրել էր նաև Խուսաստանի Եկատերինա կայսրություն իբրև ակադեմիկոս, որը երևի պատմության մեջ առաջին կին ակադեմիկոս է հանդեսացել: Մի քանի տասնամյակ կարծեմ գոյատեսկ է այդ ակադեմիան, հետո, սակայն, ցրվել է, հակառակ Ֆրեդերիկ Բ-ի մահից հետո:

Ակադեմիաները մեր օրերին բոլոր քաղաքակիրթ ազգերին պատիվ բերող հաստատություններ են: Ակադեմիան ես պատկերացնում և գնահատում

ևս իրեն պատկավորումը տվյալ ժողովրդի գիտական և մշակութային արժեքների: Երևի երես մենք, իրեն ազգություն, այնքան դժբախտ ճակատագիր ունեցած չկինենին 16-րդ և 17-րդ դարերում, հավանաբար մեր ժողովրդին է պիտի դասվեր այն երկրների շարքին, որոնք ակադեմիաներ ստեղծեցին: Մի ժողովրդ, որ ավելի հին ժամանակներին տվել է գիտականներ, ինչպես՝ Անանիա Շիրակացին, Միհիթար Հերացին և որիշներ, չեր կարող, իմ կարծիքով, անտարեր մնալ և չունենալ իր ակադեմիան այլ ժամանակներում: Բայց մեր ողբայի ճակատագիրը այնպիսին է եղել օտար բռնակալ պետությունների լծի տակ, որ մեր ժողովրդը հազիվ կարողացել է շոնչ քաշել: Եվ ահա մեր ժամանակներում է, որ հայ ժողովրդը հնարավորություն ունեցավ ստեղծելու իր ակադեմիան:

Ես մոտիկից ծանոթ եմ ուսմինական ակադեմիայի պատմությանը: Իր ուսանող մեզ արտոնվում էր հերթական կերպով ներկա լինել Բովսարեստի ակադեմիայի կարևոր նիստերին՝ անշուշտ որպես պարզ ունկնդիրներ: Դամինի վերասում մի քաղկոն կար, և ես մի քանի անգամ ներկա եմ եղել գիտական հաստուկ գեկուցումների: Այդ օրերին ես միշտ երազեմ եմ, որ մեր ժողովրդն էլ ունենա իր ակադեմիան: Իմ խոսքը վերաբերում է 1932—1936 թվականներին, երբ ես ուսանող էի Բովսարեստի համալսարանում:


Ռումինական ակադեմիան, որ մոտ հարյուր տարվա պատմություն ունի, ժամանակ առ ժամանակ իր կանոնադրությունը փոխում էր՝ նայած տվյալ ժամանակի ուսմին ժողովրդի գիտական, ընկերային և մշակութային իրադրությանն ու գզառումներին, որ քացվող հորիզոնների առջև: Ես այս մտքով ել մտենում եմ մեր պարագային և կարծում եմ, որ մեր օրերի այս փոթորկալի շրջանում, երբ ակադեմիայի շորջ տարակարծություններ կան կամ կարծիքների տարրերություններ, այս իրավիճակը պեսք է փոխանցման շրջան նկատել, մինչև որ կայունանա հայ ժողովրդի նորորյա ազգային, ընկերային գիտակցությունը վերջնականապես, իր անկախ հանրապետության պայմաններում, և ակադեմիան նոր առաքելության կոչվի, որպես ազգացած հիմնարկություն չմնա, այլ լինի մշտանորոգ և մշտապես զարգացման աղբյուր հանդիսացող մի կանոն մեր ժողովրդի գիտական և մշակութային զարգացման ճանապարհին:

Այս մաղթանքով է, որ ես ողջունում եմ Ձեզ, մեծահարգ տիար պրեզիդենտ, նաև ձեզ, շատ հարգելի ակադեմիկոսներ՝ մաղթելով ձեզ ուժ, եռան և աստվածային լիառաւ շնորհներ, որպեսզի ձեր ազգանվեր, հայրենանվեր բարձր առաքելությունը շարունակեք նորանոր նվաճումներով: Ես հավատում եմ, հակառակ այսօրվա անորոշ պայմաններին, որ մեր ժողովրդին վերապահված է մեծ ապագա: Եվ շատ ժամանակ չի անցենի երևի, երբ 21-րդ դարում մենք կունենանք նոր Վիկտոր Համբարձումյաններ, նոր Եղիշե Զարենցներ, նոր Հովհաննես Շիրազներ, նոր Արամ Խաչատրյաններ, նոր Սարյաններ և նոր Թամանյաններ:

Այս հավատքով է, որ ես ուզում եմ վերջացնել իմ խոսքը՝ կրկին անգամ Աստուծո օրհնությունը բերելով ձեզ բոլորիդ:


Այնուհետև իր գոհունակության և շնորհակալության խոսքն է ասում Ռոբերտ Կյուպենիամը, որը ի միջի այլոց նշում է,

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՆ



ԴԻՊԼՈՄ

№ 11



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՆ

Հայաստանի ժողովրդական պատմական
կանոնադրության հիման վրա

ԸՆՏՐԵԼ Է

Ամենայն Հայոց Կաթողիկոս
Տ. Տ. Վազգեն Առաքալի
Հայաստանի գրդափոխությունից
ականավոր
պաշտամակը
անօպատ

„30“ ապրիլ 1991 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ԱԿԱԴԵՄԻԱՆ

ՊԵՏԵԿԱՆ



«Վեհափառ Տեր, մեծարգու պարու նախագահ և հարգելի հայրենակիցներ,

Ինձ համար մեծ պատիվ և հաճույք է, որ այսօր գտնվում եմ ձեր մեջ՝ Հայաստանի Հանրապետության գիտությունների ակադեմիայի արտասահմանյան անդամ ընտրվելու առիթով, մի կոչում, որ ինձ շնորհել է ձեր բարձր գիտական կամառը՝ ի գնահատումն 15-րդ, 16-րդ և 17-րդ դարերի հայ-պորտուգալական հարաբերությունների և ի մասնավորի հայ առևտորի ընթանուր պատմությանը նվիրված հետազոտությունների բնագավառում իմ քերած համեստ մասնակցության: Սարելով պորտուգալական հողի վրա, առիթ եմ ունեցել հետզինուն ծանոթանալու, որ ժամանակի ընթացքում այդ աշխարհամասում, որը աշխարհագրական առումով գտնվում է Հայաստանի հակառակ կողմը, բայց նոյն 40-րդ զուգահեռական գծի տակ, Պորտուգալիան չի դադարել առևտրական, կրոնական կամ քաղաքական կապեր մշակել Հայաստանի և հայերի հետ: Ահա այս համագամհերթը ինձ անձնապես մղեցին երեք տասնամյակներից ի վեր կատարելու մի շարք հետազոտություններ, որոնք ապացուցում են զանազան ասպարեզներում Հայաստանի և Պորտուգալիայի միջև գոյություն ունեցող բազմաթիվ կապերը: Եթե պորտուգալացիները եղել են մեծ ծովագնացներ դեռևս 15-րդ դարի վերջից և ճանապարհորդել են ծովերով մինչև Հնդկաստան, Չինաստան, Բրազիլիա, հայերը նույնպես, իրենց հերթին, ամեն ժամանակ և հաւոկապես միջին դարերում եղել են մեծ ճանապարհորդներ և ճանապարհորդել աշխարհով մեկ:


Հայերն ու պորտուգալացիները, քրիստոնեական նոյն ակոսի մեջ թըրձված, չեխ կարող իրար շինանիփակ Հնդկաստանի ճանապարհին»:

Այնուհետև իր խոսքի ավարտին պր. Ռոբերտ Կյուլպենկյանը, շնորհակալություն հայտնելով իրեն ընձեռված այս բարձր հնարավորության համար, ասաց.

«Վեհափառ Տեր, պարու նախագահ, պարունաք հարգամեծար պրոֆեսորներ Հայաստանի գիտությունների ակադեմիայի, թույլ տվեք արտահայտել իմ ամենաանկեղծ շնորհակալությունը ջերմ ընդունելության համար, որով պատվեցիք մեզ: Թույլ տվեք նաև շնորհակալություն հայտնել Հայաստանի կառավարությանը ու ակադեմիայի պաշտոնությանը, որոնք մեծ ուշադրությամբ ու հոգաւարությամբ կազմակերպեցին մեր կեցույթունը Հայաստանում: Այս այցելությունը ես նկատում եմ որպես մի ուխտագնացություն դեպի մեր բազմադարյան պատմության խորքը: Վերադառնում եմ Պորտուգալիա՝ վստահեցնելով ձեզ, որ այսուհետև ևս չանք պիտի շխնապեմ՝ իմ գիտական ուսումնասիրություններով հարստացնելու հայ-պորտուգալական հարաբերությունների պատմությունը և դրանով էլ նպաստելու հայ և պորտուգալացի ծողովորդների բարեկամության ամրապնդմանը»:

Նիստի ավարտից հետո Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը և Ռոբերտ Կյուլպենկյանը ընդունում են անկեղծ և սրտավի շնորհավորանքներ:

Ապա Նորին Սուրբ Օծությունը, ողեկցությամբ Տ. Ներսես արքապիսկոպոս Պողապալյանի, գոհունակ սրտով վերադառնում է Մայր Աթոռ Ա. Էջմիածին:



ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՌԱՆԻ 1991—1992 ՈՒԽՈՒՄԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՓԱԿՄԱՆ ՀԱՆԴԵՍԸ

Սուրբ թվականի հունիսի 19-ին Ս. Լշմիածնի հոգևոր ճեմարանի հանդիսությանց դարձինում, ճախագահությամբ Մայր Աթոռի դիվանապետ, հոգևոր ճեմարանի վերատեսուչ գերաշնորհ Տ. Ներսես արքեպոս. Պողապալյանի, տեղի ունեցավ հոգևոր ճեմարանի 1991—1992 ուսումնական տարվա փակման հանդիսությունը:

Հանդիսությանը ներկա էին Մայր Աթոռի լուսարարապետ գերաշնորհ Տ. Հովհաննելի արքեպոս. Սանելորյանը, հոգևոր ճեմարանի տեսուչ գերաշնորհ Տ. Անահիտ հայիսկոպոս Արարաջյանը, Մայրավանքի միաբանությունը, հոգևոր ճեմարանի դասախոսական կազմը, ուսանողությունը և բազմաթիվ հյուրեր:

Տերունական աղոթքից հետո, բացման խոսքով հանդես եկավ Մայր Աթոռի դիվանապետ, հոգևոր ճեմարանի վերատեսուչ գերաշնորհ Տ. Ներսես արքեպիսկոպոս Պողապալյանը:

«Սիրելի հոգևոր եղբայրներ, քահանա հայրեր, դասախոսական կազմ, հյուրեր և սիրելի սամեր:

Համառակ այս ուսումնական տարվա բազում դժվարությանց, հակառակ շեռուցման և էկեկորականության պակասին և հիկառակ երկու ամսով հոգևոր ճեմարանի դասընթացների ընթառության, կարողացանք Աստուծո օգնականությամբ իր պարտին հասցնել 1991—1992 ուսումնական տարեշրջանը: Փառ ենք տալիս Աստծոն, որ մեզ հասցրեց հունիսան այս պայծառ առավոտյան: Հոգևոր ճեմարանի սաները անցած այս երկու շաբաթների ընթացքում իրենց ամափերջի քննությունները հանձննեցին և ահա այսօր հասան տարեկերջի հանդիսության այս գեղեցիկ պահին:

Երբ բերքը դաշտերում հասնում է, երջանիկ գրողացին մանգաղը ձեռքին սկսում է հավաքել այն: Մենք պայօք, ուսումնական խմանով, հոգևոր մեր կանոնի անդաստանների բերք ենք հավաքում և այդ բերքը դնում Աստծոն սեղանին:

Քիչ հետո հոգևոր ճեմարանի տեսուչը պիտի անդրադառնա այս տարվա հոգևոր ճեմարանի կանոնին ձեռք բերված հնձին և այդ աղոթիվ պիտի բաշխի այն մրցանակները, որոնք ճախատեաված են ուսման և վարքի մեջ արժանավոր սաներին հանձնելու համար:

Այժմ ես բացված եմ նամարտմ հոգևոր ճեմարանի ամավերչի սույն հանդիսությունը»:

Այնուհետև հոգևոր ճեմարանի երգախմբի կատարմամբ հնչեցին Ս. Ներսես Շնորհալու «Ամուլք Բաւատոյ», Ս. Մեսրոպ Մաշտոցի «Ճոյն փառաց» և Վարդան Արևելցու «Հայրատունկ» շարականները: Բ լսարանի սան Գևորգ Կրտիկաշյանը արտասանեց Մուշեղ Խշիանի «Ես Մասիսը չեմ տեսել» բանաստեղծությունը:

Ուսանողության ամունից շնորհակալական խորով հանդես եկավ Ե լը-սարանի սան Համբետ սրբ. Մեհրաբյանը: Սպա հոգևոր ճեմարանի սաների կատարմամբ հնչեցին Գրիգոր Սյունու «Ալագյազ» և Դ. Ղազարյանի «Հովն անուշ» երգերը:

Տարեկան հաշվետվությամբ հանդես եկավ հոգևոր ճեմարանի տեսուչ գերաշնորհ Տ. Անանիա Եպիսկոպոս Արքաջյանը:

S. ԱՆԱԾԻԱ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՐԱԲԱԶՅԱՆԻ ԽՈՍՔԸ

Գերաշնորհ Սրբազն Հայրեր,

Հոգեշնորհ և արժանապատիվ եղբայրներ,

Միրեկի դասախոսներ հոգևոր ճեմարանի, հարգելի հյուրեր և շատ սիրելի սաներ,

Ս.Անկատ և հուշիկ կերպով սահեցին-անցան մեր ուսման և աշխատանքի օրերը: Այս պահիս կանգնած ենք 1991—1992 ու. տարվա հրամեցոյ շեմի առջև:

1991—1992 ու. տարին դժվարին մի տարի էր հոգևոր ճեմարանի համար: Մենք՝ մեր ուսանողությունը բարոյական քարձոր կայունությամբ և տոկունությամբ դիմացալ այդ դժվարություններին: Խսկ դրանք շատ էին՝ լույսի և շերմության պակաս, որը ստիպեց մեզ շորջ երկու ամիս հետաձգել դասերը ճեմարանի հարկից մերս, ցուրտ սենյակներ, որը ուսանողներից շատերը հիվանդանում էին, Արցախից եկող տիտոր լուրեր, տնտեսական շրջափակումից առաջ եկող հիանյափություն կյանքի նկատմամբ: Սակայն, ինչպես սովորաբար ավոտ է, պեսք էր պայքարել, պատվով դորս գալ կյանքի դժվարությունների միջից:

Եկ այսօր հավաքար բոլոր փորձությունների հոգևոր ճեմարանը ավարտին է հասցնում իր տարեկան աշխատանքը:

1991—1992 ու. տարին հոգևոր ճեմարանը սկսեց 130 աշակերտներով՝ բաժանված 7 դասարանների վրա: Այսօր հոգևոր ճեմարանի ուսանողության թիվը, ներառյալ քահանայից դասարանը, 85 է, որոնք բաժանվում են հետևյալ դասարանների:

ա. ճախապատրաստական	15
բ. Ս. լսարան	17
գ. Բ լսարան	20
դ. Գ լսարան	12
ե. Դ լսարան	11
զ. Ե լսարան	5
է. քահանայից լսարան	5

Խնչպես և անցյալում, այս տարի ևս հոգևոր ճեմարանի վերատեսուչ էր Գերաշնորհ Տ. Ներսես արքեպիսկոպոս Պողապալյանը: Տեսական պաշտոնին հրավիրվեց Տ. Անանիա Եպոս. Արաբաջյանը: Հոգևոր ճեմարանի վերակացուների պաշտոններ ստանձնեցին արժանապատիվ Տ. Տիրայր Քին. Գլըլըճյանը, Տ. Խորեն Քին. Մարտիքանը և Տ. Ստեփանոս Քին. Մելիքյանը: Անկենդորեն պետք է ասել, որ հիշյալ վերակացուների ընտրությունը մեծ մասամբ եղավ հաջող, և հոգևոր ճեմարանի տեսչությունը շնորհավորում է նրանց և հայտնում շնորհակալություն լավ աշխատանքի համար:

Հոգևոր ճեմարանը իր հարկից ներս և դրում 1991—1992 ուս. տարում կազմակերպեց մի շարք հետաքրքիր միջոցառումներ: Այսպես,

1. Հայաստանում քրիստոնեության լնդունաման 1700-ամյակին նվիրված մրցանակարաշխության ներկայացրած գործերի ցուցահանդեսի դիտում.

2. Հանդիպում սփյուռքահայ բանաստեղծ Վահրամ Հաջյանի հետ.

3. Մեկօրյա պտույտ դեպի Գեղարդավանք (դասախոսների մասնակցությամբ).

4. Հանդիպում Երևանի դպրոցների աշակերտների Անրկայացուցիչների հետ.

5. Նոր տարվա հանդես.

6. Հայաստանի ֆիիհարմոնիկ նվագախմբի համերգների ունկնդրում.

7. Համերգի ունկնդրում Մարզական համալիրում.

8. Վարդանանց հերոսամարտին նվիրված հանդես.

9. Ավագ դասարանցիների մեկօրյա պտույտ Գառնի—Գեղարդ:

Խորապես գիտակցելով Արցախի ազատագրման համար տարվող ազատամարտիկների կարիքները, հոգևոր ճեմարանի ուսանողությունը դասախոսների հետ միասին իրենց համեստ նպաստը բերեցին Արցախի օգնության ֆոնդին նրանց հանձնելով 4.400 ռ.:

Այժմ ինձ մնում է ներկայացնել Ձեզ Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանի 1991—1992 ուս. տարվա առաջավոր ուսանողներին: Դրանք հետևյալներն են՝

Ե լս.	1. Հակոբ Նալբանդյան	9,2
	2. Համլետ Մեհրաբյան	8,9
	3. Վարուժան Տերտերյան	8,08

Դ լս.	1. Վազգեն Գալստյան	9,5
	2. Վարդան Հարությունյան	9,3
	3. Սերոժ Հարությունյան	8,9

Գ լս.	1. Մուշեղ Ժորյան	9
	2. Արամ Հովհաննիսյան	8,9
	3. Եսայի Կարաղյան	8,4

Բ լս.	1. Էղվարդ Սևադյան	9,8
	2. Սամվել Խաչատրյան	9,7
	3. Տիգրան Սանոսյան	8,9

Ա. լս.

1—2. Ալեքսանդր Քանանյան	9,37
1—2. Տիգրան Շահիթյան	9,37
3. Արմեն Մալխապյան	9,33

Նախապատրաստական

1. Վազգեն Քեսարյան	8,9
2. Կարեն Մանուկյան	8,8
3. Սահակ Ղազարյան	8,7

Քահանայից

1. Արթուր Մաքիյան	8,35
2. Արամ Մովսիսյան	8,14

Անդրանիկ Ժամկոչյան—երգեցողություն, ծառայասիրություն.

Սրտակ Ալեքսանյան—օրինակելի վարք.

Արշակ Շաղոյան—եկեղեցասիրություն:

Մրբազան հոր խոսքից հետո Բ լսարանի սահ Գեղամ Մարտիրոսյանը արտասանեց Պարույր Սևակի «Մայրենի լեզու» բանատեղծությունը, իսկ երգչախումբը հնչեցրեց Ս. Սահակ Չորափորեցու «Յաղթող և զնոր օրինութիւն» շարականը, որին էլ հաջորդեց արդեն ավանդություն դարձած մրցանակաբաշխությունը Մայր տաճարի լուսարարապետ գերշնորհ Տ. Հովհիկ արքեպիսկոպոս Սանեռոյանը առաջադեմ սաներին հանձնեց այս առիթով պատրաստված մրցանակները:

Հանդիսության ավարտին գերաշնորհ Տ. Ներսես արքեպիսկոպոս Պողոսապյանը իր օրինությունը բաշխեց հոգևոր ճեմարանի տեսչությանը, դասախոսական կազմին, ուսանողությանը և հյուրերին:

ՆԵՐՍԵՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՊՈԶԱՊԱԼՅԱՆԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԸ

Զվարթ մթնոլորտում ահավասիկ փակում ենք հոգևոր ճեմարանի ուսումնական տարին: Ամսավերքի հանդեսը արտացոլում է հոգևոր ճեմարանի պատկերը, նրա առօրյան: Եթե աշակերտը լավ է դրսերում իրեն, լսողները տպավորվում են և ասում՝ ահավասիկ մի աշակերտ, որ լավ է աշխատել: Իսկ այն աշակերտը, որ թույլ է դրսերում իրեն, հանդիսատեսը հիասթավիկում է ու մտածում՝ արդյոք այս է պատկերը հոգևոր ճեմարանի: Բայց շնորհանքը, որ կյանքի մեջ միշտ լավն ու վատը միասին են լինում: Լույսը և ստվերը միասին են, հնարավոր չե, որ ամեն ինչ կատարյալ լինի: Կատարյալը միշտ անկատարի կողքին է կանգնած: Բայց համեմայնենք հոգևոր ճեմարանի տեսչությունը, դասախոսական կազմը այս տարվա ընթացքում իրենց շունչն են տվել, իրենց գիտելիքները բաշխել, որպեսզի թաղարի մեջ դրված ծիլերը իրենց ուշադրության և գորգուրանքի մերքն աճեն, ծիլեն ու ծաղկեն, իսկ տարվա ավարտին նրանք, հոգևոր բավարարված, նայեն հճածին և երշանիկ ու հպարտ գցան իրենց հնձի փարթամության համար:

Հոգևոր ճեմարանը ամսավերքի հանդիսությամբ, ուսումնական տարվա դուները փակելով, ամբողջությամբ չի փակում, սակայն, ուսումնական կյանքի ընթացքը: Ընդհակառակը, աշակերտները, որոնք տուն են գնում, այնուղիւն չեն այս պիտի շարունակեն իրենց աշխատանքը, իսկ նրանք, ովքեր մնում են այս պիտի շարունակեն իրենց աշխատանքը,

տեղ, ծառավելու են Մայր Աթոռում կամ որևէ եկեղեցում, և կամ պարապելու են ընթերցանությամբ, որպեսզի կարողանան իրենց ձեռք բերած գիտելիքները կյանքի հետ շփման մեջ դնել և իրենց տեղը գտնել մարդկության կյանքի աստեանավանդակուն: Ոչ եւ դո, միշտ պիտի իմանաս այդ և քո տեղը որոնես մարդկության մեջ: Եթե այդ տեղի չկարողանաս գտնել, դու կորած մարդ ես այս կյանքուն: Դրա համար, սիրելի ուսանողներ, մի կարծեք բնավ, որ հոգևոր ճեմարանն ավարտելով և վկայականը ձեր թիվ տակ դնելով դուք հասած կիմեր ձեր նպատակին:

Որպես մարդ, ձեր կազմությունը առաջին րոպեից պետք է երևա. հայակրթարանից, առաջին դասարանից: Հենց այդ տեղից էլ կարելի է անհատին ճանաչել: Ես վատահ եմ, դոք չպիտի սպասեք, որ վկայականն առնեք, որպեսզի հետո Հայ Եկեղեցու գլխին «թագ ու պարծանք» կամ «փրանք» լինեք: Երկուսն էլ հնարավոր է: Մեր կյանքի մեջ այսպիսի պատկերներ շատ կան: Մենք ցանկանում ենք, որ դուք Ձեր տեղին իսկապես գրտնեք և լինեք մեր Եկեղեցու գոնե պարծանքը, եթե ոչ թագը: Մյուս կողմից դասախոսական կազմը շարունակելու է իր աշխատանքը ամսառային արձակուրդի ընթացքուն. Արանք պիտի հավաքվեն ամսառային սեմինարի, որպեսզի վերակազմեն և իր լրումին հասցնեն հոգևոր ճեմարանի կանոնադրությունը՝ այս տարվա փորձը ևս նկատի ունենալով: Սեմինարի ընթացքուն դասախոսները պիտի աշխատեն նաև հոգևոր ճեմարանի առարկայական ծրագրերը վերանայել, որպեսզի այդ ծրագրերը բյուրեղանան, այժմեականանան և գիտության ու մանկավարժության արդի պահանջներին բավարարություն տան:

Մեր կյանքուն, ինչպես տեսնում եք, դժվարությունները շատ են՝ Էլեկտրականության, ջեռուցման պակաս և այլ կարգի տնտեսական դժվարություններ, նոր տեսուչ սրբազն հայրը նշեց: Դրանց կողքին կան նաև բազում ուրիշ դժվարություններ: Այսօր Հայաստանյաց Եկեղեցին վտանգված է իր իսկ հողի վրա, իր դարավոր կառուցներով: Ո՞րն է այդ վտանգը: Աղանդավորական շարժումը, այլ հարանվանությունների ուսնագործությունները Հայաստանում: Մեր ժողովուրդը քաղաքական իմաստով արդեն երկիրեղիկված է: Եթե աղանդավորական քարոզությանց պատճառով պետի ևս երկիրեղիկվի, այդ պարագային հայ ժողովորդի իդեալները, հայ ժողովորդի երազները չեն կարող իրականաց: Այդ իսկ պատճառով հոգևոր ճեմարանի այս հարկի տակ մենք պետք ունենք հոգեակն պատրաստվելու այն պատերազմին, որ մենք պարտավոր ենք մոլել խաղաղ վիճակում՝ երկխոսություններով, բացատրություններով և մեր ժողովորդի մեջ արմատավորելով այն, ինչ ավանդական է, այն, ինչ պատճական է, այն, ինչ որ մուտք գործեց Հայաստան Քրիստոսի Եջբով, այն, ինչ տրվեց մեզ իրեն շնորհը աստվածային: Ո՞վ պիտի անի այս աշխատանքը, սիրելի սաներ, եթե ոչ՝ մենք բոլոր:

Երբեք չերագեք, թե հոգևորական դառնալով՝ հեշտ կյանք կուտենար և կկարողանար ձեզ համար աշխարհիկ երշանկության մի մթնոլորտ ստեղծել և այսուել հաճոյանալ Ավետարանի մեծահարուստի նման՝ ասելով՝ «կե՛ր, ա՛րք և որա՞ի լեր»: Սակայն մյուս կողմից, երբ մի օր դասավորը ներկայանա և հարցնի, թե ո՞ւր է քո փաստաթուղթը, ի՞նչ աշխատանք ես տարել քո կյանքուն, ի՞նչ ես արել հայրենիքի համար, ի՞նչ ես արել ժողովրդի համար, ի՞նչ ես արել Եկեղեցուդ համար, այդ դեպքուն, ի՞նչ պիտի ասես: Պարապությամբ մարդ կծովանա և կդառնա ոչ պիտանի, բայց տեսիլով ու աշխատանքով կարդունագործե: Այսօր մենք պետք ունենք ձեզանից ամեն

մեկի ամենադույզն աշխատանքին, Զեր համեստ քարոզության, որպեսզի մեր երկիր թափանցած աղաևդավորական այդ շարժումները արմատ չըռնեն, և դուք կարողանաք նրանց փոխարեն Սաստոծ ճշմարիտ խոսքը սերմանել մեր ժողովորդի հոգիների մեջ: Մեր ժողովորդը հոգնոր իմաստով կրոնական դաստիարակության հիմքեր չունի. հավանաբար հողի շերտը շատ բարակ է: Մերմը, որ գցվում է, կարող է իսկովն ծաղկել, բայց պատով չի տա, պետք է խորը կերպով ակոսել նրա հոգին: Ինչպես Նարեկացին է ասում. «Նրանց մտքի անդաստանները պիտի ներկվեն, և աստվածային խոսք սերմը դրվի այնտեղ», որպեսզի աճի, զարգանա և բերը տա: Այն ժամանակ մենք հպարտությամբ պիտի ասենք բանաստեղծի խոսքով. «ինչ որ տվիր, կրաքանչեմ զայն քեզի ահա, Աստված», կամ պատօրագիշի խոսքով՝ «Զքյուի քոյց քեզ մատուցանեմք»:


Սակայն իմ խոսքն այստեղ չպիտի վերջանա. իմ խոսքն ուզում եմ ողղել նաև այն հոգևորականներին, որոնք դասալիք են դառնում: Դասալիք են դառնում՝ իրենց հանձնված հոտը, իրենց ժողովորդը լքելով և ավելի հանգիստ հորիզոններ մենակելով, ենթադրելով, որ այստեղ իրենց համար երջանիկ մի կյանք է սպասում: Նախանձով նայում են Արևմուտքում աշխատող նայ հոգևորականներին, որոնց կյանքի պայմանները, անշոշան ավելի լավ են՝ համեմատած մեր պայմանների հետ, և դա հրապուրում է նրանց: Սակայն ո՞ւր է ովատը, ո՞ւր է ծառայությունը, ո՞ւր է հոգևորականի կոչումը, ո՞ւր է հայրենասիրությունը, ո՞ւր է եկեղեցասիրությունը, ո՞ւր է ձեր խոստումը: Այդ բոլորը նրանց համար փոշի են դառնում: Մարդ նյոթին շպետք է տա իր հոգին: Հոգին երբ նյոթին է տրվում, կմենի և նյոթի պես կփոշիանա, բայց երբ իդեալին, կոչումին է տրվում, այդ պարագային հոգին գեղեցիկանում է, ազնվանում, արգասավորվում, պայծառանում, աստվածայնանում է, եթե կարելի է այս բառը գործածել: Մարդ հոգով պիտի բարձրանա, որպեսզի այն ազնվանա ծառայության, զոհողության, կոչման գիտակցության միջոցով: Ինչպես որ Քրիստոս գիտակցաբար թափեց իր արյունը խաչի վրա, Գողգոթայի բարձունքում, նույնպես, եթե դա անհրաժեշտ է, պարս է մեզ հայրենիքի համար, մեր ժողովրդի համար, նայ ժողովորդի իրավունքների համար, Հայաստանյաց Եկեղեցու հավիտենականության համար, Գողգոթայի բարձունքում հեղեղ մեր արյունը: Սիրելի սաներ, Վեհափառ Հայրապետը երբ երեկ մենակում էր արտասահման, հանձնարարեց ինձ իր կողմից բոլորիդ շնորհավորել այս ամավերջի հանդիսության առջիվ, մաղթել բոլորիդ հաջողություն, կոչման գիտակցություն և ծառայասիրություն: Նա տվեց նաև իր օրինությունները: Երբ դուք այստեղ եք կամ ձեր տանը, ընկերական շրջապատում թե առանձին, իմացեք, որ դուք հոգնոր մենարանի սաներ եք և պետք է այնպես պահեք ձեզ, որ ձեզ դիտող ամեն անհատ տեսնի ձեր մեջ տարբեր մի մարդ՝ Քրիստոսի պատկերով և Սուրբ Հոգու շնորհով: Թող ամավերջի հանդիսության այս օրը լինի ձեր համար նոր երշանկության դոների բացման օր:


Ինչպես գիտեք, մեր հայրենիքն այսօր ծանր վիճակի մեջ է: Այդ ծանրությունը մենք պետք է թեթևացնենք: Ինչպե՞ս: Թող ոչ ոք չափի, թե ես հրացան բռնել չգիտեմ, ես աշխատել չգիտեմ, այս կամ այն բանն անել չգիտեմ: Ամեն մարդ երբ կարգապահ լինի, ամեն մարդ երբ գիտակցություն ունենա, որ ինը Հայաստանի Հանրապետության բաղաքացին է և հետևաբար ենթակա Հայաստանում տիրող օրենքին, այդ դեպքում կարգ-կանոն կինի մեր հայրենիքում:

Ինչքան հնարավոր է թիշ խոսել, ինչքան հնարավոր է շատ մտածել, սիրել հայրենիքը, հողը, Հայաստանյաց Սուրբ Եկեղեցին, և Աստված մեզ կօրհնի, մեր բոլոր նպատակներին իրականացում կտա և մեր կյանքը կինշ-տացնի:

Ես ուրախ եմ, որ այսօր դասախոսական կազմի հետ բավականաշափ հյուրեր էլ ունենք: Մաղյուս եմ մեր դասախոսական կազմին աշխատանքի անսարք կորով ու եռանդ: Մի՛ տկարանաք, երբ այսօր մեր կյանքի մեջ դժվարություններ կան: Այդ դժվարությունները ժամանակավոր են: Բայց այն ծառայությունը, որ դուք անում եք այստեղ, որպես սերմնացաններ աստվածին Բանի, դա մեծ պատիվ է բերում **ձեզ**:

Մենք ուրախ ենք նաև, որ մեր հյուրերը այսօր իրենց ներկայությամբ, ինչպես պարսկահայերն են ասում, շնորհ բերին այս հանդիսությանը: Բարի նկաք, հաջողություն եմ մաղյուս բոլորիդ:





ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Հունիսի 7-ին, կիրակի.—Ճոգեզալուս:

Այսօր Մայր տաճարում, Ավագ և սեղանի վրա, օրվա մեծ տոնի առիթով, և պատարագ մատուցեց ովհատակրաբար Մայր Աթոռում գտնվող գերշ. Տ. Շահե արքեպոս. Ածեմյանը և «Հայր մեր»-ից առաջ հիվոր պատշաճի քարոզ խոսեց (տես էջ 29):

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

* * *

Հունիսի 14-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ և սեղանի վրա, և պատարագ մատուցեց Տ. Մամիկոն արդ. Քիլենյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

* * *

Հունիսի 20-ին, շաբաթ.—Մըրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ եկա ի Վիրապեն:

Այսօր Մայր տաճարում, Իջման և սեղանի վրա, և պատարագ մատուցեց Տ. Տիրայր քնն. Գլըճյանը:

* * *

Հունիսի 21-ին, կիրակի.—Տօն կաթողիկէ Ս. Էջմիածնի:

Այսօր Մայր տաճարում, Ավագ և սեղանի վրա, օրվա մեծ տոնի առիթով, և պատարագ մատուցեց Մայր Աթոռի դիվանապետ գերշ. Տ. Ներսես արքեպոս. Պոգապալյանը և «Հայր մեր»-ից առաջ բովանդակալից քարոզ խոսեց (տես էջ 33):

Հավարտ և պատարագի կատարվեց «Հայրապետական մաղթանք»:

* * *

Հունիսի 28-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ և սեղանի վրա, և պատարագ մատուցեց Տ. Վազգեն արդ. Միրզափանյանը:

* * *

Հովհան 5-ին, կիրակի:—Սյսօր Մայր տաճարում, Ավագ և սեղանի վրա, և պատարագ մատուցեց ովտավորաբար Մայր Աթոռում գտնվող Տ. Պարետ վրդ. Երիցյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց:

* * *

Հովհան 12-ին, կիրակի:—Գիտ տփոյ Մրբունոյ Աստուածածնի:

Սյսօր Մայր տաճարում, Ավագ և սեղանի վրա, և պատարագ մատուցեց ովտավորաբար Մայր Աթոռում գտնվող Տ. Ներսէս ավ. քին. Զերեցյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

* * *

Հովհան 19-ին, կիրակի:—Զ օր զենի Հոգեգալստեան:

Սյսօր Մայր տաճարում, Ավագ և սեղանի վրա, և պատարագ մատուցեց Տ. Մակար քին. Տերտերյանը:

* * *

Հովհան 26-ին, կիրակի:—Վարդավառ: Պայծառակերպութին Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Սյսօր Մայր տաճարում, Ավագ և սեղանի վրա, օրվա մեծ տոնի առիթով, և պատարագ մատուցեց Մայր Աթոռոյ դիվանապետ գերշ. Տ. Ներսէս արքապ. Պոզապալյանը և «Հայր մեր»-ից առաջ բոլվանդակալից քարոզ խոսեց (տես էջ 37):

Հավարտ և պատարագի կատարվեց Հայրապետական մալթանք:


* * *

Հովհան 27-ին, երկուշաբթի—Բ. օր Վարդավառի:

Սյսօր Մայր տաճարում, Ավագ և սեղանի վրա, և պատարագ մատուցեց ովտավորաբար Մայր Աթոռում գտնվող Ամերիկայի հայոց արևելյան թեմի ծիսակատար քահանա արժանապատիվ Տ. Թադէոս Աբդալյանը:

Հավարտ և պատարագի կատարվեց հոգեհանգիստ՝ «վասն համօրէն ննչեցելոց»:





ԾԱՀԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՃԵՄՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ (7 հունիսի 1992 թ.)

«Յանուառ Հօր և Որդու և Հոգոյն Սրբոյ. Ամէն»:

«Ես եին ամենեքիան միաբան ի միասին».

«Եվ բոլորն այնուեղ եին միաբան, միասին»:

Խոսքը, սիրելի հավատացյալներ, առաքյալներու մասին է, որոնք հավաքված եին սեղանի մը շուրջ՝ հիշելու համար Վերշին Ընթրիք և կատարելու համար իրենց մեծ Վարդապետին պատվերը, որ երբ ուզեք ինձին հիշել, սեղանի շուրջ հացը բեկանեցեք, բաժնեցեք ձեր մեջ և բաժակեն բոլոր ալ հաղորդվեցեք:

Այսօր բոլոր քրիստոնեական Եկեղեցիները կտոնեն Պեճունեկուտեի, այսինքն Հոգեգալստյան ս. տոնը: Եվ այսօր այս տոնին առիթով Եկեղեցին իր հավատացյալներու ուշադրությունը կտանի Նոր Կոտակարանի երկու էջերու վրա: Առաջինը Վերշին էջն է Ավետարաններուն, որ կպատմի Հիսուսի Հարությունն հետո երսուն իր աշակերտներուն, և այդ էջով կվերջան պատմությունը Հիսուսի երկրավոր կամքին մարդոց մեջ, որ սկսակ Բեթեհետմի ծնննդով, շարունակեց քարոզչությամբ և հրաշքներով, ապա վերջացավ խաչելությամբ, թաղումով և Սրբազն ու Լուսավոր Հարությամբ: Եվ կակախ հաջորդ էջին վրա պատմությունը Եկեղեցին: Այն համայնքին, որ միասին և միասիրու հավաքված էր Վերնատան մեջ, և երկինքն ահավոր ձայն լավեցավ, և Աստուծ Հոգին իշավ կրակն լեզուներու նման:

Այս երկու էջերն այսօր կուզեմ ներկայացնել սրբազն ալս բեմեն, հանձնել ձեր ուշադրության, որպեսզի կարենանք լավ հասկնալ հնորությունը Եկեղեցին զոր Քրիստոս հիմնեց մարդոց մեջ այս աշխարհի վրա:

Դուքսու Ավետարանի վերշին մասը կխոսի Հիսուսի երևունների մասին: Առաջինը նոյն Հարության օրը, կիրակի օր, երբ իր հետևորդներեն երկուսը կերթային դեպի Մասուս: Երկուք ալ իրար հետ կվիճարանեին բարձրաձայն և կհարցնեին իրարու, թե ի՞նչ եղավ, որ Հիսուս, որու վրա դրած էին իրենց հոյսը, խաչվեցավ, թաղվեցավ և այլս չիրագործեց այն երազը, որու համար հետևած էին իրեն: Այսինքն չիրկեց հրեա ժողովորդը հոոմեական տիրապետութենեն: Եվ ահա, երբ կրակեին, մարդ մը երևացավ նրանց մոտ: Զանցան զայն, չփացան, թե այդ մարդը Հիսուսն էր: Եվ

ահա անոնց կհարցնի, թե ինչո՞ւ կվիճարանին: Անոնք կըսէն. «Դու ես միակ այն մարդը Երուաղեմում, որ լուր չունիս, թե վերջին օրերուն ինչ պատահեցավ այնտեղ. ինչպես Հիսոս մատնվեցավ, ինչպես շարշարվեցավ, ինչպես խաչ բարձրացավ»: Եվ ըսին, թե կըսվի, որոշ կի-ներ գացած են գերեզման և չեն գտած զայն այնտեղ, և լսած են ձայնեն, որ ըսած էր իրենց. «Չէ ասու այլ հարեւա»: Այն ատեն Հիսոս դարձավ իր երկու հետևորդներուն և ըսավ. «Ինչո՞ւ այսքան թերախավատ եք և տկար, չե՞ք գիտեր, թե մարգարեներն արդեն գորշակած են, որ այդպես պետք է պատահեր»: Եվ կըս Ավետարանը. «Հիսոս սկսավ Ս. Գիրքին մեջքերուներ ընել, բացատրելու համար իրենց, ինչ որ պատահած էր, պետք է որ պատահեր»: Սակայն այդ երկու աշակերտները դարձալ չհասկցան, թե Հիսոս էր իրենց հետ խոսողը: Եվ գացին Մատու, իրենց տան մեջ նստեցան սեղանի շորջ: Այնտեղ իրենց անձանոթ մնացած այդ մարդն առավ հացը, բեկանց և իրենց տվավ ուսելու: Եվ կըս Ավետարանը. «Այն ատեն միայն բացվեցան իրենց աշքերը և տեսան, որ Հիսոսն էր: Եվ ճիշտ այն ատեն, երբ ճամփան էին, ան անհետացավ իրենց աշքերն»:

Այս պատմումը մեծապես նշանակալից է այսօր մեզի համար, որովհետև ըսել կուզե մեզի, թե Հիսոսի ներկայությունը չենք զգար նոյնիսկ, եթե գիտենք անոր մասին և լսած ենք անոր Ծնունդի, Խաչելության և Հարության մասին: Թե Հիսոս չի քայեր մեր քովեն, և չենք ճանշնար զայն, նոյնիսկ եթե երթանք Ս. Գիրքին և այնտեղ բացատրություններ փառունք: Այլ կճանշնանք զայն, ո՞ւ կիսյունվի ան մեզ ի բեկանել հացին: Այսինքն երբ Սեղան կնատինք իրեն հետ, այսինքն որիշ խոսքով Հաղորդությամբ զինքը կստանանք մեր մեջ:

Պետևեկոստեի այս օրը նոյն բանն էր, որ պատահեցավ Վերնատան մեջ: Սակայն այս անգամ Հիսոս այլևս իր դիմագիծով չներկայացավ իր աշակերտներուն, որովհետև վերջացած էր անոր կյանքին մեջ այն մասը, երբ իրենք աշակերտներ էին, այսինքն կվարժվեին, կուսանեին, ճշմարտության դեմ համեման կրեպվեին: Սակայն դարձալ ամրողությամբ չեն ըմբռներ Հիսոսի իրականությունը: Պետք էր աստվածային նոր հայտնությամբ մը անոնց մեջ իշներ Աստուծուն Հոգին: Ոչ թե Հիսոսի ներկայությամբ իրենց հետն ըլլար, իրենց հետը քայեր, իրենց հետը ճաշեր, այլ պետք էր, որ իրենց մեջը, իրենց ներսը մտներ՝ զանոնք ընելու համար բնակարանը աստվածային Հոգին և զգացնել տպու համար անոնց, թե Աստված մարդու մեջ կվերակենդանանա և այդ մարդը հաղորդակից կդառնա Ս. Հոգին:

Սիրելի հավատացյալներ, այս էջերը մեկ անգամ ևս ուզեցի պարզել և համձնել ձեր ուշադրության, որովհետև այդ Պետևեկոստեի օրը հիմնված Եկեղեցիներից մին այս Եկեղեցին է մեր Հայոց Առաքելական Եկեղեցին:

Սուարյալները, երբ աշակերտներե փոխակերպվեցան առարյալներու, անոնք մեկ պատգամ ունեին միայն ամրող մարդկության, թե Հիսոս Հարություն առած է մտնելներեն: Եվ Աստված տվավ անոնց այդ ուժը քառզելու, որպեսզի այդ ճշմարտությունը հայտնեն ամրող աշխարհին: Եվ այդ էր, որ շարունակեց վարդապետել Եկեղեցին, հայտնել մարդոց այդ հրողությունը, թե Հիսոս Աստուծուն Որդին մեր մեջաց համար խաչվեսուու, հարություն առավ և մեզի անմահականության կանքը տվավ այն Սեղանեն, որ հաղորդության Սեղանն է Եկեղեցին: Որովհետև Եկեղեցի որիշ բան չէ, եթե ոչ մեծ սեղան մը, որոն կիրավիրվի ամեն հավատացյալ հաղոր-

դակից դառնալու Քրիստոսի, և բնակւրան դառնալու Ս. Հոգիին: Այդ կատարած է Հայոց Եկեղեցին: Հրավեր մը եղած է այն միշտ հայ ժողովորդին, որ գան այնտեղ հաղորդվելու համար Հիսուսի արյան և մարմնի հետ, նաև իրենց համատակներու արյան: Գաև և հաղորդակից դառնան իրենց անցյալին: Գան, զգան այնտեղ, թե Եկեղեցին ներս է, որ Կշարունակիլի հայոց պետությունը, գան և ներշնչվին անոր հայրենասիրական պատղամերով, զգան, թե այս Եկեղեցին հիմնած է սրբազն այն նողին վրա, որ մեր հայրերու հողն է, ոչ միայն գերեզմանը անոնց, այլ նաև նոյսի կանքը՝ կախված անոր լեռներու բարձունքներուն:

Այսօր, սիրելի համատացյալներ, երբ եկած եք դարձյալ հաղորդվելու մեր Ս. Եկեղեցիի խորհուրդով, լավ պիտի զգաք, թե Հայատանյաց Եկեղեցին շարունակությունն է այն Պեճտեկոստի օրվան, որ Աստված հրեղեն լեզով ծննդ իշավ առարյալներու սրտերու մեջ: Պետք է հասկնանք, թե այդ լեզուն շարունակեցավ իշեմ շարունակ, ամեն անզամ, երբ պատարագ մատուցվեցավ սրբազն այս տաճարին մեջ, ամեն անզամ, որ ս. պատարագ մատուցվեցավ մեր Հայ Եկեղեցին մեջ: Եվ հայ հավատացյալը մոտեցավ այդ սեղանին՝ հացի հետ հաղորդվելու այդ մեծ խորհուրդին, որ մեր Եկեղեցը անմահության խորհուրդն է:

Մենք կհավատանք Հիսուսի խոսուումին, թե դժողքի դուները չպիտի կարողանան սասանեցնել իր իսկ հիմնած տաճարը: Որքան ատեն որ մեզմ յուրաքանչյուրն ալ ընդունեց Ս. Հոգիին հաղորդությունը, կդառնա տաճար անոր ներկայության: Մանավանդ այս տափոր առանց հոգումի չէ, որ փառք կուտանք Աստուծո, որ, հակառակ մեր պատմության բոլոր ցեցումներուն, պետկություններուն և դժվարություններուն, կանգուն է մեր հավատքի այս մեծ Խորանը՝ լուս այս տաճարը՝ Ս. Եջմիածնի Կաթողիկեն, կանգուն է այն ոչ միայն կամարներով, քարերով, գմբեթներով և խաչերով, այլ կանգուն է ան դեռ և պերճախոս կերպով պատգամուն է այնտեղ նոյն հոգիով լեցուն այն լեզուն, որ մեր դժվարության այս օրերուն եղավ մսիթարության պատգամ, մեր տարակույսներու օրերուն եղավ համոզիչ ճշմարտության պատգամ, մեր մոլորանքի օրերուն եղավ իմաստության պատգամը, և մեր պայքարի օրերուն եղավ մեր վեհության և քաջության պատգամը:

Սրբազն մեր Հայրապետի լեզուն է ան, որ ամստեղ և բոլորանմեր ներշնչիչ իր խոսքով լեցուց մեր հոգիները և ըրավ այս տաճարը վերնատումը մեր հավատքին:


Այսօր, երբ Կիշենքը երկու հազար տարիներ առաջ Պեճտեկոստի օրը, չենք կրնար չաղոթել առ Տերև Աստված, որ այս մեր Ս. Վերնատունը մնա կանգուն, և այնտեղ արձագանք երկար և երկար տարիներ Սրբազն մեր Հայրապետին՝ S. S. Վազգեն Ա. Սրբազնագում Կաթողիկոսի խոսքը, որ կյանք է մեզի համար, ներշնչում է մեզի համար, ուղղություն է մեր ժողովուրդին համար և պարծանք է մեր հայրենիքի համար:

Աղոթենք առ Աստված մանավանդ այսօր, որ մեր բարձր լեռներուն վրա կովող քաջերուն սուրբ բնավ չուկարանա, որովհետև կհավատանք, թե անոնց սիրու իր պատգամն սուացած է այս Ս. Տաճարեն, և անոնց շարունակողներն են այն մեծ ու փառավոր գնացքին, որ բերավ մեզի և պահեց մեզի մեր հողին մինչև այսօր: Աղոթենք, որ մեր այս երկիրը հեռու մնա նոր ցեցումներեն, տիրե այստեղ խաղաղություն: Աստված տա մեր ժողովուրդին ապահովություն, Աստված տա մեր ժողովուրդին համբերու-

թյուն և հույս, Աստված ավելի ուժեղացնե մեր հավատքը, և զգանք, թե մենք այս օրերուն ամենամեծ առաքելություն ունինք կատարելիք՝ շարունակել այդ ուխտը, որ մեր հայրերն ըրած են Աստուծո հետ, և պիտի ըլլանք Աստուծո ժողովուրդը և ինք պիտի ըլլա մեր Աստված:

Աստված օրինե ձեզ և դուք մեզի հետ փառավորեք Անոր անունը հավիտյանս հավիտենից. ամեն:





ՆԵՐՍԵՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՊՈԶԱՊԱԼՅԱՆԻ ՔԱՐՈՉԸ ՄԱՅՐ ՏԱՇԱՐՈՒՄ (21 հունիսի 1992 թ.)

«Յանուա Հօր և Որդու և Հոգու Սրբոյ Ամեն»
«Եկայք շինեցուք սուրբ զխորան լուսոյ քանզի
ի սմա ծագեաց մեզ լոյս ի Հայատան աշխարհի».
«Եկեք կառուցենք լոյսի սուրբ խորանը, որովհետև
սրանով ծագեց մեզ լոյսը Հայատան աշխարհում»:

Սիրելի հավատացյալ ժողովուրդ, սիրելի ուխտավորներ Ս. Էջմիածին
եկած, այսօր Հայատանյաց Եկեղեցու ազգային-կրոնական տոներից ամենակարևոր և հատկանշականն է, որ կատարում ենք: Այսօր միասնաբար տոնախմբում ենք Ս. Էջմիածնի տեսիլքի և հաստատման հիշատակը:

Ինչպես պատմում է Ազգաթանգելոս պատմիչը, Ս. Գրիգոր Լուսավորիչը Խոր Վիրապում 14 տարիներ մնալուց հետո հրաշքով ազատվեց՝ թշկելու համար հայոց արքային՝ Տրդատ Գ-ին: Մինչև Ս. Գրիգոր Լուսավորչի՝ Խոր Վիրապի բանտը նետվելը, Հայատանում էին գտնվում 38 կողմեր, և նրանց մեջ ամենագեղեցիկն էր Հոհիսիմեն: Հայոց արքան Բյուզանդիայի Դիոկետիանու կայսրից տեղեկացավ, որ մի խոմք կողմեր են եկել Հայատան, և նրանց մեջ է գտնվում նաև գեղեցկատես Հոհիսիմեն: Դիոկետիանու կայսրը դիմեց Տրդատ թագավորին, որ այդ կողմն իրեն ուղարկի: Հայոց արքան լինելով Վաղարշապատ քաղաքի շրջապատում գտնվող հնձանների մոտ, տեսավ այդ կողմսերին, նրանց մեջ նաև Հոհիսիմեն, և ուզեց նրան կնության առնել: Հոհիսիմեն Հխոսի, Եկեղեցու հետ էր ամուսնացել: Նա ոխան էր արել ամբողջ կյանքում մարուր մնալ, կուտույան մեջ ապրել և իր անձը Քրիստոսի խորանի առջև զոհ մատոցել, գիտակցական բանավոր զոհ: Եվ Հոհիսիմեն մերժեց թագավորին, մերժեց նրա բոլոր շառայ խոստումները: Թագավորը, զայրացած, հրամաց սպանել Հոհիսիմեն: Այն ժամանակ Հոհիսիմենի հետ զոհվեցին նաև նրա ընկերությունները, որոնք բաշկերել էին կողմին, որ տեղի չտա և իր ոխանի վրա ամոր մնա: Պատմիչը վկայում է, որ հետագայում թագավորը խելագարվեց, որովհետև իր կա-

տարած խմելությունները իր խոճի վրա ազդել էին: Այդ պատճառով մի օր նա պալատը լրեց ու գնաց դեպի ճամփաները, Արարատ լեռան ստորոտին, Արաք գետի ափին ու այնտեղ, ճամփաների շուրջ, թփերի, անտառների մեջ վազվում էր այս ու այն կողմ՝ զորկ մտածելու կարողությունից: Նրանց առնելի էր դատելու, մտածելու, զգալու կարողությունն ու շնորհը, որ հատուկ է մարդուն: Այդ պատճառով էլ պատմիչը նրան ներկայացնում է որ պես խոզի կերպարանը ստացած մի անձնավորություն: Տարօրինակ է աշխարհը: Երբեմն Աստված ամենահասարակ, ամենաթեսակ մարդուց ընտրում է այն գործիքը, այն միջոցը, որ մաքրության և սրբության գործիք է դառնում իր ձեռքին: Աղղակ եղավ Գրիգոր Լուսավորչի պարագային: Նա Անակի որդին էր: Անակը, որ Խոսրով թագավորին սպանեց և ձերբակալվելով սրախողին եղավ իր ամրող ընտանիքի հետ: Պատմիչն ասում է, որ Անակի ընտանիքից միայն մեկ հոգի ազատվեց, մի կաթնակեր երեխա, այդ երեխան Գրիգորն էր, որ տարվեց Բյուզանդիա: Այնուղի նա քրիստոնեական դաստիարակությամբ կրթվեց, զարգացավ ու հետագայում դարձավ Տրդատ թագավորի քարտուղարը:

Տրդատը և Խոսրով թագավորի միայն ժառանգն էր: Սասանյանները սրախողին էին արել նրա ամրող ընտանիքը: Որպես Պարթևական ցեղի վերջին շառավիդ, Սասանյանների ձեռքից նրան փախցրել ու տարել էին Հոռոմ, այնտեղ դաստիարակելու համար:

Տարիներ հետո այս երկուսը վերադառնում են Հայաստան՝ մեկը գործով ու ուզմական ուժով, իսկ մյուսը գիտությամբ ու աստվածային շնորհքով զինված: Եվ ահա այստեղ է, որ մի օր Գրիգորը, իրու անհնազանդ, իրեւ չաստվածներին զոհեր չմատուցող, իրեւ հեթանոսական կրոնը անարգող մարդ, նետվում է Խոր Վիրապի գործը, մանավանդ երբ իմանուն, որ նա որդին է Անակի:

Սիրեկի հավատացյալներ, ինչպես նշեցի քիչ առաջ, Տրդատ իր խմելությունների պատճառով հիվանդացել էր և գնացել դեպի ճամփաները: Տրդատ թագավորի միակ փոկությունը պիտի լիներ Գրիգորը: Տրդատ թագավորի բույրը՝ Խոսրովիդուսը, մի գիշեր երազ է տեսնում: Երազի մեջ հայտնում են նրան, թե Տրդատը կրծշկվի միայն այն դեպքում, եթե Գրիգորը նրան օրինի, նրա վրա աղոթք կատարի, նրա վրա իր ձեռքը դնի: Տրդատ թագավորը փախել-գնացել էր պալատից, նրա փոխարեն իշխան Օտա Ամաստնին դեկալարում էր պալատի գործերը: Խոսրովիդուսը խնդրում է նրան և ասում. «Իշխան, խնդրում եմ Գրիգորին գտեք, որպեսզի բժշկի եղբոր»: Գնում են Խոր Վիրապ, 14 տարի առաջ այնուղի բանտարկված Գրիգորին գտնում են կենածնի: Սասուն հերեւուկը ամեն օր նրան մի նկանակ հաց ու ջուր էր տալիս: Գրիգորին բերում են Վաղարշապատ, և նա օրինում է թագավորին: Այսպիսվ կատարվում է աստվածային հրաշքը, և թագավորը բժշկվում է:

Անշուշտ Աստված Տրդատի սրտի մեջ արդեն իշել էր և այնուղի տեղ պատրաստել քրիստոնեության ընդունման համար: Եթե հայոց թագավորը, նրա արքունիքը և ամրող հայ ծողովուրդը 301 թ. քրիստոնեությունն ընդունում են իրեւ Հայաստանի պետական կրոն, Գրիգորին մնում է Եկեղեցի հիմնել: Ագաթանգեղոս պատմիչն ասում է. «Գրիգորը պալատից դուրս էր գալիս, գնում էր Վաղարշապատ քաղաքի դաշտերն ու հնձանները, չքիորի մոտ նասում և ամրող գիշերը խոկումով և ծննդրությամբ աղոթում էր, որ Աստված իր առջև մի լուսավոր ճանապարհ բացի և ցուց տա, թե հայ ժողովրդի քրիստոնեական կյանքը ինչ ձևով պիտի իրականանա և հավերժանա»: Մի գիշեր, եթե երկինքը աստղերով փալլում էր, իսկ հայոց աշխարհը

խավարի մեջ էր Կորած, և երկրի բնակչութերը քննել էին խորը քննվ, այդ պահին որոտի ձայն է լսվում, երկնքի դուները բացվում են, և լուս է ճառագյուղում երկնքից դեպի երկիր: Այդ լուսի հեղեղութ միջով բյուրավոր բրեշտակներ իշնում են Հայաստան աշխարհ: Նրանցից հետո իշնում է իր փառքի մեջ Աստվածորդին՝ Հիսուս Քրիստոս: Նա իր ձեռքին ուկի մի մուրճ բունած գալիս է հեթանոսական տաճարի հենց այս վայրում, այս կենտրոնում, Խջման Ս. Սեղանի տեղում, և ձեռքի մուրճը երեք անգամ խփում է և ասում Գրիգորին: «Ինձ համար այստեղ կառուցիր տուն աղոթքի, տուն պաշտամունքի»: Այդպիսով սատանայի ձեռքերը շղթավում են, և հեթանոսական կրոնի այս վայրը դառնում է քրիստոնեական կրոնի օրրանը, հայ ժողովրդի հոգու մկրտարանը, հայ հոգու դեպի երկինք բարձրանալու պատվանդանը: Եվ ի՞նչ համեմատ իրաշք... Գրիգորը տեսնում է լուսեղեն որվագծերի մեջ ձևա այն տաճարի, որ պիտի կառուցվեր:

Հաջորդ առավոտյան նաև շտապում է Տրդատ թագավորի մոտ՝ տալու բարի լուրը: Սառն է. «Ես երեկ տեսա Քրիստոսին, որ իր փառավոր պատմունանվ, իր գեղեցիկ, լուսափառ դեմքով իշավ այստեղ, այս հողի վրա և այստեղ իր համար իր տան հիմքերը դրեց»:

Սիրելի հավատացյաներ, աշխարհի վրա չկա մի ժողովուրդ, մի քրիստոնյան ժողովուրդ, որ այսքան գեղեցիկ, այսքան սրտահուզ և այսքան խորհրդանշական մի ավանդություն ունենա իր հավատքի որպես սկիզբ: Հայ ժողովուրդը որքան երջանիկ պետք է լինի, որ ունեցել է Ս. Գրիգոր Լուսավորչի հման հրաշալի մի աղոթող, մի սուրբ մարդ, Հայաստանի տեր ու պահապան: Ս. Գրիգոր Լուսավորչին իր աղոթքներով, իր պահատաճրներով, իր գգացումներով կարողացավ մինչև իսկ երկնքի դռները բացել և վերստին աշխարհ իշեցնել այն Քրիստոսին, որ խաչեցին մարդիկ: Բայց այս անգամ Քրիստոս խաչվելու շիշավ այստեղ: Քրիստոս այս անգամ իշավ Հայաստան իրեն հաղթական Աստված և Տեր հայ ժողովուրդի:

Մենք բոլորս պետք է այդ հրաշքի մեջ տեսնենք ոչ թե Դ դարի սկզբին պատահած մի իրողություն: Քրիստոս մեր աղոթքներով, սիրելի հավատացյաներ, այսօր ևս կիշենի այս սրբազն հողի վրա, միայն թե մենք պետք է շատ խորը հավատք ունենանք, մաքոր տպենք, բարություն անենք, սեր տարածենք, իրար հանդեպ գորգորանք և հարգանք ցուց տանք, իրար օգնենք, անտեր շթողնենք նրանց, ովքեր խեղճ ու աղքատ են, անսուն, անօգնական, որպեսզի շտառապես և չգնան կյանքից հուսահատ: Ընդհակառակը, բարության միջոցով սրբությունն է կերպվում, ով որ բարի է, նաև սրբության կարծանանա, ով որ բարության հետ նաև աղոթում է, նա է, որ կորրանա այս աշխարհում:

Մեր ժողովուրդը այս չորս-հինգ տարիների ընթացքում խևապես ծանր փորձությունից է անցնում: Երկրաշարժից հետո և հատկապես արցախյան տագնապի պատճառով հայ ժողովուրդը տառապում է, երբեմն լցվում հուսահատությամբ, երբեմն հոյսի շողն է երևում: Բայց նա միշտ մտահոգ է, թե վաղվա օրը ի՞նչ կրերի արդյոք: Վաղվա օրը լավ կինչի, եթե դուք բոլոր միասին, միահոգի պաշտեք զԱստված, եթե դուք բոլոր հավատարին մնաք Հայաստանյաց Եկեղեցուն, եթե դուք բոլոր բարեսիրտ լինեք միմյանց հանդեպ, եթե դուք բոլոր իրար սիրեք որպես եղբարձրներ:

Մարդու սիրութ այրվում է այն բոլոր չարիքների համար, այն բոլոր սուխալերի, մեղքերի, հանցագործությունների համար, որ կառավուն են Հայաստանի մեջ: Դա սատանայի մերգործությունն է մեր ժողովուրդի մեջ: Սատանայի այդ ներգործությունը պետք է հեռու վանեք ձեզանից: Դա աղաստանայի այդ ներգործությունը պետք է հեռու վանեք ձեզանից:

դավորների միջոցով թափանցեց մեր մեջ: Հեռո՛ւ վանեցեք այդ բոլորը: Դուք պետք է լավ գիտենաք հայ ժողովրդի պատմությունը, պետք է լավ ճանաչեք մեր սրբերին՝ Գրիգոր Լուսավորչից Ակած: Ես սրբոց դասը պիտի դնեմ նաև Խրիմյան Հայրիկին և Կոմիտաս Վարդապետին: Մենք ազգովիճ պարտական ենք Սահմակ Պարթևների, Մեսրոպ Մաշտոցների, Նարեկացիների, Շնորհալիների սրբառը հոգևորականներին, որոնք հայ ժողովրդի հոգեկան տաճարը կերտեցին: Նրանք Գրիգոր Լուսավորչի տեսիլքով մարմին առած այս քարեղեն տաճարի կողքին կերտեցին նաև մեր ազգի ոգեկան տաճարը:

Որպեսզի ձեր հոգիները չիմեն աղքատ ու սնանկ, պետք է աղոթեք, պետք է հավատաք ձեր սրբերին, պետք է հավատաք ձեր պատմությանը, պետք է հավատաք ձեր մշակությին ու նաև մեր ժողովրդի ներկա ղեկավարներին: Ձեր հավատքով ուժ պիտի տաք, զորավիգ պիտի լինեք նրանց և ոչ թե բարեասեք ու քննադատեք, որպեսզի նրանք ևս, ձեզանով զորացած, կարողանան ազգի բոլոր խնդիրներին, Աստուծոն շնորհքով անշուշն բարվոր լուծումներ գտնել:

Այսօր, միրելի հավատացյալներ, Ս. Տեսիլքի օրը, ես մաղթում եմ, որ մեր Փրկիչը՝ Հիսուս Քրիստոս, իշնի խալապես Հայաստան աշխարհ, մեզ տա համբերություն, ուժ և արիություն: Նաև նա այցելի մեր բոլորի սրտերը, որպեսզի մենք նրանով զորանանք և կարողանանք նրա կամքով իրականացնել մեր բարի և ազնիվ նպատակները այս աշխարհի վրա այժմ և հավիտյան հավիտնենից. ամեն:





**ՆԵՐՍԵՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՊՈԶԱՊԱԼՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ
ՄԱՅՐ ՏԱԾԱՌՈՒՄ ՎԱՐԴԱՎԱՐԻ ՏՈՆԻՆ
(26 հունիսի 1992 թ.)**

«Յանուն Հօր և Որդոյ և Հոգուն Սրբոյ. ամեն»:

«Քրիստո Աստուծ մեր, շնորհեա մեզ ընդ Պետրոսի և որդոց Ձեռներս, արժանաւորեա քուս աստուածային տեսլամբ»:

Վարդավառին նվիրված Հայաստանաց Եկեղեցու շարականներից մեկից և՛մ քաղել այս նախադասությունը, որպես մեղավոր մարդ, որպես աստվածային լուսին և փառքին ձգուող մի քիչսունյա: Շարականագիրը սքրուտահոյզ կերպով ասում է այս քառերը. «Քրիստո Աստված մեր, շնորհ արա մեզ Պետրոսի և Ձերեղյան եղբայրների, այսինքն Հակոբոսի և Հովհաննեսի նման արժանի լինել քո աստվածային տեսիլքին»:

Սիրելի հավատացյալներ, Հայաստանաց Եկեղեցու հոյց կարուոր տաղավար տոներից երրորդն է, որ այսօր տոնախմբում ենք: Դա Վարդավառի տոնակատարությունն է, քրիստոնեական մըրոնողությամբ՝ Քրիստոսի աստվածության բացահայտման տոնախմբությունը Եկեղեցու ծոցում:

Մեր Տերը՝ Հիսուս Քրիստոս, Յ տարեկան լինելոց հետո, երեք տարիներ շարունակ ժողովրդի մեջ գործեց, քարոզեց, բժշկեց և հրանց բոլոր հարցերին պատասխան տվեց: Երրորդ տարվա ընթացքում, մի օր, նա հետև առած իր աշակերտներից Պետրոսին, Հակոբոսին և Հովհաննեսին, բարձրացավ դեպի Թարոր լեռը: Այնտեղ աշակերտները երբ Քրիստոսի քաղցր խոսքերի ազդեցության տակ մրատի մեջ էին ընկել, հանկարծ երանց աչքի առջև Հիսուս փոխվեց և պայծառ, գեղեցիկ ու սպիտակ հագուստների մեջ երեւվաց: Այնքան էր նա փայլում, որ աշակերտները այլև չկարողացան իրենց աշքերը, իրենց Վարդապետին հառել, այլ խոնարհեցին գետին և, շլացած հրալուսաճաճն և փայլուն տեսքից, երկրապագեցին հրա առչել: Ի՞նչ էր պատահել այդ պահին: Այդ պահին, սիրելիներ, Քրիստո Թարոր լեռան բարձություն մի պահ իր աստվածային փառուվ էր երևացել իր աշակերտներին: Հիսուսի մի կողմում կանգնել էր Մովսեսը, իսկ մյուս կողմում՝ Եղիսան, ընտըրյալ ժողովրդի ամենափառաբանված մարգարեները: Եվ աշակերտներն ապշել-մնացել էին: Նրանց աչքերը այդ փայլին չին դիմանում: Պետրոս մի պահ հետո հայացը բարձրացրեց և ասաց Հիսուսին. «Տե՛ր, լավ է մեզ հա-

մար գոնվել պատեղ: Երեք տաղավար շինենք. մեկը քեզ համար, մյուսը՝ Մովսեսի և երրորդը՝ Եղիա մարգարեի համար»: Այդ պահին մի ամպ եղավ ու նրանց վրա հովանի եղավ. նրանք վախեցան. ամպի միջից լսվեց մի ձայն, որ ասում էր. «Սա է իմ որդին սիրելի, լսեցիք սրան»:

Այս վկայությունը, սիրելի հավատացյալներ, Սուրբ Հոգու վկայությունը եղավ, ինչպես մկրտության պահին Հորդանան գետում, երբ Հովհաննես Մկրտիչը ջուր էր թափում Հիսուսի վրա, Աստուծո հոգին իշավ երկրից և ասաց. «Սա է իմ որդին, սրան հավանեցի»:

Սիրելի հավատացյալներ, անշուշտ դուք գիտեք, որ, ըստ պահանջության, Պայծառակերպության տոնը հնում հայ ժողովրդի հեթանոսական տոններից մեկն է եղել: Անամիտ կամ Աստուծիկ դիցունուն նվիրված այդ կը-րոնի առթիվ հայերը հավասարդի մեկին, որին հայկական տոմարով նոր տարվա առաջին օրը, գնում էին Խնճանձնյա կողմերը, այսուեղ չաստվածներին զրինք էին մատուցում և ամառվա այդ շրջանին ջուր էին շաղ տալիս իրար վրա՝ իրեն մաքրության խորհրդանշան, աղավնիներ թոցնում երկինք ու նաև հավասարդյան այլ զվարճայի տոնահանդեսներ կազմակերպում: Մեր սուրբ Հայրապետները, Սուրբ Գրիգոր Լուսավորչի գաղափարով, Վարդապետի տոնը պատշաճեցրել են Քրիստոսի Պայծառակերպության տոնին, այսինքն՝ աստվածային փառքի հայտնության այս գեղեցիկ տոնին:

Ամեն մեկ հայ Քրիստոսի և քրիստոնեության հանդեպ ունեցել է խորին պաշտամունք: Մեր լուսավորիչ Հայրերի օրերից սկսած, մենք բոլորս երկար դարեր շարունակ, քրիստոնեությունը ընդունելով իրեն պետական կրոն, իրեն հայ ժողովրդի կրոն, պահելու ու պահպանելու ենք այն: Վարդանանց պատերազմի ժամանակ, 451 թ., երբ պարսիկները գործով հարձակվում էին Հայաստանի վրա՝ ճաշելու մեր ժողովրդին, որպեսզի ընդունի մազդեզական կրոնը, հայերը ընդդիմացան, որովհետև քրիստոնեությունը մեզ համար դարձել էր հավատամք, դարձել էր կյանք: Առանց քրիստոնեության մենք չենք կարող մեր գոյությունը պահել դարերի ընթացքում:


Քրիստոսի Պայծառակերպության տոնը թելադրում է մեզ, որ ձգտենք աստվածային իրականության ճանաչումին: Ինչպես Հիսուս Թաքոր լեռան վրա իր աշակերտուներին ցոյց տվեց իր աստվածային փառք՝ պայծառակերպիկով, լուսերի մեջ երևալով նրանց, նոյն ձևով, սիրելի հավատացյալներ, մենք մեր կյանքով, մեր հավատքով, մեր գործով պետք է Քրիստոսի համար մաքրագործենք մեղքից՝ ցոյց տալու համար մեր աստվածային կերպարը: Քրիստոսի պայծառակերպությունը պետք է պայծառակերպությունը լինի ամեն մեկ քիսունյայի, որպեսզի նա մեղքերից, փորձություններից, ամեն տեսակ չար խորհրդներից հեռու մնա, և նրա հոգին պայծառանա, գեղեցկանա ու փայլի:


Ի՞նչ է պայունվա խորհրդը: Աստված այս վերշին տարիների ընթացքում իր հրաշալի եերկայությամբ և միջամտությամբ սատանայի թագավորությունը մեզնից խլեց և նրա տեղ տվեց մեզ մեր ազատ կյանքի թագավորությունը: Աստված 70 տարվա շրթավածությունից, հոգևոր գերությունից ազատագրեց մեզ և, իրեն իր որդեգիրները, արժանացրեց ազատության, արժանացրեց տեր դառնալու մեր անկախ, ինքնիշխան հայրենին, տնօրինելու մեր ժողովրդի ճակատագիրը և հարթելու նրա կյանքի ուղին: Այս օրերին մենք բոլորս պարտավոր ենք, իրեն քրիստոնյաներ, կողք-կողքի կանգնել, լինել զորավիր միմյանց, մեկ ամբողջություն կազ-

մել և ուժ լինել, որպեսզի արտաքին թշնամուն, որ խավարի մեջ հեռևում է մեզ, կարողանանք հեռու պահել Հայաստանի սահմաններից և ապահովել մեր երկիրը խաղաղ և շինարար կյանքով: Ոմանք երբեմն դժգոհում են և ասում, թե նոր կյանքը մեզ ինն կյանքի բարիքներից զրկեց: Բայց նոր կյանքը այնպիսի բարիքներ է խոստանում, որոնցից մենք այսօր զորկ ենք, բայց ապագայում մեր զավակները պիտի վայելեն դրանք: Մենք այսօր պետք է աշխատենք, որ մեր երկիրը դառնա արևմտյան երկրներից որևէ մեկի համան բարձր մակարդակի օրինակելի երկիր, որտեղ մարդու իրավունքները հարգվեն, մարդը լինի տերը իր սեփական ճակատագրի, մարդը լինի գիշավոր արժեքը պետության մեջ և նրա իրավունքները մարդիկ, պետությունը կարողանա պահել անխախտ: Մարդիկ կան, որոնք օգտվելով այս խառնաշփոթ ժամանակաշրջանից, բաշալերում են մեր դեռահաս զավակներին, որ սերնդին, որպեսզի նրանք գողովայուն անեն, մակարույց կյանք վարեն և մեր երկիր վիճակը պետքի վատարացնեն: Այսպիսի ժամանակաշրջանում քրիստոնյաներս պետք է լինենք Ել ավելի զգաստ, Ել ավելի գործունյա մեր աշխատանքով ու վարքով օրինակելի քաղաքացիները մեր երկրի, պետք է մեր պետության կողքին կանգնենք, պահենք ու պահանձնենք օրենքը ու կարգը, որպեսզի օրենքի և կարգի միջոցով մեր հասարակության մեջ արդարություն և ներդաշնակություն լինի, որպեսզի մարդիկ հոգեպես անեն, հասունանան, իրենց մակարդակը բարձրացնեն, հասկանան, թե այլևս հնարավոր չէ շարություն կատարել, հնարավոր չէ հաւ որիշին շարություն կատարել տալ: Եթե չես ուզում, որ որիշը բեզ վեաս հասցնի, ինչպես Ավետարանն է ասում, նույն ձևով դու որիշին վեաս մի՛ հասցրու: Մեր բոլորի սրբազն հապատակը պետք է լինի միությունը, հոգենոր միությունը, քրիստոնեական միությունը հատկապես, որովհետև քրիստոնեական մեր փարավի մեջ գալիք են մուտք գործում և փորձում են հափշտակել մեր փարավի ոչխարհներին: Պետք է մեր պատմությունը լավ իմանանք, պետք է մանավանդ մեր հոգևոր ժառանգության, քրիստոնեական մշակույթին սերտորեն կապված լինենք և երբեք չասենք, որ քրիստոնեությունը պահելու և տարածելու գործը հոգևորականներին վերաբերող գործ է, պետք է հոգևորականները պատճենի վրա հման և մարտնչեն մեզ համար: Այդպես չէ, աշխարհի վրա երբեք չի պատահել, որ մի բանակի զրավարները, մի բանակի սպանենք զինվոր չունենան և իրենք մարտնչեն: Բոլոր միասին պետք է մարտնչենք վասն արդարության և վասն հայրենաց: Ամեն հայ քրիստոնյա իր սրբազն պարտականությունը պետք է համարի հանուն քրիստոնեական իր Եկեղեցու՝ տեր ու պատշաճ լինել իր հավատին: Չեմ պատկերացնում մի մարդ, մի քրիստոնյա մարդ, որ թույլ տա, որպեսզի որևէ մեկը իր հավատքին հայինի, նախատի իր կրոնն ու դավանանքը: Տխոր է հաստատել, որ այսօր այլարտական քրիստոնյաներ, բազում աղանդավորներ մուտք են գործում Հայաստան իբրև հափշտակիշ գալիք՝ գողաճակում մեր ոչխարհներին: Ինչո՞ւ դուք, սիրելի հավատացյաներ մեր առաքելական Մայր Եկեղեցու զավակներ, թույլ եք տալիս, որ այդպիսիները ձեր դուռը բացեն և փորձեն ձեզ շեղել ձեր ճշմարիտ հավատից ու դավանանքից իրենց ոչ քրիստոնեական կեղծ քարոզությամբ: Այսօրվա պայծառակերպության խորհուրդ այս է, մենք բոլորս հաղորդվում ենք պայծառակերպված Քրիստոսի իրականությանը: Ո՞վ մեզ այս հավատից պիտի կարողանա հախտել: Մենք բոլորս պետք է այս դառնանք հավատի տերն ու պաշտպանը:

Այսօր մարդիկ ներանուական սովորությամբ ձեր վրա ջոր են շաղ տալիս: Չորք նաև քրիստոնեական է: Հիսուս ջրով մկրտվեց, մեր երեխաները ջրով են մկրտվում, Սուրբ Հոգին ջրի վրա է իշխում և երեխային պայծառափոխում՝ դարձնելով նրան անմահ, հողեղեն մանկանը դարձնելով աստվածային մանուկ, որով թեև նա մարմնով մեծանալով մահանում է, բայց աստվածային հոգին, որ նրան տրվում է Սուրբ Հոգու միջոցով, միշտ ապրում է, միշտ անմահ է և միշտ գործում է մեր կյանքի մեջ:

Թող պայծառակերպված Քրիստոսը պայօր իշնի և մտնի ամեն մեկին տունը, ամեն մեկին ներքին աշխարհը՝ Հոգու տաճարը: Մենք Քրիստոսի տաճարներ կլինենք՝ մեր մարմինը և հոգին մաքուր պահելով, որպեսզի պայծառակերպված Քրիստոսը երբ գա, գտնի մեր տաճարները մաքուր, իբրև հանգիստ օթևան իրեն այժմ և միշտ և հավիտյան հավիտենից. ամեն:





ՍՈՒԽՈՒՄԻՒ Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԱՂՋԱԾԱՆ ՕՇՈՒՄԸ

Արխագիայի մայդաքաղաք Սովումիի հայ համայնքի խնդրանքին սիրով ընդառաջեցին տեղի պետական պատկան մարմինները, և «Կոմիտաս» մշակութային-բարեգործական ընկերության շանքերով այս տարի Սովումիում հիմնվեց առաջին հայ Աղջածառնը:

Աղջածառնը գտնվում է Սովումիի Լեչկոպ սարահարթում գտնվող հայոց Շահումյանի ամպան դպրոցի սրահներից մեկում: Աղջածառն օծումը որոշված էր կատարել մայիսի 10-ին, կիրակի օրը: Օճաման համար Սովումի էր հրավիրվել Վիրահայոց թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Գևորգ եպս. Սերայդարյանը:

Առաջնորդ սրբազն հայրը Սովումի ժամանեց մայիսի 8-ին և «Հրաշափառ»-ով ընդունվեց Աղջածառն՝ զանգերի հնչյունների ներքո: Աղջածառից հետո սրբազն հայրը քարոզ խոսեց՝ «Երանի եկեղեցի շինողաց» բնա-քանով:

Նոյն օրը, երեկոյան ժամը 18-ին, դպրոցի սրահում տեղի ունեցավ խորհրդակցական ժողով-հավաքույց՝ կազմակերպչական աշխատանքների և եկեղեցական այլ հարցերի վերաբերյալ:

Մայիսի 9-ին, շաբաթ օրը, ժամը 17-ին, տեղի ունեցավ Աղջածառն նավակատիքը: Կատարվեցին Դոնքացերի և Հակոբան արարողությունները:

Վերջում սրբազն հայրը քարոզեց և համայնքի անունից շնորհակալական խոսքով օրինեց երկրի դեկապարության բարի գործերը՝ ասելով. «Որչափ շատ եկեղեցիներ լինեն մի երկրում, այդքան շատ օրինյալ կինի այլ երկիր»:

Մայիսի 10-ին, կիրակի օրը, ժամը 13-ին, տեղի ունեցավ Աղջածառն օծումը: Առաջնորդ սրբազն հայրը Աղջածառնը օծեց Ս. Հարություն անունով:

Այս առիթով Ս. Հարություն Աղջածառուն էին ժամանել Սովումից և շրջակա քաղաքներից ու գյուղերից ովասպորտների հոծ բազմություն: Պատվավոր հյուրերի առաջին շարքում էին իշխանության հարգելի ներկայացուցիչները: Ներկա էին նաև բազմաթիվ լրագրողներ, հեռուստատեսության և ոստիոյի աշխատակիցներ:


Օծման արարողությունից հետո առաջնորդ սրբազն հայրը Աստծոն նոր Տոն ընծայաքերվելու աղիթով արարողությանը ներկա հոգ բազմությանը հաղորդեց Նորին Սուրբ Օծություն S. S. Վազգեն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրինություններն ու շնորհավորակները:

Այսպիսով, Սոխոսի քաղաքը, երկարատև սպասումից հետո, օժովեց առաջին հայ Սղոթաւոնով:

Նորաօծ Ա. Հարություն Աղոթաւան հոգևոր հովիվ հշանակվեց համարացի արժանապատիվ S. Տաթև քահանա Հարությունյանը:

Օծման կարգի ավարտից հետո, կատարվեց մատաղի օրինություն, որին հաջորդեց ավանդական երգն ու պարը:

ԹՂԹԱԿԻՑ





ՄՐԲԱԼՈՒՅՍ ՄՅՈՒՌՈՆ

«Մյուռն»-ը հունարեն բառ է, որ նշանակում է «հուսավետ յուղ» կամ «քրիստո հուսող հյութ»: Այն ծագում է հնախոսական «քսել», «օծել» արմատից: Իրեն այդպիսին, շատ հին ժամանակներից ի վեր, զանազան անուշանոտ համեմունքների հետ միասին, կիրապել է ձիթենու յուղը: Այն լայնորեն գործածել են արևելյան ազգերը, գլխավորապես հին հրեաները տոնական օրերին (Սաղ. ԻԲ 5, Ամովս Զ 6): Քրիստոսի ժամանակ տակավին կենացնակ էր իրեն հարգանքի նշան հյութի գլուխը կամ ոտքերը օծելու սովորությը (Մարկ. ԺԴ 3, Հովհ. ԺԲ 3): Ըստ Մովսեսի սուացած աստվածային պատգամի (Ելք Լ 23—30) Աստծո սպասավորները ձիթենու յուղը կիրարկում էին ծանրագին խնձելենի, այլնայլ համեմունքների և ծաղիկների միախառնումով: Սրանց մեջ ամենից ազնիվն ու պատվականը Նարդոսի յուղն էր (Երգ Երգոց Ա. 12, Մարկ. ԺԴ 3): Արդեն հին հրեից մնչ ձիթենու յուղով օծումն ուներ սրբացնող, նվիրագործող նշանակություն: Այս եղանակով նվիրագործվում էին ոչ միայն առարկաները (վկայության խորան, սրբությունների սեղան, ավազան և անոթներ), որոնք կիրառվում էին Աստծո սպասավորելիս, այլև՝ իրենք՝ Աստծո սպասավորները և Խորայի վրա կարգված թագավորները, որոնք մասնավոր նշանով վայելում էին Տիրոջ հաճությունը: Աստվածաշնչում օծումը համարվում է աստվածային շնորհի նյութական դրսուրումը, ոգեղեն շնորհի ներկայացության ցուցիչը, որն իրականացնում է Աստվածության հետ առարկայի կամ անձի հաղորդակցումը, և սրբագործված իրը դարձնում ներգործունակ:

Սակայն օծումն իր բնույթով սկզբունքներն էափոխվեց երկար սպասարկ Մեսիայի՝ Աստծո Միածին Որդու գալստյամբ: Երրայերեն «Մեսիա» անվան հունարեն համարժեքը «Քրիստոս»-ն է, որ նշանակում է Օծալ: Այս անվանումը լիակատար բնորոշումն է Հիսոս-Փրկչի քահանայապետական բարձրագույն կոչումի (Երք. Զ 20), քանզի առ լի էր Հոգով և Աստծո զորությամբ, այլև իրական պատկերն էր աներկույց Աստծո (ԲԿորնթ. Դ 4): Եթե Քրիստոսի գալստից առաջ օծվում էին Աստծո ընտրույալ մահկանացուները միայն, ապա Քրիստոս իր էոթյամբ և վերին կամ խասահմանումով ըստինքյան բացարձակ օծումն էր ներկայացնում, որի պատճեռով և ամենայն իրավամբ կոչվում Աստծո Օծալ (Ղոկ. Բ 11, Գործ. Բ 36): Ուստի ամենամեծ պատահական չէ, որ Քրիստոս առաջին անգամ մտնելով Նազարեթի ժողովարանը, կարդաց Եսայու մարգարեու-

թյան այն տեղն, որ ասվում է. «Տիրոց Հոգին իմ վրա է, դրա համար իսկ ինձ օծեց, ինձ ուղարկեց աղքատներին ավետարանելու, սրտով բեկյալ-սերին բժշկելու...» (Ղուկ. Դ 18, Եսայի ԿՍ. 1): Մարգարեթ խոսքը իր լիակատար դրսուրումը գտավ մեր Փրկչի աստվածային այս ինքնագիտակցության մեջ: Երկնային, աննյութեղեն օծումը կրող Քրիստոս իր օծումի շնորհը բաշխում է բոլոր նրանց, ովքեր հավատում են իրեն: Օծումի այս բաշխումը իրագործվում է Սուրբ Հոգու Անդրոբծմամբ, որ կատարվում է Մկրտության պահին: Յուրաքանչյուր մկրտված նկատվում է նաև Սուրբ Հոգու շնորհի միջոցով Աստվածությանը հաղորդակից: Ուստի առաքյալն ասում է «Իսկ այն օծումը, որը դուք ընդունեցիք նրանից, թող բնակվի ձեր մեջ, և կարիք չկա, որ մեկը ձեզ ուսուցանի: Այլ, ինչպես որ նրա օծումն ուսուցանում է ձեզ ամեն ինչի մասին, որ ճշմարիտ է և ոչ սուս, այնպես էլ նա ուսուցանեց ձեզ, որ ինեւք իր մեջ» (Ա. Հովհ. Բ 27): Սուրբ Հոգու շնորհներս իր մեջ կրող հավիտենական Օժյափից՝ Քրիստոսից ստանալով հոգեոր օծություն՝ առաքյալները կարիք չունեին պյութական օծության: Սակայն քրիստոնեության արշալուսին արդեն, ինչպես ակնարկում են առաքելական թղթերում, մկրտության ժամանակ յուղով օծելու սովորույթը նորոգվեց և որոշ համայնքներում սկսեց կենցաղավարել որպես Սուրբ Հոգին ընդունելու նվիրական նշան: Այսպիսով, եթե ջրով մկրտությունը սրբում է ինն մարդու աղամական տկարությունները, ապա սուրբ յուղով օծումը նրան դարձնում է Սուրբ Հոգու շնորհներով վահանակորպված և քրիստոսական օծումով բարեկարդված Աստծո զավակ:

Հայ եկեղեցու մեջ Սուրբ Մյուունի կիրարկումը գալիս է առաքելական ժամանակներից: Ըստ ազգային մի հին ավանդության, Քրիստոսի օրինած սրբազն յուղը Հայաստան է քերել ազգին առաջին լուսավորիչ Ս. Թադեոս առաքյալը: Համաձայն մեկ այլ ավանդության Հայ եկեղեցու մեջ Սուրբ Մյուունի օրինությունը սկսվում է Ս. Գրիգոր Լուսավորչի ավետարանագործութից: Ամեն անգամ (7 տարին մեկ) Մյուունօրիների ժամանակ հին, լուսավորչավանդ Մյուունի խառնում են նորի հետ՝ հնա մեջ բնակվող սրբալուս շնորհը փոխադրելով նորի մեջ: Լուսավորչի ժամանակներից ի վեր, ըստ հնավանդ մի վկայության, Մյուունը օրինելու իրավունքը վերապահվում է Կաթողիկոսին: Այդ սովորույթը վերջնականացելու կանոնակարգվում է Հ. դարի մեծանուն հայրապետ Հովհան Օձնեցու ձեռքով: Հայ իրականության մեջ Կաթողիկոսին տրված այսօրինակ իրավասությունը մեծապես պայմանավորված էր պետականության կորսատից հետո ազգային եկեղեցուն վերապահված քաղաքական կարևորությունը: Սա նշանակում է, որ հոգեութից, հայտնութենականից զատ Մյուունօրիները հաստատագրումն է քաղաքական իշխանության: Մրա հետ անխօելիորեն կապված է հայ եկեղեցական, քաղաքական ինքնագիտակցության մեջ Մյուունի կամ Մյուունօրիների նկատմամբ պաշտումի հասնող վերաբերմունքը: Այն նպատակ ուներ այլակրոն, այլադպահն ժղովուրդների մեջ սրբորեն պահպանել հայոց ազգին ոգու աստվածաբրուշ կերպարները: Այս կապակցությամբ խիստ բնորոշ է ազգային մի ավանդություն, ըստ որի Պետրոս Գեւադարձ Կաթողիկոսը (1019—1058 թթ.) Տրավիզոնում եղած ժամանակ, Վասիլ Բ Կայսեր կարգադրությամբ, Աստվածահայտնության սուհին, մեծ հանդիսավորությամբ կատարում է Զօրինյաց ծեսը: Ս. Մյուունը գտնի ջրի մեջ կաթեցնելիս հանձնարծ լույսի մի խորձ է փայլատակում, և, որպես ապացուց Հայոց

Մյուսնի աստվածային ծագումի և սրբության, գետը մի պահ կանգ է առնում:

Հայոց Մյուսնի ազգային ինքնօրինակությունն ու առավելությունն արտահայտվում է ոչ միայն նրա հրաշագործությամբ, այլև (ի տարբերություն օտար եկեղեցների, որ իրեն այդպիսին կիրարկվում է միայն ձիթապողի յողը) այն կազմող սրբազն համեմունքների բյուրաժիվ պեսպիսությամբ: Ուստի պատահական չէ, որ Հայ եկեղեցու սպասավորները հասուն երկրությամբ դարերի ընթացքում նախորդ սերունդներից ժառանգություն մնացած Ս. Մյուսնի պատրաստման դեղատումները ընդորինակելով փոխանցել են իրենց հետնորդներին: Սրա շնորհիվ հայ միջնադարյան ձեռագրերում պահպանվել և մեզ են հասել մի շարք դեղատումներ՝ իրենց բազում տարբերակներով Մյուսնի նկատմամբ հայ ժղովրդի ունեցած առանձնահատուկ վերաբերմունքի մասին են վկայում համա այն բազմաթիվ ճառերը, քարոզները, շարականներն ու տաղերը, որոնք նվիրվել են Մյուսնօրներին: Հատկապես շահեկան է Ս. Գրիգոր Նարեկացու Աղոթամատյանը, որի ԴԳ բանը պարունակում է Ս. Մյուսնի բանատեղծաշոնչ մեկնաբանությունը:

Մկրտության պահին սրբազնություն Մյուսնի օծումով (դրոշմ) յուրաքանչյուր հայորդի դառնում է ոչ միայն Քրիստոս Աստծո երկնավոր ընտանիքի լիիրավ անդամը, այլև իր ազգային եկեղեցու հարազատ զավակը, որն առատորեն վայելում է Սուրբ Հոգու շնորհները (Խմանություն, Գիտություն, Բժշկություն, Մարգարելություն, Թարգմանություն, Լեզվախոսություն, Հրաշագործություն և Հոգիների ընտրություն): Այդ շնորհներն են, որ եկեղեցագործում են հայորդու սիրտը, այն դարձնում բրիստուական լուսի ընդունարան և անանց արժեքների ժառանգորդ:

Ըստ Մաշտոց ծիսամատյանի Ս. Մյուսնով օծվում են քահանաներն ու նրանցից վեր հոգևոր պաշտոնավարության կոչված անձները: Եթե ձեռնադրության պահին օծվում է միայն նրանց նակատը և ձեռքերը, ապա Կաթողիկոսի, իրեն Քրիստոսի փոխանորդությունը ստանձնած ազգի սրբազն հովվապետի, օծումը կատարվում է Ս. Մյուսնը նրա գլխին կաթեցնելով: Հայոց բագավայրները նմանապես օծվում են: Մասնավոր արարողությամբ օծվում են համա եկեղեցին, ս. սեղանը, ավազանը, Խաչը, պատկերները, որոնք դրանցից հետո դադարում են սուսկ հյութ լինելուց, և ձեռք են բերում հոգևոր հշանակություն: Ս. Մյուսնը կիրավում է Զրոբինյաց արարողության պահին, երբ այն, ի հիշատակ մկրտության պահին Հիսուսի վրա Ս. Հոգու կատարած էջքի, կաթեցնում են Հորդանանը խորհրդանշող ս. ավազանի մեջ:

ՀԱԿՈԲ ՔՅՈՍԵՅԱՆ



Պ. Հ. ՀԱԿՈԲՅԱՆ

Բանասիրության դոկտոր, պրոֆ.

ՀԱՅՈՅ ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐ*

Վարքերն ու վկայաբանությունները միշնադարյան հայ մատենագրության սիրված տեսակներից են՝ իրենց որոշակի կաղապարներով և տիպարանությամբ, դեպքերի ու դեմքերի բնութագրման, գործողության և պյունի զարգացման միասնական սկզբունքներով, որոնք, կարծես, կանխորոշում են մերուի կյանքի գալիք ճանապարհ՝ վերջինիս տարբեր հանգրվաններում նրան սպասալող փորձությունների ու պատահարների խորհուրդը:

Հայ իրականության մեջ լայն տարածում գտած վարքերի հյութը հայս և առաջ, ու առավելապես, Հին ու Նոր կտակարանների՝ արտաքուստ դիցարանական շղարշով պարուրված հերոսներն են, իսկ այնուհետև՝ Նազովրեցի Հիսուսի, նրա մերձավորների, ավագ ու կրտսեր աշակերտների ու հետեւորդների խոռվանույզ կյանքի դրվագները, քրիստոնեական եկեղեցու կողմից համբնդիանոր ճանաչման արժանացած սրբերի ապրած տառապահց օրերի ու հրաշագործությունների նկարագրությունները, ու դրանց հետ նաև՝ բուն հայ հողի վրա, հավատու ու հայրենիքի թշնամիների և օտար զավթիչների դեմ, հանուն ազատ գոյատևման մղված կոփվների բովում իմաստնացած ու առնականացած պետական ու եկեղեցական ականավոր գործիչների և գրչի ու սրբ մարդկանց անհողողի կամքն ու սիրանքները՝ վաղընական ժամանակներից մինչև 10-րդ դարը կամ Գրիգոր Նարեկացու ժամանակները։ Որքան մեզ հայտնի է, հետագա դարերի հայտնի դեմքերից և պարզ ծագումով անհատներից սրբերի շարքը են դասվել քչերը միայն։ Իրոշակալորներից՝ Ներսէս Շնորհալին, Հովհաննես Որոտնեցին և Գրիգոր ու Մովսէս Տաթևացիները, սուլական մահկանացուներից՝ Գոհարինյան Եղբայրները, որոնք հահատակվել են Սեբաստիայում, 1155 թվականի հուլիսի 28-ին և սրբացել։

Վկայաբանությունների հյութն, ընդհակառակը, հասարակ մարդկանց կյանքին ու գործերին է առնչվում։ Տիտղոսավորները, ինչպես Վարդանաց

* Ընթերցվել է Հայ միջնադարյան գրականության միջազգային գիտաժողովում (Երևան), Գեղարվեստական գրականության մասնաճյուղի 1986 թ. սեպտեմբերի 16-ի հիսուս։

նահատակները, որոնք մինչև 10-րդ դարը բավականաշափ շատ էին, հետագա ժամանակների տարեգրություններում համարյա չեն հանդիպում, որովհետև նրանց ծնող դասերն ու դասակարգերն աստիճանաբար անվանում կամ հեռանում էին մայր հայրենիքից, իսկ դա պայմանավորված էր հայ պետականության վերացումով և նոր իրադրություններով՝ եկեղեցու միջոցով միավորվող հայության և Հայաստանը զավթած մահմետական բռնակալների փոխարքերություններով, որոնք արդեն այլ բնույթ ու ընթացք ունեին:

Վկայաբանությունների բովանդակությունից եկեղեց՝ դրանք հանուն հավասի ու համոզումի գրիված անձանց կյանքի պատմություններ են՝ դարձյալ որոշակի կաղապարներով, միայն թե անպանով ոնով շարադրությամբ: Սովոր շրջանի, այսինքն՝ մինչև 10-րդ դարի վկայաբանությունների հերոսները, համարյա բոլորը, դասվել են ազգային եկեղեցու սրբերի շարքը, և հայ առաքելական եկեղեցու օրացույցը (տոնացույցը) նրանց հիշատակը հավերժացնելու համար հասուն օրեր է սահմանել, որ տոնվում են ամեն տարի: Հետագա դարերի վկաների ապրած դառնությունների ու ողբերգական վախճանի միապաղապահ և մեծ մասամբ համառու պատմությունները թեավետու մի որոշ չափով արդեն համախմբված են «Հայոմավորը» կոչվող ժողովածուների մեջ, իսկ մասամբ էլ ցրված՝ պատմա-գեղարվեստական երկասիրությունների և վկայաբանական նյութերի հավաքածուների էշերում, բայց նրանք, այդ վկաները, պաշտոնական ճանաչում չեն ստացել: Նրանց առավելագույն ընդունում ու հիշում է հասարակ ժողովորդը, հավատում նրանց անյունների հրաշագործ գորությանը, գրեթե մինչև օրս, երկողածությամբ ուստի է գեում նրանց նահատակության վայրերն ու շիրիմներին, երկրպագում ու մոռ վառում, իրենց ցավերին նար խնդրում:

Դաժան փորձությունների բովով անցած, համոզումի ու անկուրուն կամքի այդ խկական ասպետների, շատ դեպքերում գրին անհաղորդ, բայց և սուր մտքի ու ազնիվ հոգու տեր, իրենց բարի անվան ու ազգային դիմագծի անաղարտ պահպանության մասին հոգացող և դրա համար կյանքով հասուցող այդ ողբերգական կերպարների վկայաբանությունները ճանաչողական մեծ նշանակություն ունեն և, կարծես, լուսարձակում են հայ ժողովորդի ներքին կյանքի մութ ծալքերը, ըմբռնելի դարձում մեր ազգային բնավորության և հոգեբանության էական կողմները:

Մեր հետագա խոսքը այդօրինակ գրական հուշարձանների հետազոտության վիճակին և ցայդ ձեռք բերած արդյունքների գնահատման է վերաբերելու:

Բայց մինչ այդ՝ մատենագիտական-աղբյուրագիտական մի համառու տեսություն:

Հորինվելով ազգային մատենագրության սկզբանավորման տարիներից՝ մասնավորապես վկայաբանությունները հարատևել են մինչև ներկա հարյուրամյակի առաջին տասնամյակները՝ նոր ձևափոխման եւթարկվելով գրական դիմանկարների և եղեռնի օրերի բյուրավոր և անանուն նահատակների տառապանքները ոգող նորօրյա պատումների մեջ:

Ժանրի ձևափոխման այս ողին տեսական ընդհանրացման համար հարուստ կովաններ պարունակելով հանդերձ՝ սու այսօր պատշաճ ուսափական նյութը չի դարձել:

Հին վարքերի ու վկայաբանությունների հավաքման ու հրատարակման բնագավառում ամենից արդյունավետ աշխատել են նախ և առաջ Միհթար-

յան գիտնականներ Մ. Չամչյանը, Մ. Ավգերյանը, Դ. Խնձինյանը և Դ. Սլիշյանը, պղոսահայ գիտնականներից՝ Գ. Փետրիմալճյանն ու Մատթեոս Վարդապետը (Խօմիրյան), իսկ արևելահայ իրականության մեջ համանուն խճանդիքներով սկզբներում զբաղվում էր ականավոր հայագետն Գալուստ Տեր-Մկրտչյանը (1860—1918), և ապա, վերջինիս խորհրդով՝ Հ. Մանանդյանը և Հ. Աճառյանը:

Միքայել Չամչյանն առաջինն էր, որ միջնադարյան Հայաստանի բազմականին պատմությունը շարահյուսելին՝ ժողովրդի քաղաքական և եկեղեցական պատմության լուսաբանման համար օգտագործել է վկայաբանական մեծ ու փոքր բնագրեր, որքանով որ դրանք մատչելի էին 18-րդ դարի հայագիտությանը: Մ. Ավգերյանի պրատումներն ավելի տևական էին, արդյունքները՝ առավել շոշափելի: Իր ամբարած հյութերը նաև հրապարակ է հանել 19-րդ դարու սկզբներին, նախ միհատորյա «Ծաղիկ Վարուց սրբոց, զորու տօնէ եկեղեցի Հայաստանեաց» (1800) և ապա՝ «Վարք սրբոց լիակատար» տասներկու հատորից բաղկացած (1810—1814) ժողովածումների միջոցով, որոնց մեջ, սակայն, վարքերն ու վկայաբանությունները մեջ են բերվում վերապատմված ձևով, հաճախ էլ իր նոր թարգմանություններով: Այդ պատճառով նվազում է Ավգերյանի տիտանական աշխատահիրության գիտական արժեքը: Դ. Խնձինյանը հրատարակել է վարքագրական հյութերի մի ժողովածու, որն ունեցել է բազում արտասպություններ («Վարք սրբոց», 1832, 1861, 1896 և այլն) և գիտական-բնագրագիտական արժեքի տեսակետից նոյնական տկար է: Փետրիմալճյանն ու Խօմիրյանը փաստորեն ընթերցողին են հանձնել տակալին 14-րդ դարի սկզբներին Կիլիկյան Հայաստանում Տեր Խորակի կազմած Հայսմավորքը՝ անհարկի միջամտություններով և վրիսակներով (1834): Եվ դրա բազում ապացուցները շատ տասնամյակներ առաջ պարզել է մեծ հայագետ Նիկողայոս Աղոնցը և հրապարակ հանել իր ոսւերեն ու ֆրանսերեն աշխատություններում:

Լուրջն ու մնայունն, այսպիսով, Ալիշանի հրատարակությունները են: Հայագիտությունը նրան է պարտական ազգային եկեղեցու սրբերի վարքերի ու վկայաբանությունների բնագրերի ըստ ամենային խնամված՝ առաջին գիտական հրատարակությունը երկու հատորով (1874) և «Սուիեք Հայկալ, անհեռ» հատենաշարը նույն ժամի արձակ պատումների անհայտ տարբերակներով: Այդ շարքի 24 գրքովկներից 22-ը Ալիշանի աշխատահիրության արդյունքներն են և լույս են տեսել 1853, 1854 և 1861 թվականներին, սուրբ Ղազարի հայոց տպարանում: Վկայաբանական հյութերն առաջարկություններում («Ալրարատ», «Ալտական», «Ախուլան», «Հայապատում» և այլն):

Հայագիտության այս բնագավառի հետագա առաջընթացը կապված է Գալուստ Տեր-Մկրտչյանի անվան հետ:

Գ. Տեր-Մկրտչյանը ո՞չ միայն հրատարակիչն ու մեկնաբանն է մինչ անձանոր առանձին վարքերի ու վկայաբանությունների, այլև բնագրագիտական խրթին հարցեր լուծող բռնմափորձ բանակեր, վկայաբանությունների գաղափարական բովանդակության և ընդհանուր նպատակադիր վացության փառուն բացահայտող:

Ուշադրության կենտրոնում ունենալով գերազանցավես հայ գետնի վրա ստեղծված վկայաբանական երկերը («Գրիգոր Մանաճինը Ռամիկ Միհրան տոհմից», «Խոսրով Գանձակեցի», «Հովհանք Նորաշենցի» և այլն), որոնց հերոսների գործունեությունը եերկայացվել է մահմեդականության

ինմ քրիստոնեության մղած պայքարի խորքի վրա՝ հանուն ազատ մտածողության ու գոյատևման, գիտնական հանգել է այն եզրակացության, որ այդ կոփվմերում ընկած նահատակները քրիստոնեական եկեղեցու սրբեր հոչակվելոց բացի նաև «մեր պատմության ամենափառավոր հերոսներն են», հերոսներ, որոնք «առանց առևտրի մտնելով իրենց խղճի հետ, առանց հրապուրվելով զանազան խոստումներից, հանձն են առնում մահ՝ հաստատ մնալով իրենց համոզումներին», որ և «մարդկային գործերից ամենից բարձրը, ամենից վեճին է...» («Արարատ», 1896, № 12, էջ 590):

Գ. Տեր-Մկրտչյանի խորհուրդներով ու աշակցությամբ է գրու քերվել «Հայոց նոր վկաներ» ժողովածուն (աշխատահրողներ Հ. Մանանյան և Հ. Աճառյան, 1903), որի մեջ հավաքված են տվյալ ժամրին պատկանող այն բոլոր պատումները, որոնց մեծ մասը վարելով ու վկայաբանությունների կանոնիկ ժողովածուներից դուրս եք մնացել և կամ հիշատակվել մեկներկո հայադասությամբ:

Գ. Տեր-Մկրտչյանը սեփական օրինակով ցուց տվեց, որ վկայաբանությունների տառմնահրությունը հայագիտության առաջնահերթ խնդիրներից է և բնավ կապ չունի ինչպես պահպանողական աշխարհայեցության ու ճգնավորական հրապուրանքների, այնպես էլ ժողովրդի կրոնամոլական ոգու ապացուցները հրապարակ հանելու ձգտման հետ: Այդ գործը հայրենասիրական լորջ ձեռնարկում է, որովհետև օգնում է ճանաչելու ժողովորդի ներքին կյանքը դարերի հողովոյցի մեջ, կովանեներ տարով լուծելու աղբյուրագիտական ու պատմական առեղծվածները: Օրինակ՝ Խորով Գանձակեցու և Հովսեսի Նորաշենցու վկայաբանությունների հետազոտությամբ անվանի բանասերը ոչ միայն գիտական շրջանառության մեջ դրեց Միհրար Գոշի մինչ այդ անձանոթ ասեղծագրծությունները («Ներքողեան ասացեալ ի նոր վկայց կոչեցեալն Խոսւրով» և այլն), այլև ճշումներ կատարեց Հայատանի պատմական աշխարհագրության մեջ (Մազաք գալախի և Ծրեց բլորի տեղադրության կապակցությամբ):

Գ. Տեր-Մկրտչյանի հետազոտությունները մեզ որիշ դասեր ել են տախիս: Այսպես կոչված՝ պահպանողության և կրոնական ոգու ներքին բովանդակությունը բացահայտելու առումով, որ միշտ չէ, որ միշտ են որսացել հետազոտությունները և միմյանցից զատել ինկական առումով ենուադիմությունն ու կրերամտությունը և բաղաքական հետատեսությունն ու հայրենասիրությունը:

Նորօրյա իմաստաներները և հանրային մտքի պատմաբանները հանույրով են դիմում պիտակավորման հնարանքին, որ բնավ էլ սուր մտքի հասկանից չպիտի դիտվի, այլ՝ ամբարտավանության ու տկարամտության: Եթե հավատանք նրանց, ապա ազգային պահպանողականներին, առանց բացառության, պիտի դասենք գեղջկական ըմբռնությունով միամիտ, իսկ առանձին դեպքերում ել՝ շարամիտ ենուադների շարքը, որովհետև նրանց մշտական հոգացման առարկան ազգային ոգու և դիմագի անսպասության պահպանությունն էր: Իրք թե՝ աչք փակելով առաջադիմության և ժողովրդի տնտեսական և հոգևոր կյանքում նոր ժամանակների ու գաղափարների թեկադրանքով երևան եկած դրական տեղաշարժերի հանդես, նրանք փաստորեն խանգարել են մեր տնտեսական ու հոգևոր վերելքին: Նման եւլակետն, ինչ խոսք, պահպ է ու հակապատմական: Այսպես կոչված պահպանողականներից շատերի բոլն մտահոգությունը ազգության մարմնի ամսականներից շատերի բոլն մտահոգությունը ազգության մարմնի ամսականներից պահպանությունն էր միասնական հայրենիքի, լեզվի ու եկերդության պահպանությունն էր միասնական հայրենիքի, լեզվի

ղեցու կոտորակման պայմաններում: Իսկ եթք կործանված էր ազգային պետականության շենքը, վտանգված՝ ազգի ֆիզիկական գոյությունը, և հայության հիմնավոր նայրենիքի երկնակամարտմ թևածում ու կոնչում էին գիշակեր անգղեները, եթք չարիքը, անօրինականությունը, կոտորածը, օտար տիրապետողների քնահաճ վայրագությունները և ալլանդակ վարք ու բարքը սովորական երևոյթ էին, իսկ ընդդրումն՝ անգուածելի բան, ամենաաննշան անհատի կորուսուն անգամ ազգի դիմադրողական ուժի նվազում, ազգային միասնության խարխլում պիտի համարվեր:

Այս պայմաններում են ծննդել նոր վկաները, ներուական նոր ոգու կրողները:

Հայության ազգային ողբերգության ենթագիտակցական ընկալումն է դիմադրության էր կոչում նոր վկաներին ընդդեմ հայրենի բնաշխարհ ներխուժմած օտար զավթիչների, արգելակելու համար նրանց սանձազերծած ձուլման ու ոչնչացման քաղաքականությունը:

Հասարակն ու գեղջուկն էլ ունենա իրենց գոյաւուման փիլիսոփայությունը, որը թեատրու տեսական վերլուծումների առդյունք չէր, բայց ավելի լավ էր դիմագրաւլում փորձություններին և ավելի քիչ կամ նվազ կորուսուներով բաղձակի հավահանգիստ հասցնում ազգության առաջնորդացի նավը ամենակող փոթորիկների միջով, քան համայնքային ապատամբությունները: Չսուանանք մի բան էլ: Կրոնական ու դավանաբանական պատմեշների համարթեցումը, խոճի հետ սակարկության մտնելը, կրոնափոխության հանապարհով առանձնաշնորհումների արժանանալու գայթակղությունը, վտանգի տակ էին դնում ազգային միասնության հարատևությունը և ավելի բան արագացնում կոտորակումն ու փոշացում: Հայոց նոր վկաները ներքնակե գգում էին այդ չարիքը և ամեն գնով պաշտպանվում դրա աղետավոր հետևանքներից:

Հայության իրավիճակից և կեցության պայմաններից ելնելով՝ մինչև անգամ դաշնության ու եղբայրության բարող տվյալ հանրության մասը կազմող դավանաբանական տարրեր համայնքների միջև նրանք անհմատ բարբառանք էին համարում, որովհետև այն չէր նպաստում ազգային միասնության վերականգնմանը, իսկ մահմեդական տիրակալները կացնահարում ու կորում էին ո՞չ թե միայն հայկական կալեմ առանձին հյուղերն ու շիվերը, այլև դրանք կորելուց վերջացնելուց հետո նաև՝ մայր արմատներն ու հաստատում բունքը: Այսպիսին էին Օսմանյան կայսրության հայացինչ քաղաքականության պատուները և հնում, և անցյալ դարում:

Վերջին հազար և ավելի տարիների ընթացքում գրի առնված վկայաբանական պատումների գիտակուր հերոսները հավատի ու համոզումի, անկուսում կամքի ու բարդական մաքրության տիպարաներ էին և իրենց անձնազոր սիրանքով ու հաստատամությամբ հայությանը ոգեկոչում էին ազգային միասնության և անաղարտության պահպանության: Ու հենց սրանով էլ հայ վկայաբանական գրականությունն ազդում էր կյանքի վրա:

Գալուստ Տեր-Մկրտչյանը հայոց հին ու միջնադարյան մատենագրության խնդրու առարկա ժանրերի հետազոտողներից առաջինն էր, որ ճիշտ ուսաց վկայաբանությունների գաղափարական բովանդակության այս էական կողմը:

Վկայաբանական պատումների քողը, հարկավ, կրոնասիրությունն է, ազգային եկեղեցու ավանդները սրբությամբ պահպանելու կոչը, բայց էությունը, ոգին՝ անձնազոր հայրենասիրությունը: Անա ինչու երկար դարեր

մահմետականության դեմ հայ ժողովրդի մղած անհավասար ու արյունոտ կորիւներում ընկած, ճախանձի, դավաճանության և մութ կրքերի գոհ դարձած ճահատակներին Գալուստ Տեր-Մկրտչյանը քրիստոնեական եկեղեցու սրբեր անվանելուց բացի հոչակում էր ճան հայոց պատմության ամենափառավոր հերոսներ, որոնց սխրանքները հետնորդներին տալիս էին ուսանելի դասեր:

Իր հետազոտությունների մեջ Գ. Տեր-Մկրտչյանը երկիցու ոչարքություն է հրավիրել իին վկայաբանությունների մեջ դրսնորված՝ քրիստոնեության գաղափարախմսների գործունեության մեջ երևան եկող անհանդորժության ոգու արտահայտությունների վրա նոյնպես, վերջինս մասսամբ կապելով Թոնդրակյանների մկատմամբ հենց սկզբից սկսված հայածանքների հետ: Այսինչ հանդուրժողականությունը, եւրողամտության ոգին հայոց եկեղեցու վարդապետության հիմքն էին կազմում: Բայց եկեղեց պատմական ճշմարտությունը չկոծենք և վարագույրը փոքր-ինչ բաց անենք...

Թոնդրակյան շարժման գործիչներն ել գաղափարի ու համոզումների հահատակներ էին, բռնության ու հալածանքի գոհեր, միայն թե նրանցից ոչ մեկը վկայաբանությունների հերոսներ շարձան, և արդարացիորեն չնշվեց շատերի հիշատակը: Խճշդես մկատում է հայագետը՝ «մտքերը վիդոված էին. մի կողմից՝ ներելի և աններելի միշոցներով պաշտպանվում էր ուղղափառությունը ոչ միայն խոսքով, քարոզությամբ, այլև բռնի ուժով, կախաղանով, խարանով, իրով ու ջրով, մյուս կողմից՝ ամենայն համառությամբ, ամեն նեղությունների և հալածանքների հանձնառությամբ քարոզվում և ծավալվում էր աղանդավոր վարդապետությունը: Պող Ալբարատից, Սմբատ, Սարգիս, Ղազար, Թորոս, Արքա, Կյուրեղ, Հակոբոս և ինկուպոս, Կուշիկ արելա, տիկին Հրանուշ, իշխան Վրեմոս, տիկնաց Ախմի և Կամարա, մի ոմն առասպեկտախառն տիկին Մարե, մի որիշ բազմաթիվ անուններ, մնացել են մեզ իրեն այդ աղանդի հշանակով գործիչների անուններ:

Չնայելով Մագիստրոսի փքոցուուց խոսքերին և տմարդի հայածանքներին՝ մենք կարծում ենք, —շարունակում է գիտնականը, —որ ոչ թե հալածանքները վերջ դրին այդ աղանդին Հայաստանում, —ինչպես հայտնի է՝ այդ աղանդը շարունակեց յուր գոյությունը մինչև մեր օրերը Խնուսում և Ալեքսանդրապոլի գավառում, —այլ թուրք-թաթարական արշավանքները ծածկեցին իրենց հեղեղի տակ ինչպես ամեն բան, ճան այդ աղանդը, որի հետևողների մեծ մասը իրենց պաշտպան իշխանների հետ տեղափոխվեցին դեպի արևմուտք, Ասորիք, Փոքր Ասիա և մասնավորապես Բուլղարիա: Բուլղարիան դարձավ այդ աղանդի երկրորդ հայրենիքը, որ և Բոգոմի քահանայի անունով աղանդը կոչվեց Բոգոմիլների աղանդ:

Միջին Եվրոպայում Կաթարացիները շարունակեցին նոյն աղանդը, իսկ հարավային Ֆրանսիայում Ալբիգացիները (ալբիգուները): Այս վերջնների պատմությունը հանրածանոթ է և բոլորից լավ ուսումնասիրված»:

Առավել անսպասելի է գիտնականի հետևողությունը.

«Այսպիսով, —գրում է Յա, —ուժորմացիայի և բոլոր բողոքական-ավետարանական եկեղեցիների բուն ճախահայրերը և հիմնադիրները դուրս եկան Հայաստանից: Դրանց պատմության ուսումնասիրությունը անաշառությամբ և սուսաց մոլեսանդրության, անհրաժեշտ է ոչ միայն մեր ուղղափառ հայկական և եկեղեցու պատմության», այլև հայ հոգևոր-մտավոր կյանքի

պատմության համար, իբրև վերջինիս «ինքնուրույն արտահայտություն՝ մեծ և նշանավոր իր հետևանքներով»¹:

Թուղթակյանների գործունության հետևանքները, թվում է, միակողմանի է գնահատել Գ. Տեր-Մկրտչյանը, և այդպիսի սխալ թույլ են տվել որիշելուն է՝ դասագրքային ճշմարտություն հոչակելով իրենց մեկնությունը: Հիրավի, թուրք-թաթարական արշավանքները դեպի արևմուտք քշեցին, սրբեցին ու տարան թուղթակեցիներին, բայց թուղթակյան աղանդավորները էլ իրենց հերթին խարիսքին ազգային միասնությունը, ժողովրդի աշքում վարկարեկեցին ազգության համախմբելու ռեսակ միակ ուժը՝ եկեղեցին, սնանկ հոչակեցին նրա քարոզած վարդապետական ճշտարանությունները և այդ ձևով, անուղղակիորեն, դյուրացրին թաթար-մնադիների առաջինացումը: Ահա՝ ինչու, որքան էլ առաջադիմական իներ և հակաֆեղալական բոլվանդակություն ունենար Թուղթակյան շարժումը, որքան էլ այն ողղված լիներ դարաշրջանի իշխող գաղափարախոսության՝ աստվածաբանության դեմ, ըստ Էության ծանր էին նրա հետևանքները: Կրկնում ենք՝ վտանգվում էր ազգային միասնությունը, թուլանում հայ ժողովրդի դիմադրողական ուժը ընդեմ արևելքի եկող նոր զավթիչների: Սնիի թագավորության անկումից հետո, Հայաստան ամայացնող արտագաղթերի տարիներին, պետականության դեկը կորցրած ժողովրդին համախմբող կենտրոնաձիգ զորությունը և հոգևոր միխթարությունը մնում էր մեկն ու միակը՝ եկեղեցին, իսկ կործանել վերջինը և մերժել նրա դավանաբանական սկզբունքները, նշանակում էր սեփական ձեռքով բանդել ազգային միասնության շենքը: Սրմեր այս խնդիրները քննելիս լինել առավել անկանխակալ:

Գ. Տեր-Մկրտչյանը լորջ հաջողությունների է հասել նաև մինչև նոր ժամանակները հայագետների համար առեղծվածային մնացած և տակավին V դարու երկրորդ կեսին Արքահամ Խոստվանողի ձեռքով ասորերներից հայերն թարգմանված՝ Մարտիքասի «Վկայք Արևելից» վկայաբանական ժողովածիվ հետազոտության և բնագրի վերականգնման հարցերում, մի գրական-թարգմանական հուշարձան, որի բեկորները շատ վաղուց տարրալուծվել էին Ծարբանիրների ու մատենագրական այլ կարգի ժողովածությունների մեջ և անձանաշելի դարձել:

Ձեռագրների պատառին և մատենագրական հնագույն վկայությունների համադրման ճանապարհով Գ. Տեր-Մկրտչյանը ոչ միայն կարողաց վերականգնել «Վկայք Արևելից»-ի սկզբանական վիճակն ու կառուցվածքը՝ միմյանց մոտ բերելով նրա մասերը, այլև հաստատեց, որ այս ժողովածիվ ներածական ճանի մեջ², Մարտիքասը նկարագրելով պարսից տեսրության՝ քրիստոնեության դեմ սկսած դաժան հալածանքը IV դարում, անդրադարձել է նաև հայերին ու Հայաստանի վիճակին, ըստ որում Մարտիքասի արտահայտությունների ու նկարագրությունների զուգահեռները նա հայտնագործում է Փավստոսին վերագրված «Բուզանդարան պատմութիւնը» ժողովածիվ մեջ:

Դիտնական այդ կարևորագույն արդյունքներին հասավ Մարտիքասի երկի տվյալ գլուխ միջնադարյան արտագրությունների մեջ երևան եկած

¹ Գ. Տեր-Մկրտչյան, Հայագիտական ուսումնասիրություններ, գիրք Ա, Ե., 1979, էջ 219—222:

² Խորագիրը՝ «Վկայութիւն բազմաց սուրբ համատակաց արևելեաց, որ կատարեցան վասն Քրիստոսի»:

տարբներցումների հանգամանալից քննոթյան ճանապարհով։ Ուշադրությունը դարձնելով հին ձեռագրերում կիսամայն յ-ի գրության ձևերին, երբ առ և ո հնչյուններից հետո լսվող կիսամայն յ հնչյունը չէր գրվում, Գ. Տեր-Մկրտչյանը ձկատում է, որ այդ պատճառով հին երկաթագիր ձեռագրերի վերծանման ընթացքում գրիչները երբեմն շփոթել են շատ գրեր ու բառեր, տվյալ դեպքում՝ Ո և Ռ գրերը հայոց և հարց բառերի մեջ մասնավորապես Համապատասխան օրինակներ երան ընձեռում են Կորյունի «Վարք Մաշտոցի» երկը, ապա և՝ «Վկայք Արևելիցը», որը միայն հետևանքով դարեր շարունակ սրովդել էր պատճական ճշմարտությունը. Լունեար իր խոսքերը.

«Մարտուն ճառելով Պարսկաստանի քրիստոնյաների կրած հալածանքները Շապունից, ավելացնում է. «Որդիք Հայոց վշտատեսաց կոխան փողաց և երիվարաց լինելին, քանզի արքին և նորա զրածակն դատնութեան, որոց նեղեալ և ճգնեալ գերին ի ճանապարհին և խթեան ճքողին ի սովոր և մեռանելին։ Յայնպիսի ամս շարս և ամուղյան, զորոց ալլայլեցին զարդեալ կարգան մարդիկ ամարելք, յայնպիսի շփոթ և լոյց և ի դառն ժամանակս, զորս շփոթեաց իշխանն ազատութեան։ Արևելք [=Պարսկաստան] հպարտացեալ ամբարտասանելին, Արևմուռ [=Բուզանդական կայսրություն] խոնարհեալ հնազանդէին, Հիսիսի [=Հայաստան] տապաստ անկեալ կոխսէր, Հարաւ [=Սարդեստան, Սասրիք, Պարսկաստանի քրիստոնյացք] ի պարտութիւն մատնեալ վատրաքէր։ Գեատլք աւերէին, քաղաքք կործանելին, ազգը հնազանդէին և աշխարհիք վատնէին» (Ա և Բ Ծառընտիրներ, Օան «Սոփերք հայկականք», Հատ. 1, եր. 94):³

Դ. Ալիշանը, որ այս տողերի առաջին հրատարակիչն է, «Սոփերքում» տպագրել է «Որդիք հարց» ընթերցվածը⁴, այնինչ, իրականում, հայոց որդիների տառապանքների մասին էր խոսում Մարտունը, և այն միջավանչային տեսիլքների, որոնց առավել ընթարձակ նկարագրությունը Գ. Տեր-Մկրտչյանը գտնում է Բուզանդարանի Դ դպրության ԾԵ գլուխ («Յաղագ գերութեանն և հարուածոյն աշխարհին Հայոց և աւերածոյն և գերութեան տանելոյն ի Պարս») և բավկանաչափ առարկապական ձևով՝ ԾԸ գլուխ հետևյալ հատվածում. «Եւ ածին, ժողովեցին առաջի թագաւորին Պարսից զամենայն գերին մնացորդաց աշխարհին Հայոց. ապա հրաման տայր թագաւորն Պարսից Շապուն զամենայն այր, ի չափ հնաեալ, կոխան արարեալ (այսինքն՝ արկանել, ճշում է գիտնականը—Պ. Հ.) փղաց և զամենայն զիին և զմանուկ հանել ընդ ցից սպիլից»։ Հիրավի, Արքահամի միննույն «որդիք Հայոց վշտատեսաց կոխան փղաց և երիվարաց լինելին» արտահայտությունն է, որ Բուզանդարանի խմբագրով դարձել է՝ «զամենայն այր... կոխան արարեալ փղաց...»⁵:

³ Գ. Տեր-Մկրտչյան, Հայագիտական ուսումնասիրություններ, Գիրք Ա, Ե., 1979, էջ 314, Օան «Արքահաման Խոսունկանողի Վկայք Արևելից», Էջմիածին, 1921, էջ 43—44:

⁴ «Սոփերք Հայկական», Ի, Վեմետիկ, 1854, էջ 94:

⁵ Գ. Տեր-Մկրտչյան, Հայագիտական ուսումնասիրություններ, էջ 314: Թեպետ Արքահամի երկին ապա զիին աստրական քնագիրը կորուաներով է հասել մեզ, չեն պահպանվել համանական պահպանությունը, որի պատճառով հանգակեալ հումանու ընդիմականութերից ումանք դժվարանում են անվերապահ համակարգ ընծացել ենա ուղղմանը, բայց դրանց վամբերականությունն անվակած է, և բանակարգ տվյալ խնդիրն, արդեն մեր օրերում, կրկին արծարձել և հօգուս Գ. Տեր-Մկրտչյանի իրավացիության վկայել է աստրական Լ. Տեր-Պատրոպահն «Արքահամ Խոսունկանողի պահպանողին» պահպանության մեջ (Ե., 1976, էջ 107—109):

Գ. Տեր-Մկրտչյանը նյութեր էր հավաքում «Վկայք Արևելից»-ի և «Բուզանդարան պատմութեանցի» փոխարարերությունների հարցին առանձին աշխատություն նվիրելու, որ չհասցրեց իրագործել:

Բուզանդարանի խմբագրման ժամանակի մասին այս գուգահեռը կարեւոր կովան է տախի, որ, ցավոք, նորօյա հետազոտողներն անտեսում են: Այն, համենայն դեպք, 460-ական թվականներից առաջ չէ:

Խճանին վերցրած՝ հետաքրքրական հարց է նաև «Վկայք Արևելից» ժողովածվի բնագիր վերականգնման և հրատարակության պատմությունը, որ մասսամբ պարզվում է Գ. Տեր-Մկրտչյանի և Հ. Տաշյանի փոխանակած համակներից: Դրանցից մեկը մենք հրատարակել ենք 1974-ին, մյուս երկուը դեռևս անտիպ են (ստացել ենք Վիեննայի Միջթարյաններից, բանասեր Խ. Սամվելյանի միջոցով, վերջին տարիներս): Աշխատանքն իրագործվելու էր 1890-ական թթ. Կեսերին, երկուսի գործակցությամբ, և լուս էր տեսնելու Վիեննայում. «Այս հրատարակությունը,—գրում էր Գ. Տեր-Մկրտչյանը,—բացի յոր ներքին արժանավորությունից, հուսով եմ, որ շատ բան պարզելու է և մեր դասական գրողներից մի քանիսի վերաբերմամբ (Եղիշե, Գյուտ, Փալսոս և այլն): Թարգմանության լեզվի շրեղությունը, ապահով եմ, որ Դուք ինձնից լավ եք գնահատում» (7 հունվարի 1895): Խսկ երկու ամիս հետո ավելացնում է. «Արքահամի կենսագրության համար ինձ հարկ եղավ Ղազարով գրադիւն: Այդ կետում կունենաք կարևոր նորություններ, որոնք թեև ուղղակի Արքահամին չեն վերաբերելու (այլ՝ Ղազարին), բայց շատ կարևոր են: Մինչև առաջիկա աշունք, երբ ողջ մնամ, երկի, կունենաք որիշ նորություններ, իսկ եթե չկած կիհնեմ մյուս աշխարհը, փա՛ռ Աստուծոն, դուք երիտասարդ եք և առողջ, գործ գործ կիրակ կիսնեք: Համոզված ենք, որ ձեռքից եկածը չեմ խնայիլ այդ հրատարակության համար...» (10 մարտի 1895):

Հայոց դասական մատենագիրների և Արքահամի առնչություններին վերաբերող այդ նյութերը, որ մինչև 1921 թվականը հայագետ Մ. Տեր-Մովսիսյանի ձեռքին էին, անհետացել են խորհրդավոր հանգամանքներում, վերջինիս ամրողական դիվանի հետ:

Տրամաբանական է միանգամայն, որ Գ. Տեր-Մկրտչյանը լոկ բառային համընկնությունով ու փոխառություններով չի բազարարվել, այլև խորամուխ է եղել Արքահամի լեզվական արվեստի գաղտնիքների մեջ, չնայած այդ մասին «թարգմանության լեզվի շրեղություն» արտահայտությունից բացի որիշ ոչինչ չենք գտնում նրա ողղուներում: Հետևաբար, ավելորդ չափուի համարվի, եթե այս ողղությամբ փորք-ինչ ծավալվենք:

Գ. Տեր-Մկրտչյանի հետքերով ընթացող կամ նրա հետ միաժամանակ գործող հայ բանասերները «Վկայք Արևելիցը» նորիցնոր քննելիս՝ ձեռքբերած արդյունքներն առավելացեն ծառայեցրել են կամ բանասիրական-բնագրագիտական խնդիրներ առաջարկելու և լուծելու նպատակներին՝ աշքի առաջ ունենալով հայ հին մատենագրության շահերը և Արքահամի և նրա երեց ու կրտսեր ժամանակակիցների (Եղիշեի, Ղազար Փարպեցու և այլոց) երկերի լեզվանական ընթիանընթյուններն ու բառային համընկերան առնելու համար կամ էլ փորձել են պարզել (հաստատել) հայերեն թարգմանության առնչությունը (հարազատությունը) առարկան սկզբաղերիութիւն: Առաջին վարդապետ և թարգմանությունը նորայր Բյուզանդարյան բանասեր Ն. Անդրիկյանը («Արևելյան վկայք», տես «Բազմավետ»,

1905, № 6 և 7—8), Վերջիններից՝ Ե. Տեր-Մինասյանը («Աքրահամ խոստվանողի «Վկայք Արևելիցը» և նրա ասորական սկզբնառությը», տպագրված՝ «Բանբեր գիտության և արվեստի ինստիտուտի», գիրք Ա—Բ, 1921/1922):

Բայց «Վկայք Արևելիցի» քննության ու արժեքավորման հայեցակետերի մեջ, մեր կարծիքով, կարևորներից մեկը պիտի լիներ թարգմանության բանաստեղծական լեզվի գեղարվեստական հատկանիշների բացահայտման խնդիրը՝ պարզելու համար նախ, թե արդյո՞ք չափազանցություն չէ հուշարձանի լեզվի մասին հետազոտողների, նրանց մեջ և Գ. Տեր-Մկրտչյանի հայտնած անվերապահ հիմացական կարծիքը, իսկ ապա՝ ճշգտելու համար, թե իրկանում Աքրահամն ի՞նչ նորություն էր բերում հայ լեզվամշակույթի պատմության մեջ, ինչո՞վ էր հատկապես գրավում Եղիշեին ու մյուսներին, երբ մեկի ասորական բնօրինակի և մյուսների հայերեն երկերի միջև մի ամբողջ դարի անդունդ կար, իսկ նկարագրվող ժամանակների, դեպքերի ու դեմքերի՝ և ո՞չ մի համընկնում: Պիտի խոտուվանեն՝ հուշարձանի ուշադիր ընթերցանությունը, նրա և Եղիշեի մերուական ասքի լեզվական մշակույթի անկանխական համադրությունը բերում է նոյն եզրակացությանը, ինչին հանգել էր Գ. Տեր-Մկրտչյանը շորջ մեկ դար առաջ. Աքրահամի թարգմանության լեզուն ճիշտ որ շքեղ է և շատ առումներով կանխում է ինչպես հինգերորդ, այնպես էլ հաջորդ դարերի հայ բանաստեղծական լեզվի մեծ վարպետների նվաճումները: Ուստի մերկապարանց չերևալու համար քաղեր մեկ-երկու փոքրիկ հատված «Վկայք Արևելիցի» արդեն քանից հիշած ներածական ճանփ, որ, ինչպես և Եղիշեի Յոթերորդ եղանակի վերջին էջերում, նկարագրված են արևելքի քրիստոնյան կանանց կրած ահավոր տառապանքներն ու անցած գողգոթան և բռնության կապանքների մեջ ցուցադրած անշեղ հավատարմությունը հայերի լույս Բավարիա ու ընտանեկան սրբություններին, կանանց, որոնց անընկելի ոգու դիմաց անուժ էին ամենադաման հալածանքներն ու խոշտանգումներն անգամ:

Սայդ դրվագներում այլարամական թեման զարգանում է հակադրությունների միջոցով. թեպեսուն բռնակալների գործադրած տանջանքի միջոցներն անզոր են դասնում կոտրելու նորը ու փիրուն էակների ոգու ուժը, կամքն ու հավատը, բայց որովհետև խորք այնուամենայնիվ կանանց մասին է, ի վերջո, բնականից թույլ նրանց մարմինը չի կարողանում դիմանալ ահավոր խոշտանգումներին, ու մինչ նրանց հոգիները պատրաստվում էին հրամեշտ տալու այս աշխարհին, խոշտանգված մարմինները, կարծես, թարմանում, երիտասարդանում ու նոր համար էին ստանում, ներքին գեղեցկությունը ցոլանում էր դեմքերի վրա՝ յուրաքանչյուրին յուրովի փոխարկելով մարմնական գեղեցկության կատարելության՝ այդ ձևով զարմացնելով ու սարափեցնելով անհոգի դահիճներին:

Ա. «Տեղացին ի նոսա նետք նախատանաց, և նոցա ինչ ո՞չ կարացին ազդել: Մերկացան ի վերաց նոցա սուրբ թշնամեաց և ո՞չ կարացին սպանանել: Զգեցին ի նոսա տէս աղտեղի խտողմանցն, և նոքա ո՞չ խոցեցան: Սպանացան նոցա մաս դառնաշունչ, և նոքա ո՞չ զանգիտեցին: Պատեցին զնոսա մեղք մարմնոյ, և ո՞չ կարացին հաւանեցուցանել: Գրգուեաց զնոսա մոգութիւնն ըստ որկորեայ բարոյիցն ի կերակուրս, և ո՞չ թուլացան: Երկեցուցին զնոսա դատաւորքն մեծասատ սպանապեար, և նոքա ո՞չ դողացին: Զարհութեցուցին զնոսա իշխանք չարալլուկ տանջանառ, և նոքա ո՞չ խո-

նարհեցան: Մաշեցին զնոսա խաւար բանդի և կապանալը, և ո՞չ վհատեցան միտք նոցա: Գագանացաւ ի վերայ նոցա թագաւորութիւնն չարաշուր հրամանաւ և ո՞չ կարաց պատրել զգաւորթիւն ոգուց նոցա: Եհաւ առ նուս դատավճիռ մահու, և ո՞չ կարաց հատանել զգոյն երեսաց նոցա:

Ո՞վ յաժարութիւն կամաց, ո՞վ կամակարութիւն ազատութեան, ո՞վ իցէ բուն քան զքեզ, կամ ո՞վ սաստիկ և մեծազար իբրև զքեզ: Ո՞վ իցէ, որ քեզ յաղթեսցէ, կամ ո՞վ հնազանդել և նուանել զքու մեծ յաղթութիւնդ կարացէ, բայց երէ դու քեզէն քեզ յաղթես և անձամբ զանձն պարտեսցես ի պատերազմի բոյոյ հանգստեանցն»:

Բ. «Ո՞վ [երինջը] դասակագեղը, որ սիրեցէք զապանութիւն սայրասուր պոյն և մատեայր պատարագ կատարեալ՝ առանց երկմտութեան: Ետուք կաշառ զարին պարանոցացդ, զի պահեսցի անարատ կուսութիւն ձեր: Ետուք գրաւական զկեան մարմնառու, զի ապրեցուցէք զկեան ոգուց ձերոց: Սրբեցէք զանդամս ձեր մկրտութեամբ արեան ձերոյ, զի մարմին արեամբ սպիտականայ, և անարձան լուանալով սևանա:

Ո՞վ երինջը սուրբը, որ ոչ լծեայք ի լուծ ամուսնութեան, ետուք զպարանցու ձեր ի վար անդոց սպանութեան, զի մի՛ հնազանդեսցին մարմինը ձեր ի գործ երկրի ցաւոց և մեղաց: Խոնարհեցուցէք զփիզու ձեր ընդ լծով սպիտասուր պոյն, զի մի՛ խոնարհեսցին անդամք ձեր ընդ լծով սպականիչ ցանկութեանն: Սրհամարհեցէք զամար արտաքոյ և պասկեցայք, զի մի՛ աղտեղիցիք պղծութեամբ պղծոցն ի սենեակս: Տգեղացուցէք զպարտաքին գեղ ձեր յաշս տեսողացն, զի գեղեցկասցի ներքին գեղն առաջի ամենագիտին:

Դո՞ւք էք աղաւնիք միամիտք տաճարասունք, զոր վասն փափուկ մսոյն՝ արկին ի վերայ վարմ և կպան որտորդք պապականիչք:

Դո՞ւք էք ծիծեռունք ընտանասունք, որ ծոռողէիք քաղցրաձայն բարբոռք ի տաճարին սրբութեան, և մտին ալձք խարամանիք և հանին յիւրաբանչիր բունց:

Դո՞ւք էք ծննդունք շինամուտք ձայնակիցք մարդկան, և հասին վարուժակը պապականիչք՝ ցրուեցին յիւրաքանչիր երամոց»⁶:

Արդեն Ն. Անդրիկյանը «Բազմավեպի» էջերում հրատարակած Այութեարում մատնանշել է Արքահամ Խոստովանողի և Եղիշեի երկերի առանձին լրփագներում հանդիպող մի քանի, հաճախ բառացի, համբակնումներ, ըստ որում փոխ առևողը Եղիշեն է: Մեկ-երկուսի վրա էլ ուշադրություն է հրավիրել Գ. Տեր-Մկրտչյանը «Վկայք Արևելիցի» անձնական տպագիր օրինակի լուսանցքներում արած ՀՀումներում, որոնք բաղվածաբար մեջ են բերված գրի 1921 թ. հրատարակության Հառաջարանում (հեղինակ՝ Մերուպ Եպիսկոպոս Տեր-Մովսիսյան):

Օրինակ՝ «Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին» երկի Է եղանակի «Խցեք զաշս մարմնոյ վայր մի, և այժմ տեսանեք զյոյս մեր Քրիստոս» և «Փոքր համարիմք զանարգանս զայս և առ ոչինչ զցաս մարմնուս առ մեծ սէրն Աստուծոյ», արտահայտություններն, ըստ Գ. Տեր-Մկրտչյանի, կախում ունեն Արքահամի «Վկայութիւն սրբոյն Յմասնի եսիսկոպոսի, որ վկայեաց անթիւ բիւրուք յերկիր Արևելից» վկայաբանության «Խից զաշստ վայր մի և այժմ տեսանեւս զյոյս Քրիստոս» (էջ 139, տող 77—8) և «Փոքր համարիմք զմահի զոր սպանեքը ըստ կշոյ հասատոցն զոր անիմք առ Աստուծ,

⁶ «Արքահամու Խոստովանողի Վկայք Արևելից», էջ 66—69:

և առ ոչինչ զայտանումներ ըստ համեմատութեան սիրոյն, զոր աճիքը առ Քրիստոս» (Էջ 134, տող 8—11) հատվածներից, որ, թվում է, անվիճելի է:

Մեկ-երկու համեմետումների վրա էլ գիտնական ուշադրություն է դարձրել Ս. Գարագաչյանի «Քննական պատմություն Հայոց»-ի լուսանցքներում արած նշումներում: Այս վերջիններից էլ պարզվում է, որ Եղիշեն առավելապես հետևել է Աքրահամ Խոստվանողի գրելաձևին՝ իր շարադրանքի մեջ փոխադրելով նրա նկարագրական արվեստի շունչը: Շատի անմիջական, բառացի ու տառացի փոխառություններ, բացի վերևում բերված առաջին օրինակից, դժվար է մատնանշել, իսկ հոգեմարազատ տեղիներ՝ որքան ոգեկը: Օրինակ՝ Աքրահամ Խոստվանողի «Բթեցան երկաթքն ի հատանել, և նորա ո՛չ կասեցան ի սիրոյն: Վատեաց սորն ի կոտորել, և նորա ոչ թիրեցան ի ճշմարտութենէն: Լքան բազուկը կոտորչացն, և նորա ոչ յողդողեցան ի հաւատոցն» (Էջ 64, տող 5—8) այլարանական ու շրեղ արտահայտությունների փոխարեն Եղիշեն ունի համարժեք ու տարողունակ թևակիր խոսքեր: «Սորք սպանողացն բթեցան, և նոցա պարանոցքն ո՛չ ձանձրացան. աւարառուք ստացուածոց նոցա աշխատեցան, և աւարն օր քան օք անեցեալ բազմացաւ» (Եղինակ Գ, մոդեկանի հիացական խոսքերը քրիստոնեության մասին):⁷

Երկու քաղվածք ել մեջ բերենք Աքրահամի մատյանի այլ մասերից՝ նրա թարգմանության լեզվական կատարելության մասին վկայությունները սահմանափակելու համար.

Ա. «Այս բառասուն ամ է, զի պրկեալ կան մկանունք մեր ի գանս, և պարանոցք՝ ի սուր սուսերաց. զի կարկեցոյց զմեզ արդար դատաստանն Աստուծոյ առ ամարթի մերում, ըստ այնմ, զոր Երեմիա ասէ, թէ՝ Լուր լիցուք, զի Տէր Սաստուած կարկեցոյց զմեզ և արքոյց մեզ շոր դատութեան վասն մեղաց մերոց: Սպասեցաք խաղաղութեան, և չիք որեք խաղաղութիւն. և ակն կալաք բարեաց, և հեռացան ի մենչ, և ժամանակի բժշկութեան եղև մեզ տրտմութիւն: Զի եկ առեաւան յանտառէ մրժուալ և գազանացեալ ի վերայ սակաւատոր թուոյ հաւտին, կոտորեաց ի նմանէ որպէս և կամեցաւ, և ցրուեաց կորոյս ըստ ախորժեաց. զիսոյ և զմաքիս առ ոտն կոտորեք և զգառինս և զորոչս թունաւոր ճիրանամբք պատառէր: Եւ քանզի այծեացն սևացելոց ոչ մեղանչէր, բազում ոչխարք մարմառուք վասն ապրելոյ ի նմանէ ի սևացեալ գոյնն փոխեցան:

Ո՞վ ազատութիւն անձնիշխան, որ երկանէ զանձն ի պէսպէս գոյնս յոր և կամի: Եթէ կամի՝ ի տգեղութիւն, եթէ կամի՝ ի սպիտակս, և եթէ կամի՝

⁷ Եղիշենի Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին, Ե., 1957, էջ 177, 186 և 61: Գարագաչյանի Պատմության Դ մասի էջ 146-ում ընդգծված են Եղիշենի «Սուրբ սպանոցն արտեցան» բթեցան բառերը, իսկ լուսանցքում նշված է Աքրահամ: «Վկայք Արմենից»-ից դուսց զուգահեռները ըստորել ենք մենք:

Բթեցան (բրիլ) հազվագյուտ բառ է և նշանակում է՝ տկարանալ, թուլանալ, գոլմալ: Հնագոյն վկայությունները Եղիշենի և Ազարանձեղոսի մատյաններում են, ըստ որում առաջին մեր մեջքերած արտահայտությունն է, Երկրորդը՝ «Զի մեր սուր բթեցան, և նորա ոչ զարիթեցան ի մեռանելոյ» (Բատված 153, Դիլուդետիխանու կալսէր Ենթադրական համակը Տրդաս թագավորին Հայաստան վախսած դրվագներից)՝, ու երկուսն էլ, ինչպէս պարզ նկատվում է, վկայարանական դրվագներից են և առնշվում են Աքրահամ Խոստվանողին: Սուացինները տե՛ս ասկ՝ «Նոր բառոիր հայկազեան լեզուի», Բատր Ս, Վենետիկ, 1836, էջ 487, պահ 2, վերջինը, բնականարար, չի արձանագրված այնուև, որով նևտն Աքրահամի երկը Միթթարյան հեղինակներին դեռ անձանոյ էր:

ի թուխս. այլ գիտացէ, զի սպիտակն ի փառ և ի պարծաճն լինի, իսկ թուխս՝ ի կորանս և յանարդանս»:

Բ. «Ընդ այն ամենայն վիշտու, որ անցին ընդ մեզ, ընդ այն ամենայն չարշարանս, որ եկին ի վերայ մեր, չիք ոք, որ ամաշեաց, և ոչ՝ որ կասեաց ի մեղաց: Չիք ոք, որ զղացաւ և դարձաւ ի չարեաց: Չիք, որ կագի ընդ ագահութեան, և ոչ՝ որ դատ եղեալ կոռոի ընդ ապիրատութեան: Չիք ոք, որ ունչէ զցասուն, և ոչ՝ որ սաստէ ի կագ և խափանէ: Չիք ոք, որ ցածունէ զիակառակութիւն, և ոչ՝ որ մեղմացուցանէ զատկութիւն:»

Ա.Յ փոխանակ այսր ամենայն՝ ապաշխարութիւն նուազեաց, մեղք բազմացան, սէր շիշաւ, և նախանձ բորբոքեաւ: Խաղաղութիւն ամփոփեաւ, և թշնամութիւն տարածեաւ: Տուրք արգելան, ագահութեան սանձը արձակեցան: Անարքենութիւն զարացաւ, և արդարութիւն սպառեաւ: Ակնառութիւն համարձակեցաւ, և յանդիմանութիւն կարճեաւ: Մեծատունք ժանիս նոր սրեցին, աղքատք զգող աւագակութիւն ուսան:

Կարելի էր այսպիսի քաղվածքների թիվը տասնապատկել, իսկ այնունեւու մեջ բերել ոճական համապատասխանություններ Եղիշեի կամ Ղազար Փարպեցու երկասիրություններից, բայց ներկա պահին մեր խնդիրն այդ չէ, այլ Արքահամ Խոստովանողի թարգմանած մատյանի լեզվական արվեստի մասին ճաշակ տալը, որի համար վկալակոչված առաջին ու վերջին հատվածները միանգամայն բավարար են և անհերքելի ապացուցներ Գ. Տեր-Սկրտչյանի հրավացիությանը: Դրանք նաև պարտադրում են մեզ, թեկողն ցավով ու ամոթով, անդրադանալու գրական-գիտական առօրյացում խոր արմատներ գցած մի հոռի երևուցի, որ գրեթե անհաղթահարելի է դարձել: Մինչ օտարների արած չ չարածի մասին խոսելիս՝ դառնում ենք անսելիորեն շուալ ու առատանեոն, բայց հենց որ խոռը դառնում է հայ գործիչներին, հայոց բառ ու բանի տքնաշան ճախարակողներին, աններելի անտարբերությամբ ենք անցնում հրանց խնկելի հիշատակի և հանճարի փայլատակումների կողընդ, չենք մտածում արժանին հատուցելու մեր մտավոր ներկերի սերմնացանների անձին ու վաստակին: Ինարկե, խոռը նըրանց մասին չէ, որոնց անունները պաշտոնական գրանցում են ստացել «Մեծերի ցուցակում»: Այդորինակ հանդիրավի մոռացվածներից է նաև Արքահամ Խոստովանողն իր «Վկայք Արևելից» գրական-թարգմանական երկասիրությամբ, որը դասական հայերենի նշանակոր հուշարձաններից է:

Մեր դարավոր հարևանները՝ վրացիները, այդօրինակ հուշարձանները մահուց իրենց ազգային դպրության հիմնաքարեր են հոչակել, ինչպես, ասենք՝ հայերենից թարգմանված «Ծուշանիկի վկայաբանությունը», կամ էլ ուսութացի Ծոթայի՝ «պարսկենից վրացերենի վերածած» «Վագրենավոր» պուեմը: Թարգմանությունների նկատմամբ ակնածալից վերաբերմունք ունեն գրականագետները նոյնպես, որոնք Վասիլի Անդրեևիչ Ժոկովսկուն հայրենական բանաստեղծական լեզվի մեծագոյն վարպետների շարքն են դասել գերազանցացական Արևմուտքի գրականություններից կատարած բարձրարվեստ թարգմանությունների համար: Բայց ահա մենք՝ հայերս, որ տակապին միջնադարում թարգմանիչներին նվիրված հատուկ տոն ենք սահմանել, և Հայաստանյաց առաքելական եկեղեցին ամեն տարի, աշնանը, հոկտեմբեր ամսին, հանդիսավորությամբ նշում է այն, միաժամանակ կազմակերպելով ոխտագնացություն դեպի Օշական, որ հանգչում են Մես-

⁸ Արքահամու Խոստովանողի Վկայք Արևելից, էջ 24—25 և 44—45:

րոպ Մաշտոցի նշանակերը (Տօն Սրբոց Թարգմանչաց Վարդապետացն մելոց՝ Մեսրոպիայ, Եղիշէի, Մովսիսի Քերթողին, Դաւթի Անյալթ փիլիստիային, Գրիգորի Նարեկացոյն և Ներսիսի Կրայեցոյն), քար անտարքերություններ ցուցաբերում մեծատաղան թարգմանչներից շատերի վաստակն արժաքորելիս: Թվում է, ժամանակն է, որ հայ բանափրությունը պատշաճ հետևողություններ աներ և առարկայորեն ցուց տար, թե իրականում ո՞րն է հայ թարգմանչներից լուրաքանչյուրի ներդրումը ազգային մշակույթի գանձարան, նոր ծառայությունների ազգային ու յամաշխարհային նշանակությունը: Հնդիանուր խոսքեր, այդ առումով, հարկավ, ասվել է ու այն էլ շատ, բայց գիտական լորջ ու հիմնավոր եզրակացություններ են պետք: Հետեւ վարար, հասկանալի է միանգամայն, որ Արքահամ Խոստովանողի մեծ վաստակը թարգմանական արվեստի բնագավառում, որը հայ գրական լեզվին փառավոր հաղթանակ է ապահովել մեզանից ավելի քան տասնհինգ, Գրիգոր Նարեկացոց շորջ հինգ ու կես դար, իսկ Խորենացոց ու Եղիշեից տասնամյակներ առաջ, պիտի մնար առանց խղճամիտ գնահատման, մինչդեռ հատկապես այդ մատյանի ուսումնասիրությունն ազդակ կծառայեր հայտնագործելու մերձեցման նոր եզրեր, գցելու գրական-լեզվական նոր կամուրջներ վաղ և ոչ միջնադարի հին ու նոր հեղինակների միջև:

Արծրունյաց տան պատմությունից հայտնի է, որ Արքահամ Խոստովանողի մատյանը սիրված էր մասնավորապես Վասպորականում, այն էլ տասներորդ դարում ու Թովմա Արծրունու օրերում: Վերջինիս վկացությամբ՝ Արքահամը հյուսել էր նաև Վարդանանց հերոսամարտին մասնակցած Արծրունիների մասին մի համառոտ ասք («Եւ պատմի այս ի համառոտութեան Արքահամու Խոստովանողի», դպր. Բ, գլ. Ա), որը, ցավոք, ցարդ չի հայտնագործերված և որը հախորդել է Եղիշեին ու Ղազար Փարացուն:

Ինչ խոսք, Արքահամ Խոստովանողի այդ կորած մատյանի լեզուն ունը հարազատ պիտի լինեին «Վկայք Արևելիցին» և իրենց հետքերը թողած հետագա հայ մշակույթի վրա, որ, դժբախտաբար, անհնար է այլև երևան բերել: Բայց տասներորդ դարում, գոնե, ամբողջական էր և կարդացվում ու ձեռքից ձեռք էր անցնում Արքահամի մյուս, թարգմանական մատյանը, և վերջինիս ավանդների փոխանցումը այդ ու հաջորդ դարերի հայ մատենագիրներին միանգամայն հնարավոր է: Ուստի ճշմարտությանը չենք դավի բնավ, եթե իբրև վարկած առաջդրենք Արքահամ Խոստովանողի բանաստեղծական լեզվի ավանդների փոխանցման հնարավորությունը Նարեկան դպրոցի ճարտարան-բանաստեղծներին՝ Արամից մինչև Խոստով Անձնացի, մինչև Անանիա ու Գրիգոր Նարեկացիներ, վերջապես՝ «Վկայք Արևելիցի» ընթերցանությունը Գրիգոր Նարեկացու կողմից, որ պետք է բազում հոգեկապարար պահեր պարզեներ ինչպես դպրոցի մյուս բոլոր ներկայացուցիչներին, այնպես էլ իրեն՝ Գրիգոր Նարեկացուն:

Երբ ապացուցի միանգամայն հավանական ու հնարավոր այս վարկածը, այն ժամանակ ավելի պարզ կդառնա ազեցության այն ոլորտն ու շառավիղը, որ ունեցել է շքեղաշուր լեզվով հայացված՝ Արքահամի հոգեցունց մատյանը իր խորախորհուրդ դասերով, հոյսի ու հավատի, հաստատականության ու անձնագործյան ուսանելի օրինակներով:

Արքահամի երկին առնչվող մի անտեսված անդրադարձման մասին ևս կողեինք ասել երկու խոսք, մանավանդ, որ այն հասուն իմաստ ու հշանակություն ունի, և, ինչպես կարելի է մակարեւել առկա պատառիկից, հեղինակին գրավողը հուշարձանի գեղարվեստական կողմն է եղել: Դրա-

Այս բացի, եթե Միհիթարյան բանասերների համար Սքրահամ Խոստովանողն ու նրա Թարգմանած մատյանի ասորական սկզբանը յուրը շատ կողմերով մատչելի էին տակալին XVIII դարի վերջին տասնամյակներից, ապա պատկերը միանգամայն այլ էր արևելահայ իրականության մեջ: Այստեղ հուշարձանի բեկորները նկատում ու նրանց արժեքը գիտակցում են շատ պվիլի ուշ, XIX դարի 60-ական թթ. սկզբներին՝ առանց սակայն հետազոտությունների արդյունքները ժղովրդականացնելու: Ուստի հենց հայագիտության պատմության շահերից ելնելով արժեք այդ էշն անհայտության մեջ չփողնել:

Այդ արևելահայ բանասերը Միհրայել Նալբանդյանն է, որը 1864-ից սկսած խորհրդածությունների նյութ է դարձել Սքրահամ Խոստովանողի «Վկայք Սրեւելից» ժողովածոի բովանդակության ու ոճի հարցերը՝ ձեռքի տակ, սակայն, չունենալով մատյանից և ո՞չ մի պատահիկ և բավարարվելով լոկ Էջմիածնի մատենադարանի տպագիր ցուցակի մեջ Հրաշափառ տոնականի և մի քանի Շառընտիրների նկարագրություններում հաղորդվող խիստ ժամանակակից տեղեկություններով ու զանազան հատվածների խորագրերով⁹:

Ահա՝ դրանցից մեկը № 920/7 գրչագրի նկարագրությունից. «ԶԹ. Երանելոյն Սքրահամն Խոստովանողին ասացեալ ի Վկայան Սրեւելից. «Ակաց այսուհետև պատմել դողալով զշարչարանս, որ եկան ի վերայ ազգիս մերոյ»:

Ահա՝ մյուսը՝ № 916/3 գրչագրի նկարագրությունից «ՀԲ. Վկայութիւնք բազմաց մարտիրոսաց, որք ի Պարս կատարեցան հազարք հազարաց և բիւրք բիւրոց, զորոց այժմ սուու ինչ պատմեցից զարանց և զկանանց յանուանէ և ապա զբովանդակն, եթէ վասն որո՞յ պատճառի եղեն վկայք Քրիստոսի: Երանելոյն Եփրեմի յՍրեւելան գրոցն ասացեալ: Վկայութիւն բազմաց սորոց արևելեաց, որք կատարեցան վասն Քրիստոսի»:

Այս հույնը, փոքր-ինչ այլ խմբագրությամբ, կարելի է տեսնել նաև № 919/6 Շառընտիրի նկարագրության մեջ (հատվածներ ՀԵ, ՀԵ, ՀԸ) և այլն:

Իսկ Պետրոպավլովյան բերդի մենախցում արգելափակված քաղաքական բանտարկյալը, հասկանալի է, առավելապես երևակայության զորությամբ կարող էր թևածել բաղձակի լուծումների աշխարհ և այդ ընթացքում ծագող անվերջանալի վարկածները հանձեցնել լոկ ենթադրական ու ցանկալի վախճանի: Եվ այդպես էլ էր. Նալբանդյանին թվում էր, թե Սքրահամի մատյանը հայոց հին դպրության ինքնուրույն հուշարձաններից էր, ցարդ լույս աշխարհ չհանված և իր տեսակի մեջ եղակի երկասիրություն, որի մեջ, ինչպես վկայել է Թովմա Սրբութին, իրենց արտացոլումն էին գտել նաև Վարդանանց կիվների անցքերը: Իսկ վերջին հարցը մեծապես հետաքրքրում էր Նալբանդյանին, որովհետև նա պատրաստվում էր թարգմանելու Ղազար Փարավեցու Հայոց պատմությունը, և Սքրահամն, ինչ խոսք, կարող էր օգնել հավելումներ ու ճշգրտումներ կատարելու այդ դարաշրջանի անցքերի մեջ, եթե միայն երկի բնագիրն ամբողջությամբ ու անկորուստ հասած լիներ մեզ:

Բայց եթե 1865-ի առաջին ամիսներին Նալբանդյանի ձեռքն է հասնում Վենետիկի Միհիթարյանների հրատարակած «Սովիերք Հայկականք» մատենաշարի հ-րդ գրքովկը՝ լույս տեսած դեռևս 1854-ին, որը տեղ էին գտել

⁹ Տե՛ս «Մայք ցուցակ ձեռագիր մատենից գրադարանի արքոյ Աթոռույն Էջմիածնի» աշխատավորդներ՝ Դամելը վարդապետ Շամբագարյան, Անդրեաս ու Սուրբաս վարդապետներ, Հակոբ Սարկանից և որիշներ, Բրատարակիչ և խմբագրող՝ Հակոբ Կարենյան, Թիֆլիս, 1863, էջ 108, 88, 101 և այլն:

Սքրահամի մատյանին առնչվող երկու հատված՝ «Պատմոթիւն վարոց սըր, բյան Շմատնի եպիսկոպոսի» (բնագրի խորագիրը՝ «Վկայութիւն Սրբոյն Շմատնի եպիսկոպոսի, որ վկայեաց անթի բիորու երկիրն Արևելից ի ծափելոյ Պարսից արքայի») և «Ծառ ի վկայսն Արևելից» (ահանուն բանասերի աշխատամիրությամբ, հակիրճ առաջարանով ու ծանրություններով, իսկ Անանունն իրականում Դ. Ալիշանն էր), ուշադիր ընթերցանությունը Նալբանդյանին ենթադրությունների աշխարհից իշեցրեց իրական գետնի վրա. Խախտվեցին արդեն ձեռք բերած նուա համոզումները, և ծնվեցին նոր երկմտություններ, որոնք ցրելու համար 1865 թ. մարտի 22-ին Նալբանդյանը մի ընդարձակ համակով դիմում է Վենետիկ, որից, ցավոր, մեզ հասել է միայն մի հատված, այն էլ նախ' այլոց արտագրությամբ, իսկ հետո՝ վերջինն էլ, մեջ բերած Ե. Շահազիզի «Միքայել Ղազարյան Նալբանդյանց» գրքում:

Դժվար չէ կոահել բանի իսկությունը հիմնավորապես իմանալ ցանկացող մարդու անհամբերությունը, ինչպիսին Նալբանդյանն էր համակը գրելու պահին, որը դեռ վերշնական պատասխան չտուցած լուրջ տագնապ էր ապրում իր երեկով պատրանքների խորտակման համար:

«Նալբանդյանը մասնավորապես գրում էր.

«Գիտեմ, նամակս շատ ձգվեցավ, և Ձեզ էլ երկար տաղտկություն, բայց կենդանի է Տերը, և կենդանի է անձն Ձեր, թե թողից զՁեզ, մինչև այս վերջին խոսք էլ շատեմ: «Սովերաց» 20-<-րդ> գրքովկը բովանդակում է Ս. Շմավոնի վարքը և Ներքող ի վկայսն Արևելից: Ազդարարության մեջ ասվում է. «...<Ներքող> կամ զմուրս ի վկայսն Արևելից, որոյ հեղինակ Ասորի անշուշտ» և այլն: Եվ ծանրությանց մեջ, ծան. 4, այսպէս. «Յէջ 25. անոն քաղաքին, որ պակասի ի մերում թարգմանութեան, ի բնագրին Լետան գրի» և այլն: Էջմիածնի Ծառընտիրներից մինի մեջ՝ Հրաշախատ տօնական, գրված 1456-ին, հատված կա այս Ողբից այսպիսի վերագրով. «Երանելույն Աքրահամու Խոստվանողի ասացեալ ի վկայսն Արևելից»: Որիշ Ծառընտիրների մեջ ևս նոյն Ողբի զանազան հատվածները, ցիր և ցան, դարձյալ վերագրվում են Աքրահամու Խոստվանողին: Մինչև ձեր տպածը տեսնելը մենք կարծում ենք, թե այդ հատվածները դուրս են եկած «Արևելեաց» գրքից, որ Թովմա Արծրունի հիշում է պարզապես, այսինքն՝ Արևելեաց գիրքը, բայց վերջը մեջ բերած ձեր բանքը դղորեցին մեր հավատը, ուստի, եթե անարժան շիամարիք ձեր համակի մեջ բանի մի տողով տուցանել մեր տկարությունը, համեցե՛ք:

Ս. Բնագիր ասելով (ծան. 4) ի՞նչ եք հասկանում, ասորերե՞նը. Եթե այն՝ և եթե Լետան¹⁰ խոսքն էլ այնուղից եք առնում, ասել է, թե բնագիր ասորերենը կա ձեր ձեռքում, կամ գեթ ուրիշի մոտ, բայց, վերշապես, ո՞չ անհայտ ձեզ, որովհետև բաղադրի անոնը այնուղից է հիշում ծանրությունը:

Բ. Լիակատա՞ր է բնագիր ասորերենը, թե՞ նույնպես թերի, և ի՞նչ վերագիր ունի:

Գ. Ձէ՝ կարելի արդյոք ասորերենը հայերենից թարգմանված ենթադրել, իթե իսպատ անընդունելի համարել Ծառընտիրների մեջ այդ բանը Աքրահամին վերագրվելը¹¹:

¹⁰ Տապարված է Լիտան, ուղղում ենք ըստ «Սովերքի» (Դ, էջ 158):

¹¹ Ե. Շահազիզ, Միքայել Ղազարյան Նալբանդյան, Սոսլվա, 1897, էջ 153—154:

Հասցեատերը, Ե. Շահագիզի ասելով՝ հայր Աթանագինեսն է, իսկ այդ անունով ծանօթ միակ Մխիթարյանն այն տարիներին հայր Ա. Ղափտանյանն է (ծննդա 1836-ին և կուսակրոն քահանա ձեռնադրյալա 1859 թ. ապրիլի 24-ին), որը, ինչքան հայտնի է, գրական-քահանահրավան աշխատանքներով չի գրալիկ (Մխիթարյան հրատարակությունները լուս են այդ մասին) և հագիւ թե Մ. Նալբանդյանի հարցամիտականը քավարարության տար, եթե միայն 1865-ին Ս. Ղազարի գրավաճառանոցի գործերը նա չէր տօքինում, հակառակ պարագայում՝ հասցեատերը որիշ մեկը պիտի լիներ, թերևս, ինեւ «Սոփերի» աշխատասիրող Ղևոնդ Ալիշանը, որի ինտ Նալբանդյանն անձամբ ծանօթ էր և որին շատ բարձր էր գնահատում որպես անհատ, քերթող ու գիտնական: Մրանք տարակուսանքներ են, որ միայն Մխիթարյաններն ու նրանց դիվանը կարող են ցրել, նաև՝ նամակի բնագիրը (եթե պահպանվել է), որովհետև մեր տևական հարցումներին միշտ միևնույն պատասխանն ենք ստացել: Սր. Ղազարի վաճրի դիվանում Մ. Նալբանդյանից նամակներ չկան:

Ստացե՞լ է արդյոք Նալբանդյանն այս հարցերի պատասխանը, դժվարանում ենք ասել, սակայն ստանալու դեպքում էլ բովանդակությունը դըժվար չէ կուսիւլ:

Ա. Արեւելյան վկաների վարքերի բնագիրն իսկապես ասորեն է, իսկ Ծաղընախիներում Արքահամին վերագրվող հատվածները՝ թարգմանություն, ըստ որում ասորեն բնագրի խմբագրություններից մեկը լատիներեն կից թարգմանությամբ տպագրվել է տակալին 1748-ին, Հռոմում, ճշանավոր արևելյագետ Ե. Ասենանի աշխատասիրությամբ, որից և օգտվում էին Մխիթարյան բանասերները, նաև՝ Պ. Ալիշանը, մասնավորապես Ծմավոնի վարքի թերի մասերը վերականգնելիս:

Բ. Ասորեն բնագրին ևս ուներ թերիներ, և հայ թարգմանությունը մեծապես լրացնում էր նրա պակաները: Այդ վերաբերում է առաջին հերթին Նալբանդյանին հետաքրքրող Ներբողին կամ Ողբին, որի սկիզբը (ամբողջ բնագրի մոտ մեկ երրորդը) չի պահպանվել, և Արքահամի թարգմանության օգնությամբ միայն կարելի է այն վերականգնել:

Գ. Ասորեն բնագրի՝ հայերնենից թարգմանված լինելու վարկածը, որ ենթադրում էր Նալբանդյանը, որքան էլ գայլակդիչ, այնուամենայնիվ գիտականուն անապացուցելի է ու անհոդ:

Վերջացնենք՝ անցյալի հայ բանախրական գրականության մեջ մեր որոնածը վարքագրական-վկայաբանական հուշարձանների գեղարվեստական յուրահատկությունների բացահայտման փորձերն են, որոնք այս դեպքում էլ մարմին չեն ստանում: Պետք էր սպասել շատ տասնամյակներ, մինչև հրապարակ իշենք մեծ հայագետ Մանուկ Արելյանը: Եվ ինչպես այլ, նաև այս դեպքում առ ճանապարհ է բաց անում, հիացնում իր խորաքանաց մորի փայլատակումներով:

Հայոց բազմադարյան մատենագրության հետազոտողներից Արելյանը, որս Էղթյան, առաջինն է, որ վկայաբանություններն ընկալել է որպես գեղարվեստական գրականության վիպատանական սեղի որովան տեսակ և վերապատմությանը ընդհանուր հյուպածքի մեջ, այն էլ՝ խորհրդադիմ իշխանության տարիներին և հակակրոնական քարոզության պայմաններում, ուշամերքին պարարի և օտար բռնապետության դեմ կրտսա-քաղաքարական-կուսակցական ան-

վերջանալի մարտումների բովում ձևավորված ստեղծագործությունները, այնպէս էլ նմանաբնույթ կամ նոյն հանգամանքների թեղադրանքով կյանքի կոչված հնագույն թարգմանական երկերը (ասորեկենից և հոնարենից): Առաջնամբ բնուության է առել մասնավորապես երեք ինքնուրույն վկայարանական հուշարձան՝ ստեղծված V—VIII դարերի ընթացքում. Թադեոս Առաքյալ և Սանդուխտ Կույս, Ծովածիկի Վարդենի և Վահան Գոյթենացի, որոնց գաղափարական-գեղարվեստական հատկանիշների բացահայտումը կատարված է բովանդակության վերապատճան հետ զուգընթաց՝ անհրաժեշտության դեպքում եզրահանգումները ամրապնելու համար այս կամ այն հուշարձանից բաղկանված ծավալու հատկանիշները իր իսկ աշխարհաբար բարգմանությամբ: Այդպես առավել դյուրընկալելի էին դառնում վկայարանությունների գեղարվեստական հորինվածքի ընույթը և եերոսի բնավորության ձևավորման ընթացքը, վերջինն կամքի, հավատի ու համոզումների դրսւորման էական մանրամասները, որոնք, ինչպէս գիտնականն է նշում, հոգեբանական առումով էլ պատճառաբանված էին:

Վկայարանական երկերի մեջ ճիշտ որ բոցկլսում է հահատակի ոգին, այն էլ անսովոր ու նոր անհատի ոգին, որը մերժում է ամեն կարգի անձնաշնորհում և «ձգտում է խոնի ու համոզմունքի ազատության»¹²: Մի դեպքում այդ պատումների մեջ ծավալվում է մի անունելի «ընտանեկան դրամա» բրիստոնյա կնոշ և հալատափոխ ամուսու միջն, որ ցուցադրվում է ահավոր դամանությունների արտելի Ալբարագության խորքի վրա, դամանություններ, «որոնց ենթակա էին բոլով և անօճնական կանայք», իսկ բոնակալ ամուսիններն էլ կատաղում էին «Արա համար, որ իրենց կանայքը չին լսում իրենց և անկախ էին մտածում հաստատ մնալով իրենց համոզմունքին, իրենց իդեալին»¹³: Մյուս դեպքում հաղթում էր գաղափարը, բայց տանջում էր հոգին: Հերոսը թեական ծառանում է «մտավոր ստրկության» դեմ, պայքարի մարդ է, բայց նա դժբախտ է իրականում և յուրովի: Ոչ որ բարյական աշակցություն ցույց չի տալիս: Նա «ուզում է ապրել, մարդավարի ապրել իր հայրենիքում, իր սեփական համոզմունքով, բայց չի կարողանում»: Հալածանքների ու տանջանքների վերջը չի երևում: «Նա հայածում է և՛ իր խղճից, և՛ արարացոց տերությունից, և՛ հայ հասարակությունից»: Եվ այս բոլորն այնքան են շարունակվում, որ Արան այլ եկը չի մնում, բայց ապավիճել հակատագրին և կամավոր հանձնվել բոնակալի ձեռքը: Իսկ անօրենների դատավճիռը հայտնի էր՝ հահատակություն...¹⁴: Ահա՝ թե ողբերգական ինչ շերտեր է պեղում վկայարանական մերուի հոգում Մ. Աքելյան:

Ուշագրավ ուրիշ շատ հկատողություններ ել ունի գիտնականը: Օրինակ՝ Ծովածիկի վկայարանության կապակցությամբ հավաստելով, որ «այս պատմվածքի նյութը երևակայական բան չէ, այլ առնված է իրական կյանքից»¹⁵, նա մի կարևոր հայտնություն էլ է առնում. «Այդ տիպի երկերն ընդունակ են մնում մեր գրագիտներին, իսկ դրանք մեր նիս

¹² Ակադ. Մ. Աքելյան, Հայոց նիս գրականության պատմություն, գիրք Առաջին, Ե., 1944, էջ 462:

¹³ Նոյն տեղում, էջ 354:

¹⁴ Նոյն տեղում, էջ 462:

¹⁵ Նոյն տեղում, էջ 344:

գրականության վեպերն են՝ գեղեցիկ արվեստով հորինված: Շուշանիկի պատումի մեջ էլ կան, հարկավ, վկայաբանական ընդհանուր մոտիվներ, ինչպես են՝ աղոթքներ, ներոսի նշանավոր ծագում, մանկական տում և բարեկրթություն, չարչարանք, բժշկություն, հանդիսավոր քաղում և այլն: Բայց դրանց մեջ չեն այս պատումի բուն արժեքը, այլ իր թեմայի և արվեստի մեջ»: «Այս վկայաբանությունն իսկապես առաջին և գեղեցիկ վիպակն է կնոջ ազատագրման մասին հայոց գրականության մեջ»¹⁶: Իսկ Վահան Գողթնացու առնչությամբ՝ «Իրական կյանքի պատկերով, ներոսի հոգեբանական ճշությամբ և բնականությամբ այս փոքրիկ պատմվածքը շատ գրավիչ և ազդու է: Այսուեղ, ինչպես ժողովրդական վեպի մեջ, ամեն ինչ հասարակ ոճով պարզվում է միայն պյուտով և գործողությամբ»¹⁷:

Արելյանի վերոհիշյալ բացահայտումները խիստ կարևոր են հայոց գրականության սեռերի ու տեսակների զարգացման պատմության հետազոտման համար, իբրև կողմնորոշող դրույթներ, քանի որ վկայաբանություններն ու նրանց ներումները՝ հավատի, հստոգումի ու խղճի այդ ասպետները, նենց այն առողջ սաղմերն են, որոնցից հետագայում ծլարձակեցին ու վերջնականապես ձևափորվեցին մեր վեպերն ու վիպակները և վերջիններիս հայրենակը ու գաղափարատիպ հերոսները:

Արելյանի «Հայոց հին գրականության պատմության» հրապարակումից հետո հայրենի գրականագիտական միտքը երկար ժամանակ դադար առավ՝ հրապարակ չհանելով այդորինակ և ո՞չ մի նոր աշխատություն: Ըստհակառակը, այն որոշակի նահանջ ապրեց: Տեղաշարժ նկատվեց միայն վերջին տասնամյակներում ու այն էլ այնպիսի հետազոտողների մոտ, որոնք վերադարձ կատարեցին Արելյանի գծած ճանապարհը: Արծարծվող թեմային առնչվող երկու գիրք է հրատարակվել, որոնք նախապես պաշտպանվել են որպես թեկնածուական ավարտաճառեր: Սոազինը Քնարիկ Տեր-Դավթյանի գիրքն է՝ նվիրված «XI—XV դարերի հայ վարքագրությանը»¹⁸, իսկ երկրորդը՝ Լ. Տեր-Պետրոսյանի «Արքահամ Խոստովանողը և նրա «Վկայք Արևելիցը» (բնագրագիտական հետազոտություն)»: Բայց դրանց վերլուծությունն արդեն մեր նպատակից դուրս է:

¹⁶ Նով տեղում, էջ 353, 354:

¹⁷ Նով տեղում, էջ 462:

¹⁸ Բացի նոյնանուն մեմագրությունից (1980), Ք. Տեր-Դավթյանը ուսերեած թարգմանությամբ հրապարակ է հանել «Պեմյանկի արմանակ ագրոգրաֆի» (Վայուս 1, Ե, 1973) ժողովածուն (Մատենադարանի հրատ.), որի ողիղ կեսը հատկացված է վկայաբանություններին՝ օգտագործելով «Սովերը նաևկալանք» (Բ. Թ, ԺԳ, ԺԹ) և «Հայոց նոր վկանը» հետինակավոր հրատարակությունների բնագրերը, անհրաժեշտության դեպքում, հարկավ, ըստ ձեռագրերի կատարելով առանձին սրբագրումներ: Թարգմանված են՝ Ուկրանց, Սովետականց, Ասումյանց, Շուշանիկի, Վահան Գողթնացու, Խոսրով Գանձակեցու, Հովհաննեսու և այլոց վկայաբանությունները, ընդամենը 11 երկ, յուրաքանչյուրին կցելով ներածական ակնարկ ու ծանոթագրություններ, իսկ ժողովածովին՝ ընդհանուր նախարան:

Հ Ա Վ Ե Լ Վ Ա Ծ

Գ. ՏԵՐ-ՄԿՐՏՉՅԱՆԻ ԵՎ Հ. ՏԱՅՑԱՆԻ ՆԱՄԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ «ՎԿԱՅՔ ԱՐԵՎԵԼԻՑ» ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ ՀՈՒԺԱՐՁԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ

Սույն ուսումնասիրության մեջ արդեն խոսկ երկու մեծ հայագետների մտադրության մասին՝ համատեղ շանքերով պատրաստելու և լուս աշխարհ հանդող Արքան Խոստովանողի թարգմանած «Վկայք Արևելից» գրական հուշարձանը՝ հայոց ձեռագրերում պահպանված բոլոր հատվածների ու պատառիկների ընդգրկմամբ և բնագրային տարրերությունների ու այլընթերցումների մանրամասն հաշվառմաք, կցելով հատորին հանգամանակից ուսումնասիրությունն և հետագա ժամանակներում, այլոց կողմից, վկայարանական նոյն մատյանից կատարված նոր թարգմանությունների բնագրերը, որոնք նոյնական գրավել էին հայագետների ուշադրությունը:

Մրագրված աշխատանքը մեզ անհայտ պատճեռով մնաց անկատար: Գ. Տեր-Մկրտչյան կարողացավ միայն իր ուժերու հրականացրած էջմաննում տպագրության հանձնել, որը շարվեց ներկա դրասկրիֆին, սրբագրվեց, բայց պատրաստ մամուլները լուս աշխարհ շինավեցին, որովհետև ուսումնասիրության ավարտը ձգձգվում էր, մինչև որ հեղինակը ինքն էլ վախճանեց, իսկ արդեն գրված մասերն ու ատաղճները անհնացան: Համեմանալինեպս, Անրիպիտս Մատուցյան մատենադարձանու պահվող հրա բողոքներում դրանք բացակայում են, թեպես 1920—1921-ին անկրորդա գոնվում էին Մեսրոպ Խովհանոսի ձեռքին, որը «Վկայք Արևելից» բնագրերի մասը (այսինքն՝ վահոց ուսուգրված մամուլները) լուս ընծայեց առանձին գրքով՝ իր կողմից ավելացնելով մի հառաջարան, որ օստագործված են հիշյալ հուրեկը:

Բայց Մեսրոպ Խովհանոսին անձանոր է մնացել երկու հայագետների մտադրությունը: Արագիտով՝ այժմ այդ մեծ ձեռնադիման առաջին փուլի մասին հավաստի տվյալներ կարելի է քաղել միմիայն հայագետների փոփառական համակներից, որոնցից պահպանվել են ընդամենը 3-ը. մեկը, Տաշյանին՝ Մատենադարձանու, իսկ մյուս երկուսը, Գ. Տեր-Մկրտչյանի գրածները՝ Վիեննայի Միհեարանների դիվանում: Տաշյանի նամակն անցյալներում օգտագործել ենք մեր հրապարակումներից մեկում («Արքեր», 1974, № 1, էջ 79—81), իսկ Գ. Տեր-Մկրտչյանին լուս են տեսնում առաջին անգամ ու, թերևս, առիթ ծառայեն կորած նյութերի հայտնաբերման համար, որ հայագիտության համար իսկական տոն կիմնի:

Պ. Հ

1. Գ. ՏԵՐ-ՄԿՐՏՉՅԱՆԸ Հ. ՏԱՅՑԱՆԻՆ

7 հունվարի 1895, Էջմիածին

Մեծարդոց տեր և հարգելի բարեկամ.

Արդեն մի տարուց ավելի է, ինչ որ հաջողվեց ինձ մեր մատենադարանի երկու մեծ հառընթերություն գտնել Մարուքայի (ըստ հայ ձեռ՝ Եփրեմի) սրացչելի թարգմանությամբ (Արքան Խոստովանողի) ճառերի գրեթե ամրողը: «Սոփերքների» ի հաստորի Արևելյան վկայից ճառը և Ծմագոն եպիսկոպոսի վկայարանությունը, անշուշտ, Զեզ քաջաձանը են: Այժմ ունիմ ես այդ վերոհիշյալ երկու երկարագիր ճառընթերների (ըստ իմ որոշակի ժամանակության) և «Սոփերքի» ի հաստորի մանրամասն թաղատությամբ «Ի վկայն Արևելից» մեծ դարու) և «Սոփերքը» ի հաստորի մանրամասն թաղատությամբ «Ի վկայն Արևելից» մեծ նառը ամրող («Սոփերքը»), ինչպես գիտեք, ունի պակասներ սկզբից, միջում և վերջում), ճառը մարող («Սոփերքը»), ինչպես գիտեք, ունի պակասներ սկզբից, միջում և վերջում), ճառընթերի վկայարանությունը, Մելքոն եպիսկոպոսի վկայարանությունը նոյն ընտիր թարգմանությունը, Մելքոն եպիսկոպոսի վկայարանությունը:

նանությամբ և հնալեյալ վերնազրով. «Վկայութիւն Մելքսի եպիսկոպոսի և Արքահամա նրիցու և Սինէի սարկաւագի ի սկզբանէ հաղածանաց մերոց.— Ծառերից թէպէտ և ո՞չ իմ բաւական, պատմեցից թէպէտ և ո՞չ իմ հասու...»: Ըմատնի բուրերի վկայարանությունը նոյն ըստիր բարգմանությամբ. «Վկայութիւն քեր Ըմատնի Թերքուա և ըստն իրոց և ադամանուն»: Բարբաշնենի վկայարանությունը. «Յամի վեցերորդի հաղածանաց մերոց Կին չարախաւաս զբարբաշնենա եպիսկոպոս Սղակա և Տիգրոն բաղարի առաջի արքաի»:

Վերջապես՝ մի փոքրիկ, վերջին գործ, հնալեյալ վերտառությամբ. «Վկայութիւն վկայցըն, որ սպանան ուրեք ուրեք ի ձեռաց մոզաւտացն, թո՞ղ որ ի դրան արքունի կատարեցան»:

Առանց ունենալու Սահմանու բարատարակությունը, ոչ էլ Արևելյան վկաների ֆրանս. բարգմանությունը և կամ մի այլ բարգմանություն, սակայն հիմնվելով միայն լեզվի վրա, բոլորովին ապահով եմ, որ այս բուրոք մինմանու գրչի՝ Արքահամ Խոստովանողի բարգմանություններն են, թեպէտ և իմ ճառընտիրներուն միասին չեն դրված, այլ դրված են զանազան մասերուն:

Կա և մի համառու հառաջարան մեծ ճառի սկիզբը, որի մեջ նիշված են համատակների անունները: Ինձ թվում է, որ այս հառաջարանը նոյն հնությունը չտնի, ինչ որ վկայարանությանց բարգմանությունը, այլ համեմատարար նորագոյն ժամանակի գործ է:

Այս հառաջարանու հիշվածներից պակասում է ինձ՝ Ծահողութ վկայությունը.— «Զի և զԾահողութ փոխանակ Ծավոնի կատարեցին սրով Ծ արամբը ի և ապրիլիի»: Թե Ծահողութ վկայարանությունը կար համանականում, այս մասին վկայութ է և Թ<ովմա> Արձունին: Ակիֆիմյանց հիշտավորությունը չկա այս հառաջարանում, և ոչ էլ Արանց վկայարանությունն են գտնում իմ ճառընտիրներուն: Վենետիկի բարատարակությունը, անշուշտ, հիմն բարգմանությունը չէ, եթե միայն կար հիմն բարգմանությունը: Հասացարանում հիշվում է, վերջապես, և Յաղագուխս: «Վկաէ և Յաղագուխս, անուանի կին և բարեպաշտ, և այլ կանայք ի և մայիս լամսու»: Սա, բարձեմ, նույն է իմ ճառընտիրներուն նոյն Ֆեղանուխսի մեջ: Սակայն այս վերջինին վկայարանություն մասին ապահով չեմ, որ Արքահամ Խոստովանողի բարգմանությունը լինի, թեն ըստիր և հիմն բարգմանությունը: Այս և սրա հետ Մելքսի մի երրորդ բարգմանությունը ուրիշ ճառընտրից կարելի է դնել իրեն հավելված վերնում հիշվածներին: Իմ մոտադրությունն էր այս բոյորը հրատարակել էշմանուն: Սակայն, ինչպես երևում է, այդ դեռ երկար ժամանակ հաջողվելու չէ: Մյուս նոդմից հիմանդ մարդ լինելով, կարող եմ վաղը, մյուս օրը մեռնել, և ո՞վ գիտե, թե իմ թոքերը ի՞նչ վիճակի կենարուկիմն: Ուստի մտածեցի դիմել Ձեզ և խնդրել «Հանդիսի» հյուրափորությանը: Այս բոյորը «Հանդիսում» հրատարակել, բայ իս, հարմար չէ: Կարելի է հայապես միմիայն բոյորմին նոր հատվածները լուս ընծայել «Հանդիսում» իմ մի հոդվածով Արքահամ Խոստովանողի մասին և ապա, արտապուրացան ժամանակ, դնել ամրոջը: Բաղդատառությունը շատ մահրամասն է, դրված են բոյոր ընթերցվածները, նաև՝ լոկ ուղագրական: Եթեն «Հանդիսի» խմբագրությունը համեն այս իմ առաջարարության, իմ շատ ցանկալի էր, որ գործի կատարելության համար հանձն առնելիք Պուր աստրական ընագրի մեջ բաղդատակ և Ձեր հնուս տեղակություններով զարդարել հրատարակությունը, անշուշտ, ծանոթությանց և բացատրությանց տակ հնելով Ձեր աստորագրությունը: Այսպես որ հրատարակությունը կիննի երկուսին գործակցությունը: Օրեւ վարձատրություն չունեմ պահանջելու, և արտատպությունը կիննի «Հանդիսի» սեփականությունը, միայն կիանիք, անշուշտ, մի բանի օրինակ արտատպությունից ուղարկելի ինձ՝ բարեկամներին և մասնակտություն բաժանելու համար: Խնդրեմ, ինձ շուտափուր տեղեկացնել, թե արդյոք «Հանդիսի» խմբագրությանը ընդունելի» է այս իմ առաջարկը: Զգանար նաև Ձեր խորհուրդները գրել ինձ ապահով մի կարևոր գործի հաջողության համար: Այս հրատարակությունը, բայց յոր ներքին արժանավորությունից, հուսով եմ, որ շատ բան պարզեցու է և մեր դասական գործներից մի բանիս վկարերությամբ (Եղիշե, Գուտ, Փալսոս և այլն): Թարգմանության լեզվի շրեղությունը, ապահով եմ, որ Պուր ինձնից լավ եք զնահատելու: Մյուս վի:

Հրատարակության շափի մասին զաղափար տալու համար ասեմ, որ Մելքսի, Բարիմին, Թերքուի, Յեղանդուխսի վկայարանությունները և Վերջարանը միասին հազիվ Ծավոնի վկայարանության շափի: Մեծ ճառի նոր գտնված հատվածներն էլ մեծ չեն: Ինչ մրած լինելով:

Հուսով եմ, որ նամակս կարողանար վերծանել, գրում եմ մահնում պառկած՝ փոքր-

Ներփակյալ ուղարկում և երկու փոքր հատված Սեկոնդոսից՝ Զեր գերմ<աներեն> բրատարակությանը կարող են նարկավորի, երես սպական ուշ չէ: Երկրորդ հատվածիկը, կարծեմ, Սեկոնդոսի վարքի պակաս մասից է:

Ընդունեցեր սրտագին բարևներս և հանցեր նույն հաղորդել Հ. Գալեմքարին:

Խ. ծ. Գալուստ Տ. Մկրտչյան

2. Հ. ՏԱՅԹԱՆԸ Գ. ՏԵՐ-ՄԿՐՏՉՅԱՆԻՆ

Վիճակ, 11 դետրվար, 95

Մեծարգոն բարեկամ.

Զեր 7 հունվարի գրությունն զիս շատ ուրախացուց: Մարութափ վրա արդեն երեք տարի կա, որ շատ աշխատած էի և մեծ պաշար նավարած համեմատությանց և ուրիշ ծառագրությանց, թիվ ատենեն այլ վերջնական բան մը գրե կուգիի (—այս իմաստով եր «Հանդիսի» հունվարի թվույն մեջ Եղիշեի մասին տրված խմբագրական ծանությունն—): Մեկ բան կը պակասեր ինձ տակախին. բնագիրը լիակատար չունեմ՝ չկրնալով տակապին Փարից այցելել, ուր երեք հատոր նևկա Ծարքանտին մեջ կա. միան բանի մը հատակոտոր ունեմ Վեճենուկնեն: Ուստի ապահով կրնար ըլլա, որ մեծ միրով կ'ընդունեմ Զեր առաջարկը և ի միասին կը կատարենք ամեն բան: Դուք եք բնագիրը լրացներ և Զեր բնագրությունը գրեք, կրնար խավել. ևս այլ կը շանամ ավելցընել Փարիզի ձևագիրն ընտիր ընթերցնություն՝ համեմատությամբ ատրի բնագրին, և ուրիշ դիտողությունը, թերևս նաև Զերինին կրնամ կցել Ենթաճություն մ'ալ իմ կողմաննեւ. Վերջապահ կրկուքնու ալ աշխատությունը կրնա բովերով կենալ և լրացնել գործքը. տպագրության ընտրության մասին կրնար ամենոց ըլլա:

Միայն մեկ-երկու բան կա դիտելիք: Ըստ իս' լավ չէ, ինչպես գրած էիր, «Հանդիսի» մեջ դնել գոնեն նոր մասերը: Պատճառն նետևալի է. մենք սկսած ենք բնահատական հրատարակությանց շարք մը՝ մեծադիր և օրինակելի ոնու: Առաջինն է Գայրենանի Խորհրդանատուցընը, որուն մեջ 15 բնագրեն ավելի պիտի զա. ասկէ արդեն 7 թերթ տպված է, մնացածը, կը հուսամ, այս տարի կ'ավարտի: Ավարտած կ'ըլլար շուտով, բայց այժմ ամեն ճգամքը հառաջ կը տարիի մեր ձեռագրաց ցուցակը, որ շատ մեծ հատոր մը պիտի ըլլա և հազարի նոյնեմբերին կ'ավարտի: Ուստի ամեն ետքը կրնա կարգը Մարութափ ըլլա, որ նոյնպես մեծ հատոր մը կ'ելլեն:

Այս վերջին կետը դիտություն մ'ընել կու տա: Գրած էիր, որ Զեր գտած մասերը շատ մեծ չեն: Եթե այնպիս է, կարծեմ թե, Էջմիածնի ձեռագիրը լիակատար պիտի չըլլան: Մեծ Շատին պակաս մասերը գրեն հավասար են «Սովերբի» հրատարակությամ. թէ՝ այս ճափին և թէ՝ Շամպոնի, Ազատի և Գոշքաղոյի վկայաբանությունըն է (—որ անկախ են իրարմէն—) շատ պակասավոր են, դդախտաբար, ինչպես ասորին կը ցուցնեմ: (—Հոգ չէ, որ Ասսեմանի չունիր և ո՛չ ալ գաղիերեն բարգմանությունն. կա գերմաներեն ալ.— ասոնք ալ բոլորովին լիակատար չեն. լիակատար է, միան Շատին սկիզբը պակելով՝ Բեյյո-ի հրատարակությունն ի Փարիզ, 1891): Որչափ կրցա գտնել՝ Փարիզի ձեռագիրը, զննեն, Շատո լիակատար ունի:

Ավելի դժվարին է վկայաբանությանց խնդիրը: Արրանանու բարգմանությունն շատ ինչ ժամանակ բարեկամ ըլլարու է. Հայմանվորըներու և Շառընտարաց մեջ կը բափառին շատ մը կտորներ, բայց շատ փոխված ու ալլազած, և այն ընտիր լեզուն աղավաղած: Ըստ իս ասոնք ալ պետք չէ մոռնալ հրատարակության մեջ՝ գոնեն մանրագիր յենուով իբրև ուրույն խմբագրություն: Մասնոր է Զեր, անշուշա, որ ասոնք մեկ բանի նոր ալ բարգմանությունն են (—անշուշա, հինն դժվարացնու ըլլալով—) հայր Գագկս և Գրիգոր սարկավագին ձեռոր:— Զեր հիշած վկայաբանությունըն, ամենն ալ, հնույն կը լեզուն աղավաղէ կ'երնա նույնպես աղավաղյալ խմբագրությանց բախտին արձանացած ըլլա:

Առաջին ճափը Բեյյո-ի հրատարակության Ա. հատորին 57—122 ուրածալ էշերը կը լուսն, և այն սկզբան մասը տակավին թերթ է սկսելով «Սովերբաց» 95 էշեն: Փարիզի հայ ձեռագիրն աղավաղ կը սկսի. «Զիա՞րդ ժամանեցաց մերձենալ տկարս շարութեամբ և տգիս դիտութեամբ առ ի պատմել զբանչելի վկայության վկայիցն սրբոյ» ևն: «Սովերբաց» հրա-

տարակությունը բացի թերի մասերեն՝ շատ անկատար է. տեղ-տեղ մինչև եզի չափ կտորներ կը պահպանի, եթե համեմատներ բնագրին են:

Վկայարանությանց մեջ նախ Շմավոնի Բար-Սարային վկայարանությունը լավ պահպան է համեմատառար, ապա կը հաջորդեն ըստ ասորի բնագրին՝ 2. Վկայարանությունը՝ Պուսակայ (թերակատար՝ ի «Սոփերը»), 3. «Պատերազմ մեծ որ եղի ի Խումաստան»; 4. Վկայարանություն Ազատայ (թերակատար՝ ի «Սոփերը»), էջ 53: «Ազրդա» զրչի սխալ է փոխ. «Ազատ»: Ասոնք և Գոշքաղդի մասերը շատ աղավաղ և խառնակ են «Սոփերաց» մեջ: — Ավելի ետք պիտի զան, ըստ ասորի բնագրին՝ 5. Վկայարանություն Թարքենի և ընկերաց, 6. Վկայարանություն Մելեայ եպիսկոպոսին Եօշա, Արքուինայ երիցու և Սիմեոնի սարկաւագին (ձեր հիշածը ճիշտ այս կոտրն է), 7. Վկայարանություն Շահոյուսի՝ եպիսկոպոսին Սարչարեան և Ժ ընկերաց, 8. Վկայարանություն Սովորին, և ԾՀՀ ընկերաց, 9. Վկայարանություն Ներսէսի եպիսկոպոսի և Յովենափայ աշակերտին ի Շահարքադատաւայ, 10. Վկայարանություն Դամիելի և Վարտայ կոսին, 11. Վկայարանություն ՄԺԸ արանց և Թ կամանց, 12. Վկայարանություն Բարքաշմենայ և ընկերաց (ձեր հիշածը), 13. Վկայարանություն վկայից որ սպանան ուրեմն ուրեմն մեր և 14. Վկայարանություն Ֆակորայ երիցու և Մարեմայ հաւատարարի, 15. Վկայարանություն Թելելեայ հաւատարի և Դ ընկերաց, 16. Վկայարանություն Բարիսադրեարայ (որդի Կիրակէի) սարկաւագի, 17. Վկայարանություն որդոց գերեզոց, 18. Վկայարանություն Խ վկայից. Արդէայ, Արդէշուա, Արդալանայ և նույնական 19. Վկայարանություն Ավելիսիմեայ (Ավերշմալ) և Յովենափայ երիցու և Ավիքայա սարկաւագի: — Աստեղանի զատներ կը դնեմ բուն գրին մեջ, և հավելվածի մեջ, 20. Վկայարանություն Յովենանու, Քրիեշուա, Զերինեայ, Պազարու, Մարութա, Ներսէսի, Եղիայի, Մակարեան և նույնական (Վահենամ) վկայարանություններ, Կարդուգայ, Փերինի, Անահատա, Արդուրումզդայ, Սարա, Պետրոս և նույնական (Վերմայան) վկայը, որութիւն անշուշտ, չկային Արքահամու «Արևելեան» վկայից բարգմանության մեջ:

Արդ կրտեսներ, որ մեծ գործ մըն է, զոր պետք ենք զանալ ըստ կարելվուս լիակատար բնել (—Bedjan 688 էջ է). ըստ կարելվուս ըսի, վասն զի շատ բան, անշուշտ, անենես կրտսկած է, մաս մ'ալ թափտառած հոս-հոն՝ բայց աղակերպած ու աղավայզալ. երբ լավագունը շատունի, պետք ենք զատներ ալ առնող, բայց ուրիշ տառով դնելով և՛ն զանազանել բնադիրներնեն: Կը հուսամ, որ Էջմիածնի անհուն հավաքման մեջ անկարելի պիտի շլլյա շատ բան, որ ի հնձի համար կրտսկած են, երևան համեմել:

Առ այս պարան. հդրախտարար, անպես զրադա ևմ Յուցակով, որ Մարութա և նմաներ այժմ մեկնի դրած եմ: Բայց երբ Դուռ պատշաճ դատեր ձեռագիրներ խավերուո՞ւա՝ ուկ քննությունը կամ բնագրեն այ, կը ջանան կրցան բնել: «Հանդիսի» մեջ կրտսե բննություննեն մասեր, թերեւ նաև ամբողջ որդիի, առանց ասով բուն գրին վեսակերու: — Քիչ օրեն կը խավերն Գարթընամի «Ենորինդամատուցեն» թերթ 8—9, երբ տպվին, որպեսզի գաղափար ունենար տպագրության ձևին, տառերուն ևն:

Մայդեկով հաշողություն՝ մեամ

Զերդ Հ. Հ. Տաշյան

<Ե. Գ.> Կը Աերեք հապճեապով գրելուու: — Թերևս այս տարվան վերջերը կարենամ Փարիզ այցելել. 94-ի երկու ամիս Գերմանիա և ի մասնավորի Պերին էի:

Նույն ն

Յ. Գ. ՏԵՐ-ՄԿՐՏՉՅԱՆ Հ. ՏԱԾՑԱՆԻՆ

10 մարտի 1895, Էջմիածն

Մեծ <արգու> բարեկամ.

Ձեր պատվական գրությունը շոտունց ստացել եմ, բայց ժամանակ չունենի պատասխանելու: Մի բարեկամի մաս, նաև համաս կրկնվող հիվանդությունը արգելը եղան: Հատությունը (Ավգ <Երևանի> հրատ <արակությաման> և մեր ձեռագ <թի>), որ հանճն էի նետեանքներ տվեց: Այժմ ներթան եկամ Արքահամ-Մարութափն: Հստինքան ինձ հետահապած հատվածները (արդեն հրատարակած կամ նոր գտնված): Գուր խնդիրը ավելի


ընդարձակ եք դնում՝ առաջարկելով ամբողջ Մարտիքան հրատարակիվ, որշափ որ այդ հնարավոր է, զանազան և մեռավոր դարերի թարգմանություններն ի մի ամփոփելով: Համաձայն եմ Զեր առաջարկությանը՝ Մարտիքի ամբողջությունը թողնելով Զեր վրա: Իմ գրադաման հասուկ առարկան կլինի Սրբահամ և յուր բարգմանությունները: Նորագույն բարգմանություններից էլ ինչ որ գտնիմ, կուղարկն Զեզ: Այս իսկ նպատակի համար ինձ անհրաժեշտ է ունենալ Մարտիքի նորագույն և լրագույն հրատարակությունը, ուստի և խնդրում եմ վաղընդփույզ ուղարկել ինձ Զեր հիշած Բեյյանի հրատարակությունը, եթե միայն այդ հրատարակությունը աստրեն չէ (այդ Գրանտերն, լատիներն են): Եթե ապրենան բնագիրներն են, այն ժամանակ ինձ ավելորդ է, որովհետև կարողանալու չեմ օգտվիլ:

Զնորանար ուղարկել ինձ Զեր «Մատենադարան մաճը ուսումնափրությանց» պակասը: Անեցած է մինչև 144 երեա:

Հ. Զարբանալյանից ես դու 1893 թվի նոյեմբերից տեղեկություն ունիմ, որ «Սովորքի» հրատարակությունից նետո (1858) Վանեստիկում ստացվել է մի երկարագիր ճառընտիր 1807 թվականի. ցանկալի է, որ այդ ճառընտիրն էլ աչքի առաջ ունենայինք բաղդատորյան համար, եթե միայն այդ հնարավոր է: Այդ ճառընտիրում գտնվում է մեծ ճառը «Ձիարդ ժանեցաց» սկզբանավորությամբ (այդ ճառից ևս երկու օրինակ ունիմ): Բեյյան ստամալուց նետո (դրամն անհնապաղ կտամաք դուր կամ ուղարկող գրավանառը) կուղարկն Զեզ նախ այն բոլոր նորագույն հատվածները, որոնք ենին բարգմանության մնացորդն են, Հետո, հետզետև, «Սովորքի» և իմ ձեռագրերի բաղդատորյունը, նաև՝ հատվածներ նորագույն բարգմանություններից: Մարտիքի հրատարակությանց և այնի մասին գրելը Զեր գործն է լինելու. այդ մասին ես ոչինչ ունիմ սեելիք՝ շունչնապով պնդուր եղած մատնադարանը: Ուրեմն, բացի բնագրի հայտնի մասերից, կը բաղկացնի ևս Սրբահամ Խոստովանդությունը: Զեր ունեցածն էլ Գուր կավելացնեք: Մնացածը բոլորուն ևս Զեր հմտությանը: Սրբահամի կենսագրության համար ինձ նարկ եղավ Ղազարով գրադիլի: Այս կետում կունենանք կարևոր նորություններ, որոնք թեև ուղղակի Սրբահամին չեն վերաբերվելու (այլ Ղազարին), բայց շատ կարևոր են: Մինչև առաջիկա աշունը, եթե ողջ մնամ, երկի, կունենանք ուրիշ նորություններ, իսկ եթե չված կլինիմ մյուս աշխարհը, փա՛ռը աստուծո, ուր երիտասարդ եք և առողջ, գործը զրոյի կմաներ: Համոզված եղեք, որ ձեռքից եկածը չեմ խնայիլ այդ հրատարակության համար, իսկ Զեր հմտության և շափազանց աշխատափրության վրա բոլորովին կտամ եմ:

Զեր Գալուստ





ԵՐՎԱՆԴԻ ՄԵԼՔՈՆՅԱՆ

ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑԻՆ «ԱՐԱՐԱՏ» ԵՎ «ԷԶՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԵՐՈՒՄ

Արդեն 15 դար է, որ մեր ժողովրդին ուղեկցում է հայ պատմագրության ճահապետը՝ ազգային արժանապատվություն, ինքնաճանաչման և ինքնահաստատման ոգի ու եռամդ ներշնչելով սերունդներին: Պատմության բազում հրատարակություններ, աշխարհաբար և օտարավեզու թարգմանություններ, շարականներ, տաղեր, ճաներ ու թղթեր և այլն: Այդ նյութը պետք է ի մի հավաքել, և կազմվեցին բազմազան մատենագիտական աշխատություններ, նաև մեծանուն հայագետների կողմից:

Այս աշխատանքի ճափառական է ի մի հավաքել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի երկու պաշտոնական ամսագրերի խորենացիական նյութը: «Արարատ» և «Էջմիածին» ամսագրերի մեջ կա բավական ծավալուն և տարատեսակ նյութ, որ պետք է համադրել: Կատարվածը թվում է, մեքենական աշխատանք է, բայց և այնպես փորձ է արված որոշ ընդհանրացումներ կատարելու:

Որևէ հեղինակի մատենագիտական նյութը պետք է համակարգվի այնպես, որ հեշտացնի ուսումնասիրողի որոնումն ու կողմնորոշումը: Ժամակարգումը կարող է լինել ժամանակագրական, առարկայական և տեղեկատվական, անկախ նյութի բանակից: Մատենագիտությունը պետք է բովանդակի առավելագույն կողմնորոշչներ:

Այս ճափառակից մեկնելով «Արարատ» և «Էջմիածին» ամսագրերի խորենացիական նյութի մասին մեր խոսքը ունի երկու մաս: **Ներածություն և Ցանկ:**

Ներածությունը ճափառակ չունի վերլուծել ամբողջ նյութը, այլ ընտրանքի սկզբունքով վերաբարել ամենակարևորը՝ առանց վիճարկելու հե-

դիմակի մոտեցումը այս կամ այն հարցին, անշուշտ տալով առավելագույն տեղեկությունը յուրաքանչյուրի մասին:

«Սրարատ» և «Էջմիածին» ամսագրերը տարբեր են մեր մշակույթի մեջ իրենց վերապահված դերով: Այս, երկուսն էլ որպես Մայր Աթոռի պաշտոնաթերթ առաջին հերթին կրոնա-եկեղեցական են բնույթով: Գիտենք, սակայն, որ ի սկզբանեւ եկեղեցական մշակույթը հայտնվեց մեր պատմության և մշակույթի խաչողությանը. բանասիրություն, պատմագիտություն, ճարտարապետություն, այլ արվեստներ: Բայց հիմնովին տարբեր են ամսագրերի գործունեության պայմանները, որից և նրանց ընդհանուր բնութագիրը: «Սրարատ»-ը իրականացվ հարաբերաբար ազատ մթնոլորտի մեջ և կոչված էր լինելու արևելահայ գիտական մտքի ամրին, եթե կուզեք հայագիտության շահակիրը, դեռ, որ ամսագրի պատվով կատարեց: «Էջմիածին» ամսագրի ստեղծեց իբրև կրոնական, մշակութային ու գաղափարական զիշում, ընդամենը հանդուրժվեց, մշտապես գտնվելով պետական սևեռուն հսկողության տակ: Ամսագրի ամեն համար անպայմանորեն ենթարկվում էր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի գրաքննության, և գաղափարախոսական տեսանկյունից գիտնականների մեծ մասի համար այն փակ դոր էր: Ձեր խրախուսվում բանասիրական, պատմագիտական հոդվածների հաճախականությունը, բանի որ կային համապատասխան պետական գիտական հաստատություններ և պարբերականներ, հայագիտությունը Եկեղեցու գործը չէ: Այս բոլորը ասվեց միայն հասկանալի դարձնելու համար, թե ինչո՞ւ «Էջմիածին»-ը հայագիտական տեսակետից աղքատ է ընդհանրապես, և ինչո՞ւ Խորենացու մասին թիւ նյութ կա, մասնավորապես: Հայաստանի մեջ այս նոյն տարիներին հնագյական աշխատանքներ կատարվեցին Խորենացու անձի և պատմության մասին, բայց 1879—1911 թթ. (32 տարի) «Սրարատ» ամսագրի 60 նյութի դիմաց «Էջմիածին»-ում 1944—1991 թթ. (47 տարի) համար կա ընդամենը 10 նյութ: Վերջին երկու տարին վերացավ գրաքննությունը, և փորձեր են արվում հաղթանարկ այս վիճակը:

Երկու ամսագրերի խորենացիական նյութը կարելի է բաժանել այսպես:
ա. բնագիր, բ. ուսումնասիրություն, գ. և այլնայլը:

Ս. ԲՆՍԳՌԻ բաժինը ենթադրում է Խորենացու գրչին պատկանող որևէ ստեղծագործության բնագրային հրապարակում: Երբեմն դրանք կարող են լինել նորանայտ. սրանք կամ պատկանում են Խորենացուն, կամ առնշույթյուն ունեն նրա պատմության մեջ: Բնագրեր են բոլվանդակում մատենագիտական ցանկի 33 նյութից 11-ը, որին մեկ-երրորդը (1, 4, *7, 8, 10, 11, 12, 13, 14, 25 և 28 նյութերը): Սրանք բաշխվում են պատմապես 1. բուն բնագրեր, 2. բնագրեր համեմատությամբ և 3. Հայոց պատմությունից կամ շարակնոցներից բաղվածքներ, որոնք բնագրագիտական հրապարակման դեր չունեն: Առաջին երկու պարագաներում բնագրի անպայմանորեն ենթարկվում է գիտական վերլուծության կամ ինքն իր մեջ, կամ համեմատության մեջ:

Թիվ 1-ը բովանդակում է Մովսես Խորենացու և Դավիթ Անհարժի հարց ու պատասխանները «Ըստ երկարակների»: Արտասոված է 12-րդ հարց ու պատասխանները «Ըստ երկարակների»: Արտասոված է 12-րդ հարց ու պատասխանները «Ըստ երկարակների»: Կարապետ Կոստանդնուպոլիսի ձեռագրից: Հրատարակիչ Կարապետ Կոստանդնուպոլիսի ձեռագրից աղարի ձեռագրից: Հրատարակիչ Կարապետ Կոստանդնուպոլիսի ձեռագրից աղարի մասին:

Թիվ 4-ը բովանդակում է Խորենացու գրչին պատկանող մի գեղեցիկ ներքո՝ նվիրված Հայ Սուպերելական Եկեղեցուն: Տողերի սկզբնատառերից գոյանում է «Մովսէսի և սա» բառակապակցությունը:

Թիվ 7-ը «Ը Մովսէսի քերթողահօրն պատմութենէն վասն Կոստանդիանոսի մեծի թագաւորին» բնագիրն է, արտասպած Փարիզի ազգային գրադարանի № 44 ձեռագրից, որ 1194 թ. ճառընտիր է: Հատվածը բովանդակային համեմատության է ենթարկվում Խորենացու պատմության Բ գրքի 83, 87 և 88 (ԶԳ, ԶԵ, ԶԸ) գլուխների հետ: Հստ հրատարակիչ Կարապետ Տեր-Մկրտչյանի, այս հատվածը ավելի հին է, քան Խորենացու բոլոր ավանդված ձեռագրերը: Նոյն ճառընտիրում կա նաև մի այլ հյութ՝ «Պատմութիւն փոփոխման Սասուածածնին և պատկերին իր Հոգեաց վանքն է, զոր ասացեալ է Մովսէսի Խորենացուց»:

Կարապետ Տեր-Մկրտչյանը սկզբունքային մտուցում ունի Խորենացու գործի ուսումնասիրության նկատմամբ: Տեր-Մկրտչյանը քննադատում է Կարիերին, որ նա «Խորենացու գործածած աղբիրները ամէն տեղ ոչ թէ նոցա յունարքն բնագիրն է համարում, այլ հայերն թարգմանութիւնը»: Հեղինակը այն կարծիքն է հայտնում, որ վերորերյալ հատվածը մաս է կազմում Ագաթանգեղոսի մեզ անձանոթ մի խմբագրության: «Հարկ կը լինեմ ընդունել, որ Խորենացու պատմության հեղինակը իր աշքի առաջ ունէր արդէն պատրաստի գործ»: Տեր-Մկրտչյանը եղրակացնում է. «Ասածներից գոյէ Կ'երևայ, թէ ես արդէն ընդունել եմ Խորենացու պատմութեան անվաերական լինելը և կամենում եմ մի հատուած էլ իմ կողմից տալ: Իմ մտքից հեռու է այդ: Արդարք ես խնդրի վերայ այնպէս չեմ նայում, իբրև թէ Խորենացու վաւերականութիւնը մեզ համար մի սրբութիւն լիներ, որուան պաշտպանելը մի տեսակ ազգասիրական պարոք, այլ ընդհակառակը կարծում եմ, թէ մենք ի սրտ շնորհակալ պիտի լինենք այն գիտնականներին, որոնք լրջօրեն և ողիղ քննադատութեան տեսակետից այսպիսի հարց բարձրացնելով՝ ճանապարհ են բանում մեր առ այժմ գրեթէ բոլորովին մոլոր պատմութեան վերայ մի լոյս սփոթե» (էջ 151):

Թիվ 8-ը Կարապետ Կոստանդիանցի կողմից հրատարակված «Սրբոյն թէկովորոսի ծննդեանն և սնընդեանն և վարուց նորա» և «Խոկ երանելույն նունէի, վրաց վարդապետութիւն» բնագրերն են 1201 թ. ձեռագիր ճառընտիրից, համեմատությամբ 1453 թ. և 1456 թ. ճառընտիրների հետ: Ուսումնասիրողը համոզում է հայտնում, որ դրանք Խորենացու պատմության մաս են կազմում և նրանից օգտվել են Հովհաննես Դրասխանակերտցին և Ռիխտանեսը:

Թիվ 10-ը Վրաց դարձի մասին Խորենացու «Խոկ երանելույն նունէի, վրաց վարդապետութիւն» հատվածն է, որ համապատասխանում է Խորենացու պատմության Բ գրքի 86 գլուխն: Հրատարակիչ Կարապետ Վլդ. Տեր-Մկրտչյանը գտնում է, որ այս հատվածը Խորենացու նախնական օրինակից է ավանդված: այդ ընհանուր աղբյուրը միաժամանակ աղբյուր է ծառայել նաև Փոքր Սոկրատի (համառոտ) համար, հետևաբար սխալ է Կարիերի կարծիքը այն մասին, թէ քանի որ Խորենացին այս բաժինը քաղել է Սոկրատի հայերեն թարգմանությունից, որ կատարվել է 690—92 թթ., ուստի Խորենացու գիրը ամենավաղ՝ է դարի վերջներից է: Կարապետ Վլդ. պատմությունը ընդունելով հանդերձ Խորենացի-Սոկրատ զուգահեռ, երկուսի աղբյուրը համարում է ընդհանուր, հետևաբար Խորենացու ժամանակը Ե դարից տեղաշարժելու կարիք չկա:

Թիվ 11-ը Խորենացու մեղեդին է ի պատիվ Գրիգոր Լուսավորչին «Ո՞վ արքայակերպ տէր բահանայապես» սկզբնաբառերով:

Թիվ 12-ը Գրիգոր Խալաթյանցի ուստմնասիրությունն է բնագրերի համատությամբ: Խորենացին օգտվել է Գրիգոր Աստվածարանի գործերից, որոնք թարգմանվել էին «Առաջին թարգմանիչների» կողմից, և դարում:

Թիվ 13-ի մեջ Գալուստ Տեր-Մկրտչյանը (Մխարան) իր «Խորենացու ժամանակը որոշելու նոր փորձ» հոդվածի մեջ հիմնվելով Սեղբեստրոսի վարքի և Խորենացու բացարձակ հմանության վրա, եղանակացնում է, որ Խորենացին բառացի օգտվել է Սեղբեստրոսի վարքից, և քանի որ հիշատակարաններով ապացուցում է, որ վարքը հունարենի թարգմանվել է 678-ին, որեւէ 678 թվից առաջ Խորենացու Հայոց Պատմությունը չկար»:

Թիվ 14-ում Մեսորով վրդ. Տեր-Մովսիսյանը համեմատում է Սեղբեստրոսի ընդարձակ վարքը, Մեծ Սոկրատը, Փոքր Սոկրատը և Խորենացու պատմությունը եղանակացնելու համար. «Այսօր ինձ համար էլ իրողություն է, որ Մովսես Խորենացու անոնչ մեր ձեռքը հասած Հայոց պատմությունը այլևս չէ կարող Ե դարու գործ համարվել» (էջ 165): Ըստ հեղինակի ինքը նախապես այն կարծիքին է եղել, որ Խորենացին անկախ է Մեծ և Փոքր կոչված Սոկրատներից, ինչպես նաև Սեղբեստրոսի վարքից, պայմանը Խորենացին դրանցից ոչ մեկից չի օգտվել: Երկրորդ, Խորենացին ինքն է Փոքր Սոկրատի աղբյուրը. Փոքր Սոկրատը համառուսել է յոթերորդ դարում, ուստի Խորենացուն չի կարելի տաճել ոյթերորդ և իններորդ դարեր: Այս հոդվածով հեղինակը ճշգրտում է իր կարծիքը: Ընդունում է, որ Խորենացին օգտվել է Սեղբեստրոսի 678 թ. հայերեն թարգմանությունից, բայց հերքում է Փոքր Սոկրատից օգտված լինելու Կարիերի և Խալաթյանցի տեսակետները: Խորենացին անձանոթ է եղել Մեծ Սոկրատին:

Ուստի, Խորենացու պատմությունը, ինչպես այն կա այսօր, գրվել է փրկչական 678-ից մինչև յոթերորդ արդի վերջը, մոտավորապես նոյն դարի վերջին 20—25 տարիների շրջանում:

Թիվ 25-ում Աշոտ Աբրահամյանը հրապարակել է Խորենացու պատմության մագաղաթյան շորս երկաթագիր պատառիկներ, ուր կան պատմության տարրեր հատվածներ.

ա. Վրաց դարձը Ս. Նումեի ձեռքով (սա հրատարակվել է Մալիսալանի կողմից).

բ. Պատմության երկրորդ գլխի գլխացանել.

գ. Պատմության երկրորդ գլխի գլխացանելի վերջին մասը.

դ. Ա գրքի երկրորդ գլխի «Յաղագ զանիմատաւէր բարուց առաջ նոցն մերոց թագաւորաց և իշխանաց» և չորրորդ գրքի «Յաղագ զի ոչ սակա Ադամայ և այլոց հահապետացն» առաջին մասը.

ե. Ողբի հատվածներից:

Բնագրերը ձեռագրագիտական վերլուծության հետարկելով հեղինակը որոշում է դրանց դարերը (հնագոյնը Ժ դար): Ասպա այդ հյութը համեմատելով ԺԴ—ԺԵ դարերի ձեռագրերի հետ մատնանշում է հսկայական փոխություններ, ուստի դժվար է որոշել, թե «ինչ աղավաղված վիճակով է փոխություններ», ուստի դժվար է որոշել, թե «ինչ աղավաղված վիճակով է հասել մեզ Պատմահոր աշխատությունը», և որքան անիրավացի են այն բանական մատնանշումները, որոնք այս կամ այն հատվածի հիման վրա փորձում են որոշել Խորենացու ժամանակը»: Կարծում ենք սակայն, որ նենց այդ փոփոխություններն են հիմք պիտի ծառայեն ճշմարիտ վերլուծության համար:

Թիվ 28-ում պարզապես ի մի են հավաքված Խորենացու և Բուզանդի տեղեկությունները Հայաստանի հին մայրաքաղաքների մասին (Արմավիր, Սրբաշատ, Դվին, Տիգրանակերտ, Վաղարշապատ):

Բ. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Արարատ» և «Հջմիածին» ամսագրերի խորենացիական հյութի հիմնական մաս են կազմում ուսումնասիրությունները: Սա ինքնին հասկանալի է, որովհետև Խորենացու պատմությունը մեծ հշանակություն ունի ինչպես հայ, այնպես նաև հարևան երկրների ժողովորդների պատմության ուսումնասիրության համար՝ իր ընդգրկած ժամանակաշրջանով և բազմերեւ բովանդակությամբ:

Ուսումնասիրությունները կարելի է խմբավորել մոտավորապես այսպես. հյութեր, որոնք քննում են 1. Խորենացու ժամանակը, 2. Պատմության ժամանակաշրջանը, 3. Աղբյուրները, 4. Բառապաշտը, 5. Գրական վերլուծություն: Սահմանը խմբերի միջև հատակ չէ այն իմաստով, որ հյութը կարող է ընդգրկվել մեկից ավելի խմբի մեջ միաժամանակ:

Ա. Խորենացու ժամանակի հարցը Խորենացու առեղծվածի հիմնական տարրն է մի քանի դարերի միջև տատանվողը: Հսկայական հյութ է կոտակվել, այս մասին հավանաբար կարելի է ասել, որ ուսումնասիրությունների մեծագույն մասը վերջնական նպատակ ունի լուծել ժամանակի առեղծվածը: Ինչպես տեսանք, բնագրագիտական հյութերը նույնպես այդ նպատակը ունեին: Այստեղ պետք է խնդրու առարկա հյութերի բնութագրերը տալ այս տեսանկունից: Նախ հաստատենք, որ որպես օրենք այս հյութերը կրում են բանավեճային բնույթ, ցորաքանչյուր հաստատում ունի ուրիշին ժըխտելու տարր. օրինակ թիվ 9-ում, ինչպես թիվ 10-ում, Կարապետ վրդ. Տեր-Մկրտչյանը բանավիճելով Մեսրոյ վրդ. Տեր-Մովսիսյանի հետ (տես թիվ 14) հատկապես վրաց դարձի մասին հատվածի կապակցությամբ, մերժում է Խորենացու Փոքր Սոկրատից հայերեն թարգմանությունից օգտվելու վարկածը, Խորենացու և Փոքր Սոկրատի աղբյուրը համարում է ընդհանուր, ուստի և չի հմնավորված և անիմաստ է համարում Խորենացու տեղաշարժը Ե դարից: Այս հարցին նվիրված հյութեր ունի նաև Գալուստ Տեր-Մկրտչյանը և՛ բնագրի համեմատական ուսումնասիրությամբ (տես թիվ 13), և բառապաշտի ուսումնասիրությամբ (տես թիվ 3):

2. Խորենացու պատմության ընդգրկած ժամանակաշրջանը նույնական ուսումնասիրության հյութ է դարձել, տեղի տալով նաև 4-րդ գրի գոյության առեղծվածին. այստեղ են քննվում թագավորական ցանկերը, աշխարհագրական և այլ հատուկ անունները, հին հայոց հեթանոսական կրոնը և այլն:

Մեր մատենագիտական հյութից Խորենացու ժամանակաշրջանի բովանդակային վերլուծություն է պարունակում մանավանդ Մ. Աքելյանի երկար հոդվածաշարը (թիվ 15): Այստեղ պետք է դնել նաև թիվ 17-ը, որ հեղինակ Գրիգոր Վանցանը հիմնվելով Խորենացու հերոսների (Հայկ, Տիգրան և այլք) արտարին նկարագրության վրա, գրում է, որ Խորենացին տվել է հայկական ազգային տիպի բնութագիր, որը ենթադրում է մի հյուսիսային ժողովրդի տիպ, ուստի Հայկին Բարելոնից բերելը կամ Բագրատունիներին հրեական ծագում վերագրելը գիտակցված կեղծիք է. «Մեր վեպի հերոսն Աստուածաշունչի պատմածին հետ կապելու ոչ միայն կարիք, այլև անհրաժեշտ պահանջ կար, քրիստոնեայ հայերի գգացումները շոյելու,

նրանց ծագումը Ս. Գրքի հեղինակաւոր վկայութեամբ հաստատելու և ազգային հին ու կասկածելի աւանդությունը սրբագրութելու համար» (էջ 190) հավակնում է եզրակացնել հեղինակը:

Թիվ 24-ի մեջ Սիրո Վլոյ. Տեր-Մանվելյանը զանազան մեջքերումներ կատարելով Խորենացուց, հաստատում է հայ ժողովրդի բաղաքակրթական բարձրվագիտության, մատենագրության, ճարտարապետության և գյուղատնտեսության ասպարեզներում, ուստի Խորենացու ուղի բողոքը միայն «հետևանք է իր ժամանակի տիտր անցքերի տիրագոյն տպաւորութեան, իսկ այդ տպաւորությունները նաև անդրադարձել է և դեպի հին ժամանակները»:

Թիվ 26-ում Ռուրեն արքեաս. Դրամբյանը անդրադառնում է մեր ժամանագիրների պատմագիտական ճամաշողությանը և հաստատում, որ Խորենացին ուներ իր պատմությունը գրելու հսկայական ներքին մղումը, պատասխանատվություն ժողովրդի ճակատագրի առաջ, սերունդներին իր պատմության փառքով դաստիարակելու նպատակ:

Թիվ 29-ում Գևորգ Աբգարյանը համադրում է Մասիսի անվանադրության ավանդությունները Խորենացու և Անանունի մոտ, իսկ թիվ 30-ում Խաչատոր Ամիրջանյանը անդրադառնում է Բել աստծու կերպարին Խորենացու պատմության մեջ և փորձում է պացուցել հավաստիությունը Ասորեստանի պատմության մասին այլ տվյալներով, մանավանդ բարձր է զնահատվում Խորենացու ժառանգությունը Միջին Արևելքի ժողովորդների պատմության զանազան երեսների բացահայտման համար, այլ կերպ Խորենացին ստանում է արևելագիտական արժեք:

Ուշադրության արժանի է հատկապես թիվ 33-ը, 1991 թվին տպած Արտաշեան Մաթենույանի հոդվածը «Էջմիածին» ամսագրի Թ-Ժ համարներում, որի մասին գեկուցումը արդեն լսեցինք:

3. Անընդհատ արծարծված երրորդ խնդիրը Խորենացու աղբյուրների հարցն է: Հայունի է, որ Խորենացին իր աղբյուրներից շատերին մատնանշում է հականե հանվանե, սակայն ուսումնասիրողները անհրաժեշտաբար պատմությունը ենթարկեցին աղբյուրագիտական մանրակրկիտ ուսումնասիրության, և առաջացան տարածաշնորհյուններ, որովհետև այս կամ այն աղբյուրից օգտվելու փաստը նույնապես ծառալեցվում էր Խորենացու ժամանակի առեղծվածի լուսաբանման:

Վերևում տեսանք արդեն, թե մի քանի սկզբնաղբյուրների հրատարակությունը և համեմատությունը ինչպես կիրառվեց իրեն փաստարկ երեմն բոլորին հակադիր եզրակացությանց համար: Այվաղցնենք նաև թիվ 6-ը, որ Եղիշե Մադաթյանը քննում է Գ դարի մատենագիր, Կապաղովկիայի Կեսարիայի եպիսկոպոս Փիրմիլիանոսի հետ առնչված խնդիրը: Փիրմիլիանոսին վերաբրվում է Եկեղեցու հալածանքների մի պատմություն, որից և օգտվում է Խորենացին (Բ գիրք, գլ. 75) և քանի որ Փիրմիլիանոսի պատմությունը մինչև Տրդատի ժամանակը Խորենացին «սուոյ է համարում», ուստի երկրորդում է Արան: Սակայն որովհետև 269 թ. մահացած Փիրմիլիանոսը չէր կարող Տրդատի և հաջորդների մասին խոսել, հետևաբար Խորենացու հաջած Փիրմիլիանոսը Կեսարացին չէ, այլ Փիրմիլիանու Լանկուանիսն է, և Խորենացին օգտվել է Արա «Յաղագ մահու հալածաց» կամ նոյն հեղինակի պատմությունից: Այստեղ կարելի է դնել նաև թիվ 5-ը: Փարամի այլ աշխատությունից: Այստեղ կարելի է դնել նաև թիվ 5-ը: Փարամի պատմության է առնում Խորենացու պատմության Բ դաս Տեր-Մովսիսյանը քննության է առնում Խորենացու պատմության Բ դասի ԶԳ գլուխ (83) և Սեղբեստրոսի վարքի առնության հարցը, որի վրա

հիմնված Կարիերը Խորենացու ժամանակը տանում էր 7-րդ դար: Տեր Մովսիսյանը համաձայն է այդ առնչություններին, սակայն քանի որ, ըստ իրեն, Սեղբեստրոսի ընդարձակ թարգմանությունը կատարվել է Ե դարի վերջերին, ուստի Խորենացուն այլ դար տեղափոխվելու կարիք չկա, մասնավանդ որ այդ հատվածը կարող է նաև ընդմիջարկություն լինել. ընդմիջարկությունն ապացուցող հոդված Ար. Մալխասյանը արդեն ուներ «Մուրճ» ամսագրում:

4. Հատուկ ուշադրության առարկա է դարձել Խորենացու բառապաշար՝ բառագիտական, իմաստաբանական, սոուգարանական, թարգմանական և նաև ժամանակի առեղծվածի լուծման նպատակներով: Մեր հոյթերի մեջ ընդարձակ են հատկապես Գալուստ Տեր-Մկրտչյանի, Մանուկ Արեղյանի և Հակոբ Մանանդյանի հոդվածները:

Թիվ 3-ում մատնանշված են Գալուստ Տեր-Մկրտչյանի հոդվածները «Արարատ» 1890, 91 և 94 թվականների համարներում, որը հեղինակը վերլուծության է ենթարկում Խորենացու հետ առնչված տարրեր հարցեր, ինչպես նաև ընդհանրապես մեր մատնագրությանը վերաբերող խնդիրներ:

Բառագիտական մասում լեզվական, բանասիրական թե՛նության են ենթարկվում այրեցողք, մայրաքաղաք, Արարադ/Այրարատ, Տիրանուն, չորեքդիմի, Կունդ Արամազդ, ի դաշտ մեծ, առ ափամբ մօրին մեծի ու գետն մեծ և այլ բառերն ու բառակապակցությունները «որպէս զայր առ քէ» խըրթնարանությունը: Այլ հոդվածներով շանում է խմբավորել Խորենացու պատմության մեջ հասած ձեռագրերը:

5. «Արարատ»-ի խորենացիական հոյթերից ամենաընդարձակն է Մանուկ Արեղյանի հոդվածաշարը 1899 և 1990 թվականների գրեթե բոլոր համարներում: Քննության հիմնական տարրը գրական վերլուծությունն է, բայց անշուշտ մանրակրկիտ հետազոտության են ենթարկվում զրոյց, վիպասանք, առասպեկտ, երգ, բան, բանք, ասել, թվել, ի թիվ ասել և այլ բազմաթիվ բառեր ու արտահայտություններ:

Գրական վերլուծությունը նպատակ ունի որոշել Խորենացու պատմության և ժողովրդական բանավոր զրոյցների, այսինքն բանահյուսության կապը: Այն ընդգրկում է Վահագնի, Հայկի ու Բեկի, Արտաշեսի ու Սաթենիկի, Տիգրանի ու Աժդահակի կերպարները, հայոց հին կրոնը, առասպելաբանությունը ընդհանրապես (տես ցանկը, թիվ 15):

Թիվ 27-ում Հակոբ Մանանդյանը հրապարակում է «Նոր դիտողություններ Խորենացու պատմության բառապաշարի մասին»: Հեղինակը վաղուց անուի Խորենացու լեզվում «նկատել Էր» հունարան թարգմանությունների բառապաշարի հետքեր ընդհուպ մինչև 8—9-րդ դարեր, որով և անկարելի էր համարում «Խորենացու հունարան լեզուն իշեցնել 5-րդ դար»: Այս երկու հոդվածները նպատակ ունեն հաստատել այդ տեսակետը: Առ այդ հարցում է 105 բառերի մի ցանկ, որոնց զգալի մասը սակայն կազմված է արդեն 5-րդ դարում մեզ ծանոթ լեզվական կաղապարներով և հունարանությանը առնչվում է միայն այնքանով, որ գործածվել է նաև ուշ շրջանի թարգմանությունների մեջ, որոնց մի մասի կողքին հենց հեղինակը ինքը պետացնում է «հավանորեն որոշ շրջանի բառ Է» կամ «կարող է լինել ուշ շրջանի բառ»: Ահա օրինակներ. արտոսակալ, այրասիրու, անդառնալի, անխոնարհելի, անձնեայ, իսկ օրինակ Խորենացու գործածած աշխոյժ բառը օգտագործել է նաև Հովհաննես սարկավագ հմաստաերը, ահա և Խորենացին անցավ 10-րդ դարի եզրագիծը: Ի մի բան, եթե նոյնիսկ առանձին

բառեր ենթարկվում են Մահանդյանի տրամաբանության, ապա մեծավ մասմբ բռնազրուսիկ են. սկզբնավես եղակետ է ընդունված Խորենացու հետին ժամանակի հեղինակ լինելը և հետո կատարվում է հաստատում. «Այս բառը չի պատահում հնագույն երկերում»: Հեղինակը ինքն էլ թերախավար է. «Ես ընդունում եմ, ինարկե, որ Երբեք հշանակված բառերի մի մասը կարող են թերևս հին լինել և գտնվել 5-րդ դարի երկերում»:

Գ. Նյութերի երրորդ խումբը համարեցինք այլապր: Դրանք կամ խմբագրականներում կատարված ակնարկներ են Խորենացու կյանքի ու գործի մասին, կամ գրախոսություններ (թիվ 5, 6, 16, 21, 23), կամ Խորենացու պատմության որևէ հատվածի առնչություն տուերի մետ (թիվ 2), կամ այլ մատենագրի գործի հրատարակության առթիվ արված դիտողություն (թիվ 8), կամ Խորենացու աղյուրներից որևէ մեկի այլաղյուն սկզբանադրյուրի քննության (թիվ 20), կամ բանավեճ (23) և կամ Խորենացուն վերագրվող այլ երկի վերաբերյալ, այլ խոսքով ոչ պատմութենական հյութ:

Այլապր խմբի հյութերից կուգեինք առանձնացնել. թիվ 16-ում Սով. Մալխասյանցի «Սերելով պատմութիւնը և Մովսէ Խորենացի» գրի մասին գրախոսությունը: Հեղինակը վերարտադրում է Մալխասյանցի 6 հիմնավորումները՝ ապացուցելով, որ Սերելով Ա և Բ դպրությունները Սերելով գրչին են պատկանում և ոչ թե այլուստ կցված, որտեղ Սերելով օգտվում է նաև Խորենացուց: Սերելով պատմությունն ավարտվել է 661-ից ոչ առաջ և 668-ից ոչ հետո, որից և հետևում է. «Ուրեմն Սերելով, Սերելատրոսի և Սոկրատի հայերէն թարգմանութիւններից գուել 10—15 տարի առաջ օգտվուել է Մովսէ Խորենացու պատմութիւնից», այսինքն 697-ից առաջ:

Թիվ 22-ում Սիրն վրդ. Տեր-Մանվելյանը գտնում է, որ Մովսէսը Խորենացի չէ՝ Տարոն գավառի Վահեվանիան մենենական բազինների սեփականություն կազմող 12 գյուղերից Խորենի գյուղի անունից (տարրերակ Խորոնք), այլ որ այն զարգացմամբ փոփխված ձևում է «Խորին» (Խմասուն, խորախորհուրդ) ածականի, որ հավանաբար Մովսէսին տվել են հովաները, ինչպես Դավթին կոչել են անհաղթ: Ըստ հեղինակի Խորենացին Արարատյան դաշտուց է և նրա լեզվում կան արարատյան բարբառի հետքեր, օրինակ՝

ոչ գիտելով գիտ պատերազմին (ի՞նչ գիտես կովի համը
ի մարմանդ այգեաց և բուրաստանեաց (ինչ մարմանդ բաղ ու բախչեր
ուներ

ի բաց քեցել / դեն գցել
զուսուն և զիարդն / ուստը-մուսար
ատակել / ատակվել եք
բանկարծէ / ընկածից
ինչպես նաև գոռալ բար:

Թիվ 23-ում Տեր-Մանվելյանին պատասխանում է Բարդուիմեռն եպս. Գնորգյանը. Օախ նրան դատապարտում է իր վաստակը լուրացնելու մեջ. հետո գտնում է, որ Խորենացին սերել է Խորին բարից, բայց ոչ Խորին՝ իմաստուն բարից, այլ Խորին Հայք (Կենտրոնական, դաշտային, ցածրադիր Հայաստան) հասկացությունից:

Թիվ 24-ում Գրիգոր Հայուրանը վերլուծում է Խորենացուն վերաբայության, Տնաշեց, Տասներենատաշի և Վերափոխման կանոնների շարականներուն. Վերլուծությունը առավելապես գրական-գեղարվեստական է և ոչ բանական-հետազոտական:

Խոկ թիվ 32-ում մեր միջնադարյան երաժշտության գիտակներից Նիկոլայոս Թահմիզզանը վեր է հանում Խորենացի շարականագիր-երաժիշտի արձանիքները:

Ուզում ենք ձեր ուշադրությանը բանձնել Բատկապես «Արարատ» ամսագիրի 1902 թ. հունվարի համարում տպագրված Խորիմյան Հայրիկի 20 էջանոց պոեմը.

Եմ, եմ և ես մի ձայնարկու
Շարունակող ողբերգութեանդ,
Ցորչափ շնչէ շունչն ի հոգիս
Մովսիսի ողբացողիդ
Կտակակատար Հայոց Հայրիկ»:

Խորիմյան Հայրիկը պոեմը վերնագրել է «Ողբացող Խորենացին ի Աշտիշաւ և Յշական»:

Խորենացին Ակարագրովում է որպես Աթենքից եկած մի հարուստ, ճոխ գիտությամբ բեռնավորված նավով, որ կանչում է բոլորին գնելու իր գանձերը, բայց «Աւաղ, ոչ ոք և ոչ մի» չգնեց և այդ հարուստը աղքատացավ: Նա մշեցի էր, Խորենի գյուղից և դեգերում էր Հայոց աշխարհում, հանգիստ ու դադար չուներ, «Քրիստոսին էր նմանակ»: Նա իր ազգից մոռացված ազգի զավակ էր, աշխարհ գիտի նրան, իսկ «կուրաց աչքերը» չտեսան այդ գանձը: Համախ նա լինում էր Աշտիշաւում, իր ուսուցչի՝ Սահմակ Պարթևի գերեզմանին և խոսում է ուսուցչի հետ. երեկով առաջադեմ աշակերտը այսօր որբացած է, վաստակաբեկ ու իր Մայր Հայաւանի համար «խորյօս օտարածին»: Հետո զնում էր նաև Օշական, իր մյուս սիրելի ուսուցչի՝ Մեսրոպի գերեզմանին: Ընդզուում է Խորենացու հոգին.

«Գիր չի սիրեր հայոց ազգ,
Անսիրող է իմաստութեան,
Հոգին հպարտ և բարձրայօն»:

Ափսոսում է, որ հսկա զուգ ամողները հերկեցին հայոց արտը, իսկ արտը այսօր կորդացել է, քանի որ մշակ չկա, ինքը ժիր գերանդավոր մշակ է և չեն թողնում աշխատի. «Ո՛, ընդունայն եղև վաստակս»: Խորիմյան Հայրիկը իրեն հաստոկ հուզականությամբ ստեղծել է սրտառուց մի պատկեր, որ սոված, մրած ու դողացող Խորենացուն ընդունում է գյուղացի տատիկը, առաջարկում է տաք թոնիր ու հաց: Հետո տատիկը զրուցում է Խորենացու հետ, անրախու է արդյոք թե սպավոր: Խորենացին պատասխանում է. «Սուզ ունիմ ես մինչև ի մահ, երկու մեռել ունիմ մեծ մեծ»: Հետո պատմում է հայոց նախարարների այցը Սահմակ Պարթևին խոսովանելու, որ իրենք թագավորին գցելով

«Վաճառեցինք ազատութիւն,
Ստրկացանք յիմարաբար»,

որով և

«Հրապաշտ ազգին հուր ճարակեալ
Վառեց լափեց ողջ Հայոց տուն»:

Կարուկ է Պարթևի պատասխանը.

«Հիանդութիւն մինչ ի մաս է:
Նուք մեռոցիք ազատութիւն
Եւ տի մեռնիք սորկութեամբ»:

Եվ Սահակ Պարթևը պտույտ է կատարում հայոց պատմութեան մեջ և վճռում.

«Ազատութեան թագ վերացաւ
Եւ Հայաստան սորկացաւ»:

Ապա Խորենացին բաժանվում է տատիկից, ողբում է իր վիճակը.

«Սսե՞ն՝ Մովսէս հայ ժառանգ չէ,
Աթենացի լոյն է նա»:

«Թէ վաճականք փակեցին դուռ,
Բաց էր քո դէմ արձակարձակ
Մեր հիւրասէր գիտացոց դուռ»:

Ահա Խորենացու հավերժության գաղտնիքը, ծողովուրդը ընդունեց նրան, և նա անմահ է: Խորենացին ինքը դառնում է այդ ծողովորդի մի մասը, թողնում է գրիչ ու գիրք ու դառնում է շաղացան՝ հայոց ազգին հաց պատրաստելու համար: Հետո գտնում է նրան Բագրատունին, խնդրում է գրել հայոց պատմությունը: Մեծանում է Խորենացու նոգին և Քրիստոսի պես բացականչում է.

«Տէր աղաչեմ, դու ներեկով
Մի համարիր նոցա այն մեղք»:

Հետո Մովսէս Շերունին Սիմեոն Շերունու նման խնդրում է Աստծուն նոգին շատել, մինչև տեսնի «Հայաստանի փրկութեան օր», մի օր էլ գրում է: «Ողբամ զքեզ Հայոց աշխարհ» և Հայոց Հայրիկը ձայնակցում է այդ ողբին, ողբալով հենց իրեն՝ Մովսէս Խորենացուն:

Գողտրիկ, զգացական և անպայմանորեն գեղարվեստական արժանիք-ներով հարուստ այս պոեմն էլ թող լինի Խորենացու հիշատակի առհավատշյան բոլոր հետագա հայ սերունդների համար:

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԽՈՐԵՆԱՑՈՒ

«Արարատ»

1. Սբրոց վարդապետացն հայոց Մովսէսի և Դաւթի հարցմունք ըստ երկարնակացն (Թիֆ ձեռագրից) 1879, էջ 180—189, 210—219

ակ. Որդիք լուսոյ և վերին Սիօնի տեսամեմ զգեզ այսօր աստուածային և երկնային լուսով փայլեալ...

Նոյն տեղում՝ Կոստանեան Կարապետի ծանօթութիւնը ձեռագրի առի, ըստ որի այն քաղուած է. «Յովհաննու Մայրավանեցոյ, գիրք Արման Հաւատոյ» ձեռագրից: Զեռագիրը 7-րդ դարի չե, այլ 12-րդ դարի: Զեռագրում տեղեկութիւններ կան Խորենացոյ և Անյալթի մասին. Արանք Թէնդրու կայսեր կողմից նշանակուած են եղել Կարին քաղաքի շինութեան վերակացումներ: Աթէնքում ուսանելու տարիներին Արանք Բիզանդիայի կայսեր հովանաւորութեան տակ են եղել և մեծ համարում են ունեցել յոյն մտաւորականութեան մէջ:

2. Մովսէսին Յուսիկ Եպիսկոպոս

Ս. Լուսաւորչի Վիրապ մտնելու տօնը (Մովսէս Խորենացի, գիրք Բ. Գլխ. ՀԲ—ԶԲ և Զամշեան, հատոր Ա, գիրք Բ, գլ ԼԳ)

1884, էջ 106—111:

3. Տէր-Մկրտչեան Գաղուստ (Միարան)

Խորենացոյ պատմութեան ոստունասիրութիւն—Հայկականք

1890 էջ 567—576, 674—682

1891 էջ 87—106, 147—155, 196—207, 277—284, 384—392, 447—448

1984 էջ 22—26, 55—59, 89—94, 128—130, 154—158, 187—190:

4. Մարգարէից սա սերմանումն 1893, էջ 283—284

Գեղեցիկ ներքոյ եկեղեցու մասին, որ գտնուել է ձեռագրում՝ Մովսէս Խորենացոյ պատմութիւնից քաղուած հատուածների շարքում. սկզբնատառներից կազմում է «Մովսէսի և սա»:

Մարգարէից սա սերմանումն ՅԱռաքելոց պտղաբերեալ

Ոլորութեամբ Տեսան շնորհի Արժանացեալ Եկեղեցի

Վարդապետաց վարժեալ բանի Մատուուակեն մատաղ մանկանց

Սրբամքուր մտաց սնունդ և յուղագոյն թելադրութիւն

Եին լրմամբ և եռանձնեալ Միշտ ճոխացեալ մանկունք Բամբշի

Սնորվէից արքայն երկրի Մատուուակեալ ըստ արժանի:

Յիմանալի ներկա լեզուի Առաքելոց հանգանակի:

Ի սղոց սրումն, հրաշալի Գետս բան զիհսիսիւանն Զարքի,

Ի փառս Փրկչի Տեսան Յիսուսի Ամէն ամէն և եղեցի

Է տիրապէս գանձ գովելի Որ է պատուեալ յեկեղեցի:

Սիրով սիրոյն հօրն բարի և փրկութիւն մարդկան ազգի

Արգասաւոր և բաղձալի և պէտս հանուրց պտղաբերի

Տէրն է օրինեալ յամենայնի և յախտեան, որ եղիցի: 28)

5. Տէր-Մովսէսիւան Փարսադան

«Մովսէս Խորենացոյ մէկ նոր աղբիրը»

(Հայագէտ Կարիքի աշխատութեան մասին): 1893, էջ 65—76

6. Մադարեան Եղիշէ

«Փիրմիլիանոսը Մովսէս Խորենացու պատմութեան մէջ»: 1894, էջ 26—27

7. Տէր-Մկրտչեան Կարապետ

«Ի Մովսէս քերթողահօրն պատմութեան վասն Կոստանդիանոսի մէծի թագաւորին»: 1894, էջ 357—359

Ակ. Այն ժամ եկան Տրդատ ի Հայու եւ առ զթագաւորութիւնն իր եւ հաստատեցաւ տէրութիւնն...

Արտատպուած է Փարիզի Ազգային մատենադարանի հմբ. 44 ձեռագից, որ ճառընտիր է, գրուած 1194 թ. Գրիգոր Տղա կաթողիկոսի օրով, Տիրիկի բերդի մօս գտնուող Նողեկուկ գիշում:

8. Կոստանդիան Կարապետ

«Ի Մովսէսի պատմութեան»: 1895, էջ 118—121, թիւ 4 յանելուած էջ 11—12

բնագիր. Սրբոյն Թէովորոսի ծննդեանն եւ սնընդեանն ի վարուց նորա»

Ակ. Ի ժամանակին, յորում Մակեդոնացին Աղեքսանդրոս Փիլիպեանց... բնագիր. «Մովսէսի Խորենացոյ ի Հայոց Պատմութեան»

Ակ. Խոկ երանելոյն Նունեի, Վրաց վարդապետուիոյ, որ էր լընկերաց սրբոյն Հոփիսիմեայ փախստեամբ հասեալ յաշխարհն Վրաց...

Արտատպուած 1201 թ. ձեռագիր ճառընտիրից, համեմատուած 1453 և 1456 թթ. ճառընտիրների հետ:

9. Տէր-Մկրտչեան Կարապետ Վրոյ.

«Մի բացատրութիւն», 1895, էջ 221—222

Բանագլէ Տէր-Մովսէսեան Մեսրոպ Վրոյ.ի հետ՝ Խորենացու ժամանակի հարցի շորոշ:

10. Տէր-Մկրտչեան Կարապետ Վրոյ.

«Վրաց դարձի պատմութիւնն ըստ Ս. Խորենացոյ», 1895, էջ 121—123 «խոկ երանելոյն Նունեի Վրաց վարդապետուիոյ...

Արտատպութիւն ձեռագիր ճառընտիրից. այս աղբիրը ընդհանոր է Խորենացու եւ Փօքք Սոկրատի համար, ուստի կարիք չկայ Խորենացու ժամանակը տեղաշարժել Ե. դարից:

11. Քարամեան Նիկողայոս

«Մովսէս Խորենացու մեղեդին ի պատի Ս. Գրիգոր Լուսաւորչ»:

Ուսումնասիրութիւն եւ բնագիր: 1895, էջ 202—203

բնագիր Մեղեդի սուրբ Լուսաւորչին Մովսէս Քերթողին ոգեալ (տաղ ճԽԵ)

Ակ. Ո՞վ արքայակերպ տէր քահանայապետ...

12. Խալաթեանց Գրիգոր

«Մովսէս Խորենացի եւ իր աղբիրները. Գրիգոր Աստուածարան»

Ուսումնասիրութիւն բնագիր համեմատութեամբ, 1897, էջ 531—539

Գրիգոր Աստուածարանի գործերը հայերէն են թարգմանել «Առաջին թարգմանիչները» Ե. դարում, որից եւ օգտվել է Խորենացին:

13. Տէր-Մկրտչեան Գալուստ

«Խորենացու ժամանակը որոշելու նոր փորձ»:

Ուսումնասիրութիւն բնագիր: 1897, էջ 422—424

Խորենացին օգտուել է Սեղեկասրուսի 678 թ. հայերէն թարգմանուած վարքից, ուստի 678-ից առաջ Խորենացու «Հայոց Պատմութիւն» չկար:

14. Տէր-Մովսէսեան Մեսրոպ Վրոյ.

«Սոկրատ պատմագիր եւ Մովսէս Խորենացի»:

Ուսումնամիջութիւն եւ բնագրեր. 1898, էջ 165—173:

Սեղբեատրոսի ընդարձակ վարքը, Մեծ Սոկրատը, Փոքր Սոկրատը եւ Խորենացու պատմութիւնը:

Խորենացու պատմութիւնը գրուած է 676-ից մինչև 7-րդ դարի վերջը, մօտաւորապէս նոյն դարի վերջի 20—25 տարիներին շրջանում:

15. Արեդեան Մանուկ

Հայ ժողովրդական առասպելները Մ. Խորենացու պատմութեան մէջ (քննադատութիւն եւ ուսուածք)

1899

30—37, (Յերածութիւն, զրոյց, վեպ, վիպասանք).

81—87 Բան, բանք, երգ բանիցն, երգարանք բանաւոր, բանք երգոյն, ի բանսն, որ զնմանէ, բան ի նմանէ:

136—142 Ասել, վիպասանք, երգ վիպասանաց, ի թիւ ասել, թուել, թուելոցն երգք:

200—207 Առասպել, Առասպելի մէջ եղած ճշմարտութիւնը հաստառալը, «ոճով» պատմուածք, թէ ինչպէս է Խորենացին մեկնում առասպելը, թէ ինչու Խորենացին սակաւ է օգտում առասպելներից:

246—256 Վահագն աստուած, Վահագն արեգակ-հակամառութիւն Գ. Խովաթեանցի:

304—310 Վահագնի երգ, համեմատական եղանակ, տողային վերլուծութիւն:

360—367 Վահագն, վիշապ եւ ամպրոպային կոխ, վիշապաքաղ, վիշապ հանել

459—467 Հայկի առասպելը, վիպականութեան խնդիրը, ժողովրդական ստուգաբանութիւն, մակդիրներ

529—535 Հայկի ու Բելի, Սմբատի եւ Հեփթաղի կոխները (Սերէոս, Խորենացի, Եղիշէ, Ագաթանգելոս):

1900

32—39 Հայկի առասպելն էութեամբ վիպական է:

86—92 Կապը աշտարակաշնուրեան հետ, առասպելի ծագումը, Ագեղ Տորքի առասպելը:

140—144 Անգեղ տուն եւ Անգեղայ առասպելը:

193—205 Վիպասանք-պատմական-կենցաղական, Արտաշէս եւ Սարենցիկ:

264—67 Վիշապազունք, վիշապք:

302—307 Թուելեաց երգեր:

354—361 Արտաւազդի առասպելը, Աժդահակ, բաշք:

415—425 Տիգրան եւ Աժդահակ:

484—495 Հիւտումն պիտոյից:

548—556 Երգեր Մեծն Տիգրանի մասին:

623—631 Խորենացու հայեացքը մեր պատմութեան շրջանների լիրայ:

16. Մալխասեան Ստեփան

«Սերէոսի պատմութիւնը եւ Մ. Խորենացի. մատենագրական ուսումնասիրութիւն» Թիֆլիս, 1899, 118 էջ, գրախօսութիւն

1899, էջ 445—449

Սերէոսի պատմութիւնը աւարտուել է 661-ից ոչ առաջ եւ 668-ից ոչ

յետոյ, Սերէնսը օգտուել է Խորենացուց, որին Խորենացին անկի վաղ է քան Փոքր Սոկրատի հայերէն թարգմանութիւնը:

17. Վանցեան Գրիգոր

«Դիտողութիւններ Խորենացու մասին: Հին հայոց տիպարն ու ճաշակն ըստ Խորենացու»: 1900, էջ 186—196

Խորենացու տիպերը հիսխապին ժողովրդի տիպ են, արեւելեան տիպը գիտակցական շփոթում է:

18. Տէր-Մկրտչեան Գալուստի հրատարակութիւնը «Խարիթ Հարբացոյ (Ամյաղթի) փիլիտփայի որ յիմաստասիրական և յիմաստասիրելի հարցուածն» 1902, էջ 937—973

Էջ 938-ի ծանօթութեան մէջ Տէր-Մկրտչեանը վերահաստատում է իր՝ տեսակէտը այն մասին, որ Խորենացու պատմութիւնը գրուած է 678-ից յետոյ:

19. Խրիմեան Հայրիկ

«Ողբացող Խորենացին ի յԱշտիշատ և յՕշական» 1902, էջ 579—599 լայնաշունչ պուէմ նուրուած Խորենացու կեանքի և ճակատագրին:

20. Տէր-Մովսիսեան Մեսրոպ Վարդապետ

«Մայրիբայ ասորական ժամանակագրութիւնից արաբերէն քաղուածները» 1903, էջ 235—241

Ն. Մատի համանուն զեկուցման մասին, որ Մառը կարդացել է 1902 թ. Կալսերական Ռուսական հնագիտական ընկերութեան Արեւելեան բաժնում:

21. Տէր-Մովսիսեան Մեսրոպ Վրդ.

«Ֆ. Մակլեր. Մովսէս Խորենացին և Օգիսատ Կարիէրի աշխատութիւնները 1902» գրախօսութիւն—1904, էջ 88—89

22. Տէր-Մանուկեան Սիօն Վրդ. «Մովսէս Խորենացի թէ Խորին», 1911, էջ 232—238

23. Գեղրգեան Բարդուիհմէոս եպիսկոպոս

«Երացնում են այլոց վաստակը. ակամայ պատասխան. Խորենացուն Խորենացիով պէտք է հասկանալ»: 1911 էջ 319—324, 389—384

Պատասխան Սիօն Վրդ. «Մովսէս Խորենացի թէ Խորին» յօդուածին:

24. Տէր-Մանուկեան Սիօն Վրդ.

«Նշանական նախականութեան ըստ Խորինն Մովսէսի» 1911, էջ 466—472

«Էջմիածին»

25. Աբրահամեան Աշոտ

«Խորենացու պատմության մագաղաթյա հնագոյն պատառիները» ու-սումնասիրություն և բնագրեր: 1950 հունվար-փետրվար, էջ 44—57:

Մատենադարան թի 9231 ձեռագրի պատառկ, թի 9234 ձեռագրի պահպանակ (ԺԱ. դար) և թի 1221 ձեռագիր (7 դար):

26. Դրամբեան Ռուբէն արքեպ.

«Մեր մատենագիրների պատմագիտական ճամաշուրթիւնը» 1950 սեպտ.-հոկտ., էջ 36—40

27. Մանանեան Հակոբ

«Նոր դիտողութիւններ Խորենացու պատմութեան բառապաշարի մասին» 1955, մայիս, էջ 29—35. հունիս էջ 20—26

105 բառեր Խորենացու մօտ, որոնք քաղուած են Ե. դարից ուշ Բեղինակների գործերից, ուրեմն Խորենացու պատմութիւնը չէր կարող Ե. դարում գրուած լինել:

28. «Մատենագիտական վկայություններ մեր հին մայրաքաղաքների մասին» 1968, հոկտ. էջ 15—18

Ուղակի քաղվածքներ Խորենացու և Բուզանդի պատմություններից:

29. Արգարյան Գևորգ

«Մասիսի անվանադրության ավանդություններն ըստ Մովսես Խորենացու և Անանունի» ուսումնասիրություն, 1971 դեկտ. էջ 25—30

30. Ամիրջանյան Խաչատրյան

«Հին Բարեկոնական Բել աստծու կերպարը Մովսես Խորենացու «Հայոց պատմության» մեջ» ուսումնասիրություն, 1971 հուն.—հուլ. 77—82

31. Հակոբյան Գրիգոր

«Մովսես Խորենացուն Վերագրվող շարականները», 1971, էջ 27—33 Վերլուծություն Ծննդյան, Տեառնընդառաջի և վերափոխման կանոնների:

32. Թահիմիջյան Նիկողոս

«Մովսես Խորենացին և հայ հին ու վաղ միջնադարյան երգարվեստը» 1979 հունիս, էջ 44—53


Խորենացին երաժիշտ, շարականագիր

33. Մաթևոսյան Արտաշես

«Մովսես Խորենացու պատմագրքի խորագիրը և ավարտման թվականը» 1991 սեպտ.—հոկտ. էջ 85—93

Պատմութիւն Հայոց Մեծաց, ավարտված 474 թ.





ՊԱՐՈՒԹՅՈՒՆ ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ «ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ»
ԲՆԱԳՐԱԿԱՆ ՀԵՏՔԵՐԸ 6—7-ՐԴ ԴԱՐԵՐԻ ԵՐԿԵՐՈՒՄ

Պատմահոր ապրած ժամանակի և «Հայոց պատմության» հաղորդումների գնահատության շորջ տարվող տևական պրատումներն ու քննարկումները անշուշտ պիտի իրանեին բնագրական աղերսների բացահայտումը: Երկու պարագա, սակայն, կանխորչեցին այդ փնտրությունների միտվածությունը: «Պատմության» ընթարկած ժամանակագրական շրջանակները հետազոտողները գերազանցապես ծանրացան Խորենացու օգտագործած աղբյուրների վերհանման և ստուգության ատիճանը առնանձու վրա՝ ստանձնակի կարևորություն չտալով Խորենացու քաղված նյութերին և այսու որպես հեղինակ տարրութերվելով երեքից ավելի դարեցի արանքու, Խորենացին իբրև աղբյուր շատ հաճախ շիռուիլոց նրան ինչ աղբյուր ծառացած նյութերի հետ, որով և միագնիկ Պատմահոր եղի առմասության պայմանակրոված բնագրական իրողությունների վերմանումը ետխորհնացյունական ժամանագրության մեջ՝ գեթ 6—7-րդ դարերի ընթացքներից: Այսու շ. կամացանքների ու գերբնադատության կարգեցրան պրոցեսներին և պատարկումներին հաջորդեցին նաև դրանք մասնակի կամ նախակացուն քայլառող բնագրական փաստարկներ, բայց այնու անյի ունեցող խորհնացյամիտուքան երկրսեռում: Մինչև այսօր էլ. փաստարկն աղբյունացության նույնությունները անտեսում են այսպիս կոչված աղբյունացության աղբյունացությունը և աղբյունացության աղբյունացության աղբյունացությունը:

Խորենացու երկի հազարամյակ խօսքը առ առ պատմություն և քանի դեռ գիտա-քենաչան բնություն է պահպան վերապահվել պահ եղած ծըլ այդպիսին չէ, այլ՝ համարակալ պատմություններ, ծառակշրջն չեն բահմանված ու տառըքը պահպան պահպան պահպան ու խաղարսներո՛ իրաւաւոր պահուած պահպան պահպան պահպան են:

Խորենաց կույտը պահպանվել է մի քանի հազար տարիում
գործառնական քրանչութիւնում և այս աշխատավոր աշխատ

մը կարող է կատարվել եթե ոչ բացառապես, գեթ գլխավորապես բնագրագիտական քննության ճանապարհով: Եթե Խորենացու «Հայոց պատմության» բնագիրը կար 5-րդ դարի պատրին, ապա նրան հաջորդող հեղինակները, և ոչ միայն պատմիչները, չեն կարող անհաջորդ մնալ նրան, առավել և՛ չդիմել այդ գործին, քանի որ չեն կարող գտնել ավելի ընդգրկուն, առավել ամբողջական, ավելի քննական ու շարադրանիք մեջ խփան հատակ մեկ այլ երկ:

Մեր հարցադրումը՝ Խորենացու երկի բնագրական հետքերի պրատումով լուծում տալ տևականորեն վիճարկվող խնդիրներին, հայագիտությանը անձանոթ չէ: Խորայր Բյուզանդացին 1898—1899 թվականներին «Մշակում» հրատարակած «հայերն ին գրականության խնդիրներ» Մովսես Խորենացի» հոդվածում փաստորեն այդ կարգի մասնական աշխատանք կատարել է և շատ շանօնած՝ Խորենացու բնագրին առնչվող հեղինակների ու երկերի ժամանակագրական դաստառում առաջարկել՝ «Ընդդեմ կարիերեանց» խոսուն վերտառությամբ: Ցավոք, այդ ոչ ծավալուն հոդվածը տասնամյակներ անտիպ է մնացել և միայն վերջերս Ս. Միհնապյանի հրապարակմամբ լուս աշխարհ եկել: Քաղած համադրությունների մի մասը Խորենացու մոտ և նրան հաջորդած հեղինակների երկերում պահպանված առանձին բառերի ու բառակապակցությունների ընդհանրությանն է վերաբերում, որ անշուշտ ուշագրավ է, բայց հաստատուն եզրակացության կրովան չի կարող ծառայել, որովհետև երաշխիք չկա, թե հենց Խորենացուց է առնված¹: Ստորև ներկայացվող բննության ժամանակ մենք զանց կառնենք նման իրողությունները՝ մեր դիտարկումները հիմնելով բնագրական ին ու նոր աներկրա քաղումների վրա, նշանակալիորեն ընդարձակելով ժամանակագրով հեղինակների ու երկերի ցանկը:

1. Վատահաբար Խորենացու «Հայոց պատմությունը» ճանաչող և վերապատմությամբ նրանց քաղում կատարող առաջին մատենագիրը Հովհաննես Գարենենացի կաթողիկոսն է, որի գահակալության տարիները որոշակի են (557—574), մահվան թվականը՝ ստուգ²: Հայկական աղբյուրներից բացի, նրա կամքի վերջին՝ կոտանդնուառույսան շրջանի մասին տեղեկություններ է հաղորդում ասորի Հովհան Եփեսացին³: «Գիրք թղթոցում» պահ-

¹ «Հանդէս ամսօրեայ», 1984, էջ 19—28:

² Մասսամբ աղդամին է նաև Խորենացու և Դավիթ Անհաղթի երկերում Գ. Սարգսյանի նկատած և քննության առած ընթանուր տեղին (տես՝ «Կակազ և Վիզանտիա», 1, Երևան, 1979, ստ. 67—72): «Մասսամբ» վերապահությունը պայմանավորված է հեղինակի արդարացի այն դիտարկմամբ, թե Խորենացու երկու «զանհման գիղիք» և պարսկաց» որոշված Արտաշես թագավորի գործերի բնականոն շարադրանքը է հիշված իսկ Դավիթի մոտ՝ արդեն պատրաստի օրինակը վկայականությունը՝ «առաջնորդ» դիմելու ամփով (տես Դավիթ Անդրադ փիլիսոփայի Մատենագրութիւնը և Թուլը Գիտոց կարողիկով առ Դավիթ, Վեճնատիկ, 1932, էջ 48): Խորենացու մենա ունեցած առնչությունը համագարում է և այն, որ առողջապես չգիտնելը Դավիթի անոնակ հայտնի երկի բնագիր թե քարգմանություն լինելը, ինչպես որ խնդրական է դիտվում նաև Աննադիմի պատրևելու իրողությունը (տես հ. Ներսես Ակիմեան, Դավիթ Հարքացի Անդոք փիլիսոփայ, Կանաքը և գործեր, Վիճանա, 1959, էջ 11—29):

³ Տես Մադարիա արքան, Օրմանան, Ազգապատում, Ա. Բատ. մասս Բ, Պէյրութ, 1959, էջ 557—566: Նաև՝ Հ. Պոլոս Անանեան, Տուիրիս Կ. Պոլոս պատրիարքին կորու Ակիմեան, Հ. Կ. Տեր-Պոլոսեան, Մատենագրական մետապություններ, «Հանդէս ամսօրեայ», 1975, էջ 139—163:

⁴ Johannis Eresini Historia, 1c, p. 61—62. Բատվածների թարգմանությունը տես Ակիմեան, Ն. Տեր-Պոլոսան, Աշվ. աշխ., էջ 150—154:

պանվել են Գարեղենացու երեք գրվածքները՝ նվիրված եկեղեցու դավանական, նվիրապետական և ծիսական խանդիքներին: Նրանցից մեկը Սյունիքի հոգևոր պետերին հասցեագրված թուղթն է, մյուսը՝ «Առ Աղուանից եւ սիսկոպոսուն» ուղերձը, երկուսն էլ կարևոր իրենց արծարծած խանդիքներով⁵: Վերջին պարագան հաստատվում է նաև այն փաստվ, որ Մովսես Կաղանկատվացու երկում բերված է այդ երկրորդ թուղթն ամբողջությամբ⁶: Երրորդ գործը, որ «Գիրք թղթոցուն» անմիջապես հաջորդում է «Առ Աղուանից եւ պահապոտուն» ուղերձին, կրում է «Յովկանու Հայոց կաթողիկոսի» ի յայտնութիւն Քրիստոսի», խորագիրը⁷: Քննարկման ընութը Ծննդյան և Հայունության տոների առանձին-առանձին թե միաժամանակ կատարման հարցն է: «Եթ զոր յայլ քաղաք ըստ Արտեմնադիր ընթերցուածոց դեկտեմբերի ամսոյ ի քան և հինգն ծնունդ առնեն,—գրում է Գարեղենացին, —զայն Յակովայ առելոյ և Դաթայ մարգարէի միշտակի ար եղ Կիրեղ, քանզի և սուրբ հարքն որ ի Նիկիա ժողովեալ, և երանելին սուրբ Գրիգորիոս, և սուրբ Արիստակէս ոչ կարօնիցին երկուս տաւսն՝ զԾնունդն և զՅայտնութիւն, այլ մի տաւս: Եթ ըստ նոցունց հոգեկիր վարդապետք և քարգմանիչք, որք յԱղեքսանդր և յայլ յայտնի քաղաք վարժեալ, ոչ աւելիս և նորս ինչ քարգմանեցին, և ոչ ընկալան, և ոչ մեզ աւանեցին. այլ հաստատեալ եմք ի վերայ հիման սուրբ առաքելոցն և երանելի հարցն որ և նոյն տաւս կատարեցին...»⁸:

Սրդ, թե ովքեր են Աղեքսանդրիա և այլ հայունի քաղաքներում կրթություն ստացած հայոց հոգեկիր վարդապետներն ու թարգմանիչները՝ հայտնի է Մովսես Խորենացու «Հայոց պատմությունից»: Սակայն Պատմահորն ու նրա ընկերակիցներին վերաբերող ակնարկութ պարանով չի վերջանում: Գարեղենացի կաթողիկոսը ստուգախոս է նաև սոնի օրը հիշատակելիս: Խորենացու Պատմության երրորդ գրքի 62-րդ գլուխ Աղեքսանդրիայի մասին խոսելիս ասկում է նաև, որ «Եթ ոչ ի քան ի հինգ Տորի՝ լորտուա և աթերաց առնել քաշխումն, այլ ի մետասան նորին Տորի՝ յայտնութեան տեառն կատարի տօն»⁹: «Տորին» Աղեքսանդրյան տարիւա 5-րդ ամիսն է, որի սկիզբը համապատասխանում է դեկտեմբերի 27-ին, ըստ Հոյցան տուարի, հետևաբար այդ ամսի 11-ը կհամբնենի հունվարի 6-ին: Ուրեմն Ծննդյան և Հայունության տոների նույն օրը նշելը Խորենացին գիտե հավատիորեն և նրանից է քաղում Հոյքի. Գարեղենացին:

Որ Գարեղենացու աղբյուրը հաստատապես Խորենացու «Հայոց պատմության» համապատասխան դրվագն է՝ կարելի է ապացուել ոչ միայն բնագրային ընդհանրությամբ, այլև կաթողիկոսի մահրամանող ցուցումն՝ Աղեքսանդրիայում և այլ հայունի քաղաքներում ուսանած Հայոց հոգեկիր վարդապետներն ու թարգմանիչները այդպես են ընկալել, թարգմանել ու ալվանել: Ավելորդ է ասել, թե այդ հետագան ուսումնառությունը, մանա-

⁵ «Գիրք թղթոց», Թիֆիս, 1901, էջ 78—80, 81—84:

⁶ Մովսես Կաղանկատվացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, Երևան, 1983, էջ 122—126:

⁷ «Գիրք թղթոց», էջ 85—89: Ծախս նեղինակալին պատկանելության վերաբերյալ Ն. Ակինանի և Ն. Տեր-Պողոսյանի տարակուաները միանգամայն անտեղի ու անհատապէ է (տես ճրանց Աշվ. աշխ., էջ 159—163):

⁸ Նոյն տեղում, էջ 88—89:

⁹ Սույն դրվագի այլ կորպածքով ընդարձակ ընտությամբ վերջին համերս եկալ քա-նաւեր Հ. Սիմոնյանը, մատնացուցելով Խորենացու աղբյուրը՝ Աղեքսանդրի պատմությունը (անձ «Պատմա-քանակիրական հանդես», 1991, № 2, էջ 90—92):

վանդ նրա հետ կապված համգամաճընքը պատմությունը գիտե միայն խորենացոց¹⁰: Ի դեպ, «հոգեկիր վարդապետը և թարգմանիչը» բնութագրությունը ևս թեկադրված է Խորենացու բնագրով՝ «իմն առեմ վարդապետէ, որում ոչ անարժան գույց աշակերտ, և ոչ անկատար վարժմամբ ի յանց ելեալ արուեստից՝ ինքնացայ» (III, ԿԲ):

Որեմն՝ Պատմահոր երկը 557—574 թվականներին կար և հայոց կաթողիկոսը կարդացել ու քաղում է կատարել նրանից:

2. Երևանի Մաստեւալստիւնում պահվող № 2679 թղթի հնագույն ձեռագիրը հայագիտությանը անհայտ միավոր չէ (առաջին մասը գրված է 981 թ., երկրորդ մասը՝ որոշ ժամանակ անց): Ձեռագրի խմբագիր-կազմուից Ն. Ալիքանյանը առանձին հոդված է նշիրել՝ նախնական կոստումներով¹¹, սակայն այստեղ ներկայացված շատ հյութեր, մասնավորապես տարբեր ժամանակներում ու հեղինակների ձեռով կազմված ժամանակագրություններ աղբյուրագիտական առումով ճանաչելի դարձան միայն վերջերս՝ Ա. Մաթենոսյանի հրապարակմամբ¹²: Պարզվում է, որ ձեռագրի 159ա—165ա էջերում գլուխոված ժամանակագրությունը, որը վերջանում է հայոց ՆԶԱ (=1032) թվականով, ըստ երկրորդ հատվածի գրչի կամ խմբագրի տեղեկության, կազմված է Եվսեբիոս Կեսարացու և Աթանասի ժամանակագրությունների հիմանը («Լաւ համարեցալ զՀոռովմցն զ[Ե]ւ սեբեայ և զԱթանասի ժամանակագրութիւնս շարադրել»)՝ շարունակելով ու լրացնելով այն¹³: «Ժամանակագրության» Հայոց Ա. (1) թվականի դիմաց եղած «դարձեաց սկիզբն արարի նոր թուականիս» տեղեկության առաջին դեմքով լինելը և գրչի վերոբերյալ «զԱթանասի ժամանակագրութիւնս» ցուցումը հիմք են տվել եզրակացնելու, որ խոսք Հայոց տումարը կարգավորող Աթանաս Տարոնացու մասին է, որի գլխավորությամբ կացացավ 584 թ. Դվինի հափաք¹⁴: Պարզվում է՝ «Աթանաս Տարոնացին իր ժամանակագրությունը կառուցել է Մովսես Խորենացու «Հայոց պատմության» փաստական հարուստ հյութի վրա», նրանից քաղելով 74 պատմական վկացություն, որոնցից «55-ը վերաբերում են հայ իրականությանը, 7-ը՝ պարսկական թագավորներին, 12-ը՝ Եվսեբիոս Կեսարացու «Քրոնիկոնից» հետո... եկած հոռմեական կայսրերին»¹⁵: Որ ժամանակագրության հեղինակը Խորենացու պատմությունից բացի տեղյակ է և այսօր մեզ անհայտ այլ աղբյուրի՝ պարզությունը է Պատմահորը «Մովսես Խորենացի փիլիսոփիա և մատենագիր» հի-

¹⁰ Հետևողականորեն տեղաշարժելով Խորենացուն, Ն. Ալիքանյանը «Հայոց պատմության» III գրքի 61, 62 և 68 գլուխությունը, որ ուստմասության մասին է պատմվում, հայտարարում է եկամուտ (տես նրա՝ Մատենագրական հետազոտութիւններ, Բ. Գ, էջ 179, Բմն. «Հանդէս ամսօրեաց» 1956, էջ 130):

¹¹ Ն. Ալիքանյան, Դափթ քահանայի խմբագրի ժամանակագրութիւնը, «Հանդէս ամսօրեաց», 1957, էջ 181—185:

¹² Ա. Ա. Մաթենոսյան, Մովսես Խորենացին և Աթանաս Տարոնացու ժամանակագրությունը, «Պատմա-քանակիրական հանդէս», 1989, № 1, է: 220—234: Հեղինակը անձանոթ է Ն. Ալիքանյանի հոդվածին:

¹³ Բնագրի հրատարակությունը տևու «Մանր ժամանակագրություններ», կազմեց Վ. Ա. Հակոբյան, Բ. 2, Երևան, 1956, էջ 1—32:

¹⁴ Վկացությունը տևու Ցովեանու կաթողիկոսի Դրասիսանակերտցույց Պատմութիւննեալիքին, Թիֆլիս, 1912, էջ 65, Անք Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, Երևան, 1961, էջ 42, Միհրան Այրիվանեցի, Պատմութիւն ժամանակագրական, Ա. Պետերբուրգ, 1867, էջ 63:

¹⁵ Ա. Մաթենոսյան, Աշվ. աշխ., էջ 225:

շատուկումից և նրա անվան դիմաց փրկչական նշԴ (474) թվականի հշումից¹⁶: Ս. Մաթևոսյանը քաղել և մեկ առ մեկ քերել է Խորենացուց եկողայի տեղիները, ուստի նոր ապացույցի անհրաժեշտություն չկա¹⁷:

3. Բագրատ հայր կամ Աթենացին հայ մատենագրությանը կատարելապես անձանոր անձնավորություն է: Հայաստան հասցեագրված նրա թուղթը, գրված հունարեն, մեզ անհայտ աղբյուրից կամ հավաքածոյից, անցյալ դարի Կեսերին եղել է Ստ. Վրդ. Եազրճանի ձեռքին, որը և գրաբար թարգմանությամբ հրատարակել է «Յառաջադիմութիւն ազգային» հոդվածում¹⁸: Բերենք այդ եզակի հետաքրքրություն մերկայացնող բնագիրը.

«Ո բարեկամ, հասեալ ի Գերեզմանսն ի բլորն անբարտան, պատման որդուց բոց՝ որպէս միաբանութեամբ և արութեամբ սակաւածեռն անդին անկալ Կործանեցաւ Բէլ վիրագ և անկարգ հրոսակն ի սրտմութեանէ բաջացն Հայոց իբրև զիոնի անհետ եղև ընդ երես դաշտին մեծի: Հասեալ յամուրն Անի ի շիրիմը Արշակունի բագաւորացն, ուս նոցա մի կարծել, թէ բաղդ և յաշողութիւն ազգին տեղի տուեալ իցեն ընդ ոսկերո նոցա: Տես զաշտարակն բարձրաբերձ և մտաւ ած զնախնին մեր զԱրամ, զարին, յիայրենասէր և զանխնչ հախարաբն, որ զբոամբ ածեալ զիմերիմս հիբար և ի ծայր ամբարտակացդ հանեալ՝ յայցն և ի տեսիլ աշխարհի և երկմային զօրութեանցն հշաւակէր. տես և զերինս Մարաց և Կովկասեան, և զեզերո Պոնդու և Միջերեկուայ ծովլոց, զորս իր սահման գծէր քաջն...»:

Բազում առումներով (այդ թվում և հայոց մանկավարժական մտքի պատմության համար) կարևոր այս թղթի գրության ստուգ ժամանակը որոշելի հնարավոր չէ, որվիենու նրանուն չկան թվագրվող իրողությունների հիշատակումները: Կարծում ենք, սակայն, որ իրավացի պիտի լինի Խորար Բյուզանդացին, եթք այս վերագրում է «ի ժամանակի մարզականց Պարսից (այսինքն յամուն 514—608» ըստ Ղ. Ալիշանի կազմած ժամանակագրության¹⁹: Մասնավորապես այդ է մատնացուցում արարական արշավանքների, Բագրատունյաց հարստության հաստատման ժամանակաշրջանների ակնարկի խապատ բացակայությունը:

Թղթի հեղինակը ոգեշնչված է Խորենացու Պատմությամբ և նրանից է բաղում ազգային պատմության թվարկվող բոլոր դրվագները՝ «վիրագ և անկարգ հրոսակ» Բէլի կործանումը հայոց բացերից (Խոր., I, ԺԱ), Արշակունի թագավորների շիրիմների տեղի «ամուրն Անին» (Խոր., III, Ժ, ԻԵ), «արի, հայրենասէր և անխնչ» Արամի հաղթություն «ոյսերին նիրարի» հանդեալ (Խոր., I, ԺԳ): Ընդ որում, Խորենացու են գալիս նաև բնութագրական մանրանաները՝ Հայկի «սակաւածեն գնդից» լինելը (Խոր.: «քուով լոյժ նուազուն»), ճակատամարտի տեղանքը «ի Գերեզմանսն, ի բլորն անբարտան» (Խոր.: «Խոկ զրուրն, որ բաշամարտկօրէն անկալ Բէլ՝ անուանեաց Հայկ Գերեզման»), Բէլի պարտությունը ի «ոյաշուին մեծի» (Խոր.: «ի միջոց ինչ դաշտաձև») և այլն: Թերևս ամենի ուշագրավ է թղթի երրորդ դրվագում «ոյսերին նիրարին» «ի ծայր ամբարտակացդ հանեալ» արտահայտությունը: Խորենացու երկում ասված է «և անդ որեմն

¹⁶ Տես «Մանր ժամանակագրություններ», հ. 2, էջ 15:

¹⁷ Ս. Մաթևոսյանի պատճառաբանված եզրակացությամբ թվականը վերաբերում է «Հայոց պատմության» գրությամբ:

¹⁸ «Բագրմավեպ», 1944, էջ 202—203:

¹⁹ Ն. Բիլգանդացի, Աշվ. աշխ. էջ 21:

ի ծայր աշտարակի պարսպիցն ցից վարեալ երկաթի ընդ ճակատն՝ յորմն վարել (var վարել) հրամայէ» (I, ԺԴ): «Ամբարտակ» եզրի «աշտարակ» խմատով գործադությունը հատկորոշ է, ինչպես կարելի է եզրակացնել ՆՀԲ մկանակոչություններից (Ա, 55) միան Խորենացուն:

Այսպիսով, 6-րդ դարում Աքենքում ապրող կամ գտնվող Բագրատ համար իր ձեռքին Խորենացու «Հայոց պատմություն» ունի, ոգեշնչված է Արանով և դրվագներ է բաղում հրամից: Միան Անի ամրոցի մասին կարող ենք ասել, թե Արշակունիների հանգատարանի այնտեղ գտնվելը նա կարող էր իմանալ և «Բնուանդարան պատմությունից» (III, ԺԱ, IV, ԻԴ)²⁰:

4. Վրթանեւ Քերթողը հայոց եկեղեցու և մատենագրության պատմությանը բազ ծանոթ դեմք է: Մովսես Եղիշարդեցի կաթողիկոսի մահից հետո (604 թ.) մինչ բրահմ Աղբաթանեցու ընտրությունը (607 թ.) նա կարողիկան տեղապահ էր, որին և 6-րդ դարի ավարտի և 7-րդի սկզբի գործից: Նրա գրական ժառանգությունից շատ բան չի պահպանվել²¹, և հայագիտությունը ստիպված է գոհանալ «Յաղագս պատկերամարտից» ճառով, որ մի քանի անգամ հրատարակվել է²²:

Ս. Տեր-Ներսեսյանի թեսությամբ ճշտված է երկիս գրության հավանական ժամանակը, որ է 603 թվականը: Պատկերամարտությունը մերժող հրակովաններից մեկն էլ այն է, որ Քրիստոսի կենդանության օրոք իսկ Արգարթագավորը ստացել ու հարգել է փրկչի պատկերը: «Կամ զի՞նչ արդեւք ասիցն զպատկեր տեան,—գրու է նա, —զոր աստուածային հաւատարիմ խագաղորի Արգարու նկարեալ յանշիման Քրիստոսի տեսութեամբ իսկ, զոր և այժմ ասեն զոյ ի մեծ եկեղեցւոյն Ուռիապո»²³: Գուցե կարելի կլիներ մտածել, թե Քերթողը պարզապես արձանագրում է իր ապրած տարիներին հայունի իրողությունը, եթե այլ աղբյուրներից չհմանայնք, որ 6-րդ դարում եղեսիայում տեղի ունեցած խոռվության ժամանակ արևելյան եկեղեցու այնքան հարգած «հրաշագործ պատկերը» բարկոծվել էր²⁴: Հազիվ թե Քերթողը վարաներ աղջ միշադեպ պարսավելուց, եթե չգոհանար ձեռքի տակ եղած աղբյուրը բառացի վերակրկնելով: Եվ հիրավի, Խորենացու գրքում աված է: «Զայս թույթ երեր Անան սուրբանդակ Արգարու, ընդ որում և զկենդանագրութիւն փրկչական պատկերին, որ կայ յեղեսացուց քաղաքին մինչև ցայսօր ժամանակի» (II, ԼԲ):

Ի դեպք Քերթողի գործածած «ասեն գոյ» արտահայտությունն ինքնին սկզբանդրություն հեղեղ միջնադարյան թերթական եղանակ է: Եվ այդ աղբյուրն է, ինչպես բերված հատվածից կարելի է վստահանալ, Խորենացու «Հայոց պատմությունը», որ Արգար թագավորին վերաբերող մի քանի այլ դրվագներ ևս կան (II, ԻԲ—ԼԳ):

5. Սերելու «Պատմութիւն ի Հերակլ» կամ նոր հրատարակությամբ՝ «Պատմութիւն Սերելու» սկզբանասում գտնվող Ա և Բ դպրությունների (այսպես կոչված Անանունի) առնչությունը Խորենացու վաղուց և բազ-

²⁰ Հմտ. Ն. Բիգանելացի, նոյն տեղում:

²¹ ՆՀԲ-ի կազմողների ձեռքի տակ եղել է Քերթողի գրչին պատկանող «Համառու պատմութիւն ընտիր ոնով վասն շինութան Հոհիսիմանց ի Կոմիտաս կաթողիկոսէ» երկը (սեւ ՆՀԲ, Ա, 19), որ տակալին անձանոթ է հայագիտությանը:

²² Գիտական հրատարակությունը տևս Ս. Տեր-Ներսեսյան, Հայ արթևար միջնադրում, Երևան, 1975, էջ 9:

²³ Ան:

²⁴ Ս. Տեր-Ներսեսյան, Աշվ. աշխ., էջ 16:

մից ապացուցված իրողություն է: Ստ. Մալխասյանը հանգամանակի վերլուծությամբ եզրակացրել է, որ «Բ դպրության Պարթևների թագավորների ցանկի համար իրքն գլխավոր և տիրապետող աղբյուր է ծառայել Մ. Խորենացու պատմությունը, որի գանձական տեղերից (գիրք Բ, գլ. Բ, ԿԸ, ԿԹ, ՀՍ.) հեղինակը խմբագրել է միայն ժամանակագրական նշութը, բայց թողնելով պատմական մյուս տեղեկությունները»²⁵: Այս դրույթի շորջ որևէ առարկություն չի եղել²⁶, որովհետև հենց բնագրային խորագրում ապահ է, թե «Երկրորդ եցից ի պատմագրաց Մովսիսի Խորենացու և Ստեփանոսի Տարանացու համատի և ճշմարիտ մատենագրաց՝ զորդի ի հարք ճանաչել»²⁷: Ստեփանոս Տարոնացուն Աստղիկի հետ շնույնացնելու կովաճաները Մտ. Մալխասյանից կողմից այլևս թվարկված են, ուստի պատմության այդ հատվածը հետին դարեր տեղափոխելն անկարելի է: Չմտնելով հիշյալ Ա. և Բ դպրությունները «Պատմութիւն Սերենոսի» բաղկացուիչ մաս լինել-չլինելով ծեծված հարցի մեջ, նշենք, որ հավատադրեն Սերենոսի անունը կրող Երկը ևս անձանոթ չէ Խորենացու Պատմությունը: Տարիներ առաջ գիտական հրատարակությունը գրախոսելու առիթով մենք ուշադրության ենք առել Պատմահորից քաղյալ ինքնատիա մի բնութագրություն: Թեոդորոս Ռշտունու և Ներսես կաթողիկոսի մասնակցությամբ կազմած և Կոստանդին կայսեր ուղարկված պատասխան թղթի ավարտամասում կարդում ենք. «Խոկ մեր որպէս ընկալաք զիրաման երկնարադարացի և բարեկաչտ ք թագարորթեանդ, քաջ արանց արքայ» բանաձևումը բառացիորեն քաղյալ է Խորենացու Պատմության մեջ առկա Խոսրով թագավորի՝ «առ ճախարարսն» թղթից («Քաջ արանց Խոսրով Հայոց արքայ, ստրատեատիդ Գաւազոնի և ամենայն ճախարարաց մերոց ողջոյն շատ», Խոր., III, ԽԸ):²⁸ Սերենոսը մասնակից է Կոստանդինապոլիս (Կոստանդ Բ) կայսեր չորրորդ տարում, Ներսես Շինողի օրոք կայացած Դվինի ժողովին (645 թ.)²⁹ և իր Պատմությունն ավարտում է 661 թ. անցուղարձերի արձանագրումով, հետևաբար 7-րդ դարի: Կեսերին Խորենացու Հայոց պատմությունը շրջանառում էր Հայաստանում, ընդ որում նրանից ոչ միայն դեպքեր ու ժամանակագրություններ էին քաղում, այլ նաև բանաձևակից կիրառություն ստացող բնութագրումները³⁰:

6. Թաղեռու առաքյալի և նրա աշակերտ Ադրեթի քարոզչության մասին պատմող աղբյուրները շատ են և տարժամանակային: Խորենացին երկու անգամ հիշեցնում է, որ նրանց մասին «յառաջադրու գրեալ [Ե] յայլոր», «գտանի յայլոց պատմեալ յառաջագոյն քան զմեա»: Վ. Հացունին մասնավորեցրել է, որ Խորենացու հղումը վերաբերում է «Վկայաբանութիւն Թաղեռու առա-

²⁵ Ստ. Մալխասյանց, Սերենոսի Պատմութիւնը և Մ. Խորենացի, Թիֆլիս, 1899, էջ 39, հիմն. էջ 43—44:

²⁶ Ասրդիքների բնությունը տես Ստ. Մալխասյանի նշված աշխատության ներածական մասում:

²⁷ «Պատմութիւն Սերենոսի», Երևան, 1979, էջ 55:

²⁸ Անդ, էջ 161:

²⁹ Հմտ. «Պատմա-բանասիրական հանդես», 1981, № 1, էջ 276:

³⁰ Տես «Կանոնագիրը Հայոց», Բ, Երևան, 1971, էջ 200 և 214:

³¹ Ի դեպք՝ որ մեր բերած արտահայտության մեջինակը իրոք Խորենացին է և ոչ նրա արթուրը կամ մեկ այլ բնագիր, կարելի է ապացուցել Նիկանիան որոշումները ուղեկցող թղթի այլ ընդորինակություններով (տես «Կանոնագիրը Հայոց», Ա, Երևան, 1964, էջ 566):

քելոյն» երկին և Փավստոսի մոտ եղած հիշատակումներին³²: Հայագետների մի խումբ կասկածում է այդ հիշատակումների հախնականության համեմատ³³, սակայն ներկա դեպքում մեզ գրադարձնողը այլ հարց է, հատկապես աղճ, որ Խորենացու Պատմության երրորդ գրքի 34-րդ գլուխը՝ «Յաղագ վկայութեան առաքելոցն մերոյ», անկախ հեղինակից ապրած ժամանակին վերաբերող իրաւամերժ կարծիքների, բնագրային չինելող կասկած չի հարցում:

Խնչակն նշվեց, Խորենացու առաջ նրանց մասին պատմող երկեր իրոք կան: Պատմահոր ապրած ժամանակը տեղաշարժող հետևողական հայագետներից ամենահետևողական ն. Ակինյանը Թաղեռնի և Սանդոխսի «Ակայաբանության» քննության առիթով գրում է: «Անանոն ժամանակագրութիւն Մ. Խորենացին առնելով կը գրէ. իսկ ըստ հրամանի Փրկչին մերոյ Թաղեռն, որ էր մի յետքանասնիցդ, եկան յՈւնիա առ Արքար թագաւոր և բժշկեաց զնան ամենայն տամբ իրով և շինեալ անդ եկեղեցի՝ ձեռնադրեաց քահանայ զԱնէ, որ էր կերպասագործ թագաւորին: Եւ եկեալ գնաց անտի ի Հայոց քարոզել զբանն կենաց: Երբեւ զգաց զգալուստ նորս Սանաւորուկ արքայ Հայոց, գնաց ընդ առաջ նորս և սպան զնան յԱրտազ գաւառի, ի գեալն Բազրուտ»³⁴: Քաղումը, հիրավի, կատարված է Խորենացու Պատմությունից, բացառությամբ Բազրուտ գլուխանվան: «Անանոն ժամանակագրութիւն» անվան տակ ն. Ակինյանը մկանի ունի Մատենադարանի 981 թ. թղթե ձեռագրի (№ 2679) 28v—70v էջերի բովանդակությունը, որ երկիցս հրատարակված է³⁵: Անկախ Անանոն, Անանիա Շիրակացի թե մեկ այլ հեղինակի պատկանելու համգամաներից (ն. Ակինյանը այն համարում է «Դաւիթ քահանայի խմբագիր ժամանակագրություն»)³⁶, խորագրում իսկ սպան է՝ «Մովսէսի Խորենացոյ և Անդրեասի», որ ինքնին աղբյուրի հղում է Աշանակում³⁷: Արդ, արծարծվող «Ժամանակագրություն» ավարտվում է կայսր Հռովտիանոսի երկու տարվա գահակալության և Հայոց ԾՂ (134=685 թ.) թվականին կատարված դեպքերի հիշատակությամբ: Եթե այն կազմվեր այս թվականից պետի ուշ, ապա հեղինակը կիմանար կայսեր գահակալության հաջորդ տարիները ևս և կշարունակեր եղելությունների թվարկումը: Ուստի իրավացի են հայագետները, եթե այն ճանաչում են իրապես որպես 7-րդ դարի հուշարձան, որով ունենք Խորենացու բնագրից բաղումներ կատարող այդ դարում ապրած մեկ հեղինակ ևս³⁸:

³² Վ. Հացունի, Հայաստանեայց եկեղեցին Լուսարքչն յառաջ, «Բազմավեպ», 1925, էջ 225, 257, 289:

³³ Կարծիքների բննությունը տես ն. Ակինյան, Մատենադարական հետազոտություններ. Վկայաբանության և Թաղեռնի և Սանդոխսի կուսին և կանոնը Թաղեռն, «Հանդէս ամսօրեայ», 1969, էջ 403—426:

³⁴ Ն. Ակինյան, նշվ. աշխ., էջ 221—222:

³⁵ Անանոն ժամանակագրութիւն, խմբագիր յօրինեալ յէ դարու ի հնագոյն ժամանակագրաց, Վեմետիկ, 1904: Նաև՝ Ա. Արքանաման, Անանիա Շիրակացու մատենագրությունը, Երևան, 1944, էջ 357—399:

³⁶ Տես «Հանդէս ամսօրեայ», 1957, էջ 181—185:

³⁷ Միուս աղբյուրներն են, ըստ ն. Ակինյանի, Նվազեիսի Քրոնիկնը և եկեղեցական պատմությունը, Եպիփան, Կայսերաց գիրք, Վրթանես Քերյող, Անդրեաս (Վերջինիս Առվելացում է «Հիպոդիտոսի» կամ «Ազգաց գրքի»— (Բետ): Liber generationis (hominum) Տես նշվ. աշխ., էջ 184:

³⁸ Մովսէս Կաղամեստավացու ամունով հրատարակված «Արվանից պատմությանը» չենք ամերադառնում, թեն նրանում կան Խորենացու բաղված ոչ թիս տեղիներ (I, 3—6, 12, 18, 15, II, 3), որովհետև վաղոց արդեն ապացուցված է, որ այն Վերջնական ձևա-

7. Խորենացու Պատմությանն առնչվող հաշորդ երկը «Նկարագիր կարգաց ի բանից Եզնկան երիցու» խորագիրը կրող կարճառոս թևագիրը Է՝ բաղկացած երեք դրվագից («Յաջորդութիւն թագաւորացն ի Տրդատայ», «Նորդումն վկայարանին ս. Հոփիսիմէի ի Կոմիտասէ», «Ժամանակը հայրապետացն Հայոց»):³⁹ Եթե հետևելու լինենք խորագիր և երկրորդ մասի պայմանը հիշատակության տվյալներին⁴⁰, Անդինակը 618/619 թվականից հետո ապրած ժամանակագիր է, իսկ եթե նրա ժամանակը սահմանենք ըստ հայրապետների թվարկման, ապա նրան պիտի համարենք Ստեփանոս կաթողիկոսի (788—790 թթ.) ժամանակակիցը: Համենայն դեպք՝ այս Եզնիկ (Եզնակին Կողբացու հետ նույնացնելու և բնագիրի մեծ մասը անազանդույն—հետամուտ հայտարարելու Ն. Ակինյանի դրույթները համոզիչ չեն: Այդ կարելի է փաստել «Նկարագիր կարգացի» առաջին իսկ դրվագի վերջում Սահմանի և Մեսրոպի աշակերտ Եզնիկի հիշատակման փաստվ, որից ազատվելու համար երախտաշատ հայգենը ընդոմիջարկություն է համարում ողջ պարբերությունը: Այս հուշարձանի տարբեր հատվածներում կան Խորենացու Պատմությանն աղերսվող տեղիներ: Ն. Ակինյանը հավատացած է, որ բաղադրողը Պատմահայրն է, մինչդեռ նրա իսկ մատնացուցած իրողությունները հակառակն են ապացուցում:

ա) Մաշտոցի աշակերտներից «Նկարագիր կարգացը» գիտե՝ Ղևոնի, Արձան, Կորյուն, Եղիշիկ, որ անշուշտ Խորենացուց է գալիս (III, 4), ըստ որում՝ այդ իսկ պատճառով էլ ինքը՝ Խորենացին չի հիշված (այդ դրվագում նա իրեն չի հիշատակում):

բ) Խորենացին գիտե Սահմակի Ծահմակ տարբերակը (III, 1, Թ, ԽԱ), իսկ «Փամանակ Բարպատաց Հայոց» երանց տարբեր անձիք է Բամարում:

գ) Տրդատի որդի Խորենացին է «ոչ համեմատ հաս-
սակի ծնողաց իւրց» (II, ԶԳ) և «փոքր էր յանձնէ և անօսր ուկերօք»
որակում, որտեղից և առ կարող էր «փոքր» հորջորժվել, ինչպես ունենք
«Նկարագիր կարգացի» առաջին խկ պարբերությունում: «Կոմէս» տերմի-
նը ևս Խորենացուց է գալիս (III, ԽԶ) ընդ որում՝ գրեթե ողջ կապակցու-
թյամբ՝ «...և աշխարհին իրեանց մասին կացուցին Ցոյնք կոմէս իշխան»
(Մ. Խոր.), «Ցես սորա կոմէսք կալան» («Նկարագիր կարգաց»):

8. Խորենացու Հայոց պատմության բնագիրը ճանաչող և հրամացի բա-
ռացի քաղումներ կատարող հուշարձանների մի առանձին խումբ էն Շեր-
կայացնում վաղ-միջնադարյան վարքերն ու վկայարանությունները: Ափսո-
սանքով պիտի արձանագրել, որ Պատմամիր ապրած ժամանակի շուրջ վե-
ճեր ծավալելիս այդ երկերը բնագրագիտական բննության չեն ենթարկվել,
իսկ հաճախ էլ, իբրև Խորենացու աղբյուր ընկալելով՝ տեղաշարժել են հրան-
չակառակ պարագայում, Խորենացուց քաղված լինելը ընդունելիս, տեղա-

Եղանակ երաժշտակայթութեան տես Հ. Յ. Աղմանակ, 1947:

⁴⁰ «Եղիշի լիշտուկ Եզնիկան (Ճեղագրու օպակայ)»:

շարժման են ենթարկվել իրենք՝ այդ հուշարձանները։ Երկու դեպքում էլ մասնագիտական քննությունը կատարվել է իրև նախնական կումում կամ խորենացիագիտության մարզում շրջանառող պատրաստի դրույթների կիրառում։ Նախ թվարկենք այդ հուշարձանները։

ա) «Վկայութիւն սրբյն Ծուշանկայ», որ ի Վիրս կատարեցաւ յառնէ իւրմէ յանթիպատրեայ Վրաց առաջնորդէ», կարճ՝ «Ծուշանիկի վկայաբանության» համառոտ խմբագրություն⁴¹։ Կազմված է հայերեն ընդարձակ խմբագրության այսօր մեզ անհայտ տարբերակի համառոտումով։ «Բնեշխ» տերմինի փոխարեն «անթիպատրոս» ունենալը հուչում է, թե խմբագրումը տեղի է ունեցել 6-րդ դարի վերջերից ոչ վաղ⁴²։ Սուաշին իսկ հրատարակության իրացնողը նկատել է, որ վկայության ներածական մասը «առեալ է ի բանից Խորենացւոյն ի ԾԱ և ի ԽԹ գլխոց Գ գրոց Պատմութեան Հայոց»⁴³։ Եւ հիրավի, քաղումը բառացի է, անշան միջարկումներով կամ տարընթերցումներով, ընդ որում ի մի են բերված «Հայոց պատմության» տարբեր գլուխներում եղած և Սահմակին վերաբերող տեղեկություններն ու բնութագրումները (III, ԾԱ+III, ԽԹ+III, ԾԱ)⁴⁴։

բ) «Վկայաբանութիւն սրբյն Ուկեայ և ընկերաց Առա» և «Վկայաբանութիւն սրբյն քաշիցն», որք վկայեցան ի Բագրեսանդ գաւառի ի Սուկաւու լեռնան»⁴⁵։ Այս երկու հուշարձանի ընդհանությունը պայմանավորված է Ալաննեի երկրից Սաթենիկի հետ կամ նրա հետևողությամբ Հայաստան եկած քրիստոնեադավանների համատակության այուժով։ Վկայաբանությունների հետինակը, ըստ բնագրերում իսկ պահպանված հիշատակարանյին տեղեկության, ոմն Անտոն անապատական է «Ը Հովվմայ»։ Դ. Ալիշանի կարծիքը այդ «Անտոն Հովմայցին» ինքը Մովսես Խորենացին է⁴⁶։ Ծշոված է, սակայն, որ նման Անյանացման հիմքերը չկան, որովհետև հեղինակը հականե-հանվանն հիշատակված է⁴⁷։ Սակայն աներկրա է սույն վկայաբանությունների աղերսը Խորենացու Պատմությանը։ Ն. Մատի կարծիքը, Սաթենիկի հիշատակությունը Խորենացու երկում հնարովի չէ, քանի որ մինչև 7-րդ դարի կեսերը գրված Վկայաբանությունները ևս գիտեն Արքան⁴⁸։ Կ. Կեկելինեն արդարացիորեն նկատել է, թե Ուկյանց ու Սուբրասից ալանական ծագումը Ալանք և Աղուանք եղուրի գիտոթի արդյունք է։

⁴¹ Հ. Հրատ., «Սովիերք հայկականք», Թ, Վենևիկ, 1853, էջ 49—55, նաև՝ Լ. Մելիքսեթ-Բեկ, Հիմ հայերենի քրեստոնաւոխ, Տիգ., 1920, էջ 100—103 (վրաց.)։ Հակոբ Ցորտավագիքի, Վկայաբանության Ծուշանիկի, հրատ. Ի. Արուածեն, Տիգ., 1938, էջ 49—53 (վրաց.)։ Վերաբրտառարակությունը՝ 1978, Տիգիս, էջ 122—126։

⁴² Հմմոն. «Հանդէս ամսօրեալ», 1907, էջ 123, նաև՝ Իլիս Արուածեն, նշվ. աշխ., էջ 038 (48)։

⁴³ Դ. Ալիշան, «Սովիերք Հայկականք», Թ, էջ 60, ծառ. 12։ Նույնը հետագայում ասել նաև Ն. Մատի, Ի. Զավահիշվիլին, Ն. Ալիշանը, Ի. Արուածեն։

⁴⁴ Տիգ. Ի. Արուածենի հրատ., էջ 49 (122)—50 (123)₃₂։

⁴⁵ Բնագրերի գիտական հրատ. տես Ի. Արուածեն, IX—X դարերի վրաց-հայկական գրական առնչություններ, Թիֆլիս, 1944, էջ 9—21, 22—61 (վրաց.)։

⁴⁶ Ա. Ալիշան, Արշալույ քրիստոնեութեան Հայոց, Վենևիկ, 1901, էջ 66։

⁴⁷ Անտոն Հովմայցու հիշատակարանային ներածությունը և մանավանդ Սուբրասից վկայաբանության վերջարանը (պահպանվել է Վրացերեն բարգմանությամբ) նշանակալի չափով միշեցնում են Խորենացու վերաբրվող «Հովմայնաց պատմութեամ» ներածական մասը։

⁴⁸ Ի. Մաքք, Ին ուզձք ի Ափոն, СПб., 1899, стр. 17—18.

որը հաստուկ է նաև հումական աղբյուրներին և որ վկայաբանություններում առկա այդ շփոթք գալիս է Մովսես Խորենացու Պատմությունից (I, 1, II ԽԹ, Ծ, ԾԲ)⁴⁹: Ուրեմն պիտի եզրակացնել, որ գիտնականը այս երկու հուշարձանի աղբյուր է համարում Խորենացուն: Եվ իրոք, վկայաբանությունների հեղինակը քանից նշում է, թե ինքը տեղեկությունները քաղում է «ի գրոց պատմագրաց», իսկ մեկ դեպքում ուղղակի ասում. «իսկ ինչպես տեղեկացած ճշմարիտ պատմողներից ու հոգևոր գրքերից, որոնք հաղորդում են Հայքի պատմություններն ու կարգավորությունները, այս երանելիները պարսից խմբից ու տոհմից էին, օսերի թագավորներից հարգված ու անվանի...»⁵⁰: Փաստորեն այսուել ունենք աղբյուրի անմիջական հիշատակություն՝ Հայոց մի այնպիսի պատմության, որ ալաններին, մասնավորապես Սարենիկին Վերաբերող տեղեկություններ կան, որպիսին է միայն Խորենացու Պատմությունը: Ուրեմն՝ 7-րդ դարի առաջին տասնամյակներից ոչ ուշ գրված վարքագրական երկու հուշարձան ևս իրոք աղբյուր են գործածում Խորենացու երկը:

գ) «Վկայութիւն սուրբ հայրապետացն Հայոց Սրբատակիսի, Վրթանիսի, Յուսլան, Գրիգորիսի, Դանիէլի»⁵¹: Նախորդների հետ նույն շարքին պատկանող հուշարձան է, բայց եթե այլ դեպքերում անհրաժեշտ էր լինում ապացուցել Խորենացու Պատմության ունեցած առնչությունը, այսուել արդեն դրա կարիքը չկա: Վկայաբանության տարբեր հատվածներում առկա են Պատմահոր երկից մեծ մասամբ բառացի քաղված մի շարք հատվածներ (Մ. Խոր., II, ՂԱ, III, Գ, III, Բ, ԺԱ, ԺԳ, ԺԴ), ընդ որում առանձին դեպքերում կարելի է այդ հատվածների հիմամբ սրբագրություններ առաջարկել Խորենացու բնագրին⁵²: Ն. Մատը հակված էր այս վկայաբանության մեջ ևս Խորենացու աղբյուր տեսնել, բայց և միաժամանակ չէր բացառում Պատմահոր երկից քաղած լինելու հավանականությունը, ուստի եզրակացնում էր. «այս պարագային հույժ էական կովան կունենայինք հօգուտ այն բանի, որ Մովսես Խորենացին 7-րդ դարի կեսից ոչ ուշ ապրած պատմիչ է»⁵³: Ի. Արուլանեն Խորենացուց քաղած լինելը չի մերժում, բայց որովհետև հայերնից կատարված հին վրացերեն թարգմանության սկզբանասում Ագաթանգեղոսի մեջ հասած բնագրից հատված կա, իսկ Ագաթանգեղոսի երկը Ն. Մատի, Ն. Աղոնցի և Դվ. Զավալիսիշվիլու հետևողությամբ 8-րդ դարի խմբագրություն է համարում, Վկայաբանության ստեղծման ժամանակը համբագրություն է համարում, Վկայաբանության ստեղծման ժամանակը համբագրություն է այդ դարից ոչ առաջ⁵⁴: Այժմ, Գ. Լաֆոնտյենի հրատարակությունարում է այդ դարից ոչ առաջ:

⁴⁹ Կորնելի Կեկելիձե, Դրվագներ վրաց հիմ գրականության պատմությունից, հատ. X, Թիֆլ., 1968, էջ 126 (Վրաց.):

⁵⁰ Տես Ի Արուլանեն, Եշվ. աշխ., էջ 22: Ներածական սույն դրվագի հայերներ բնագրիը ինը երևան չի համալսարակ:

⁵¹ Բնագրի հրատ. տես «Սովետը հայկականը», Ժ, էջ 47—56: Գիտական հրատ.՝ Ի. Արուլանեն, Եշվ. աշխ., էջ 62—68:

⁵² Այսպես, օրինակ, Խորենացու բնագրում կարդում ենք. «Թէպէս և յանձնիորին ասուցն հայելով՝ պարական» զիրոց վարկաներ, այլ տեսևալ զնողույն մեծանձնութիւն...» (III, Գ): Հունաբան «պարականներ» փոխարեն վկայաբանության մեջ ունեն «քեզկու և յանձնութիւն ասուցն հայելով պատասխուն», այլ տեսևալ զնողույն մեծանձնութիւն...»

⁵³ H. Marr, Եշվ. աշխ., էջ 18:

⁵⁴ Ի. Արուլանեն, Եշվ. աշխ., էջ 0140: Ագաթանգեղոսի հատվածի հայերներ թարգմանությունը տես Պ. Մուրադյան, Ագաթանգեղոսի հին վրացերեն խմբագրությունները, Երևան, 1982, էջ 122—123:

Այս հետո, գիտենք, որ այդ թվագրությունը թյուր է, 7-րդ դարի սկզբին Ազգայանձեռոսի ընդարձակ (այսպես կոչված ազգային) խմբագրությունը արդեն հայերենից հոնարենի էր թարգմանվել⁵⁵: Ուրեմն պարզ է՝ եթե ոչ ավելի վայ, գեյ 7-րդ դարում, ինչպես և Մատև էր թվագրում, վկայարանությունը լայնորեն քաղումներ է կատարում Խորենացոց:

Դ) «Պատմութիւն սրբոյն Ներսիսի հայրապետին և Խաղայ եախսկոպուսին»: Բնագիրը Երուսաղեմի ձեռագրերից մեկում երևան է բերել և. Սառով⁵⁶, իսկ գիտական հրատարակությունը իրացրել է ի. Արուղաձեմ⁵⁷: Երկուսն էլ ըստ ամենայնի դիտարկել են, որ բացառությամբ Փակստոսից եկող մի դրվագի, բնագիրն ամբողջությամբ քաղված ու հարաված է Խորենացու Պատմության երրորդ գրքի տարբեր գլուխներից (մասնավորապես՝ III, ի, իթ, լ, լս, լթ, լգ, լե, լջ, լէ, լզ): Նախորդի պես այս հուշարձանը ևս սրբագրությունների հնարավորություն է ընձեռում: Այսպես, օրինակ՝

Խորենացի

Եւ գերկուս զայտոսիկ յազգաց ճախարացն բանաւ. մի՛ զմերձատրաց խնամութիւն, զոր վասն ագահելոյ սեպհական ազատութեանն առնելին. և միս՝ որ ի վերայ մեռելոց գործեին ոճիրս ըստ հեթանոսական սովորութեանն (III, ի):

«Պատմութիւն Ներսիսի»

Եւ գերկուս զայտոսիկ բառնայ ի նախարարացն ազգաց. մի՛ զմերձատրաց խնամութիւն զոր վասն ագահելոյ սեպհական ազատութեանն առնելին. և միս՝ որ ի վերայ մեռելոց գործեին ոճիրս, կոնելով ըստ հեթանոսական սովորութեանն:

Պարզ է, որ նախնականն ու բնագրայինը «Ներսիսի պատմության» ընթերցումն է: Ինչպես մյուս դեպքերում, այս հուշարձանն էլ և. Մառը թվագրում էր 7-րդ դարից ոչ ուշ ժամանակով:

Ե) «Կատարումն սրբոյն Սահմակայ Պարթևի»: Սովոր խորագրի տակ առանձնացվող երկը փաստորեն Ղազար Փարպեցու Պատմության առաջին դրվագի 18-րդ հատվածն է⁵⁸: Ներկա դեպքում հենդինակային ստուգության հարցը մեզ չի զրադեցնում⁵⁹, այլ այն, որ հիշալ վերտառությամբ երկը մեզանում գործանել է իրեն առանձին միավոր և պահպանվել հին վրացերեն թարգմանությամբ: Քանի որ այդ թարգմանության մեջ նկատելի է 700-ա-

⁵⁵ Guy Lafontaine, La version grecque ancienne du Livre Arménien d'Agathange, Louvain-la-Neuve, 1973, p. 33—41:

⁵⁶ H. Mapp, Предварительный отчет о работе на Синае, веденных в сотрудничестве с И. А. Джавахэовым, и в Иерусалиме, в поездку 1902 г., стр. 15.

⁵⁷ Տես ՀՀՎ. աշխ., էջ 69—79:

⁵⁸ Ղազարայ Փարպեցու Պատմութիւն Հայոց և Թուիլք առ Վահան Սամիկոնեան, Տփիիս, 1904, էջ 37—38: Պատմության Սահմակին վերաբերող հատվածը հայտնի է նաև առանձին ընթորհնակություններով (նույն նորայր եպս. Պողարյան, Նորագյուտ հատված Ղազար Փարպեցու «Հայոց պատմութեան», «Բանքեր Մատենադարանի», № 8, Երևան, 1967, էջ 263—274, նաև՝ Պարույր Մորուջյան, Հատված Ղազար Փարպեցու «Պատմությունց», «Հայագիտական հետազոտություններ», Ս, Երևան, 1974, էջ 194—226:

⁵⁹ Խնդրի քննությունը տես Հ. Ն. Ակիմյան, Պատմական աղբիրները, 380—450 շրջանի համար, «Համելէս ամսօրեալ», 1935, էջ 454—460: Հմտու. նաև «Համելէս ամսօրեալ», 1972, էջ 408—414:

կան թվականներին գրված Narratio...-ի բնագրային ազդեցությունը⁶⁰ և վրացերեն բնագրի առաջին խկ տողում ասված է, թե Սահմակը «քստ հարց նախնի կարգի ամուսնացած էր», խկ եպիսկոպոսների ամուսնացածությունն արգելվեց Վեցերորդ տիեզերական ժողովի որոշմամբ 692 թվականից⁶¹, որին համապատասխան հայերեն բնագրիր գոյացել կամ թարգմանվել է 7-րդ դարի պարտից ոչ շուտ: Մենք այստեղ չենք քննարկելու նաև Փարագեցուց քաղված հատվածների առնչությունը Խորենացու «Հայոց պատմության» համապատասխան դրվագներին որոնցով ի մասնավորի գրադարձ են Խաղաթյանը, Ն. Բյուզանդացին, Ն. Ակինյանն ու Պ. Տեր-Պողոսյանը⁶², այլ անհրաժեշտ ենք Ակատում արձանագրել, թե հայերենից ինն վրացերեն թարգմանված «Կատարումն սրբոյն Սահմակայ Պարթևի» բնագրում կամ ուղղակիորեն Խորենացուց վերցրած հատվածներ, որոնք ճանաչել և առանձնացրել է այդ երկի ոտումնասիրությամբ գրադարձ հայագետն Ի. Արուլաձեն⁶³: Խորդությունը փաստելու համար առենք միայն, որ քաղաքողը անհրաժեշտ է համարել կրկնել Խորենացու այն վերապահությունը, թե «Հայց թէ ասից ոք՝ պարտ է մեզ զասացեալս մեծին Սահմակայ ի Պարսից հրապարակախօսութեանն գրել՝ գիտացէ, զի ոչ յումերէ ի լսկիս մեր հասեալ է բռվանդակն ճշմարտութեամբ, և ոչ մեր ի պատմութեանն հիսեկ հաւանիմք» (III, ԿԵ): Այս խոսքերի դիմաց ինն վրացերենում կարդում ենք. «...անվախ էր խոսում, սակայն չհասցրինք գիտենալ նրա խոսքերի խորքը»: Կարծում ենք նոր ապացուցներ վկայակոչելու հայրի չկա:

Այսպիսով, վերևում մենք անուն առ անուն թվարկեցինք տարբեր ժամաների պատկանող վեց հուշարձան ևս, որոնք աղերսվում են Խորենացու Պատմությանը կամ քաղումներ կատարում նրա բնագրից: Այդ հուշարձանների առանձնացումը պատահական չէր. նրանք բոլորը միշնադարում հայերենից թարգմանվել են վրացերեն և պահպանվել Աթոռի Վրաց մայրավանքի «Վարք սրբոցում»⁶⁴: Զետագիրը ընդօրինակված է 10-րդ դարի վերջերին, «Առաստորի» գրչությամբ, Ն. Մատի ճշտմամբ՝ «մրգլովանի» (Երկարագիր) գաղափար օրինակից: Ի. Արուլաձն թարգմանությունները գետեղելի է համարում 840—960-ական թվականների արանքում, սակայն Կ. Կեկելիձեն ցուց է տվել, որ նման եղբակացության հիմնավոր կովաններ չկան⁶⁵: Ն. Մատը հակված էր թարգմանությունները թվագրել հայ-վրացական Կեկելեցական միասնության շրջանով, ուստի մատնացուցում էր 7-րդ դարը: Այս եղբակացությունը անհամեմատ ավելի հիմնավոր է, որովհետև նրանցում քաղկեդոնական դավանության հետքեր չկան և, ինչպես Կ. Կեկելիձեն էր ապացուցում, Տայքի վրացախոս հայերի գրական գործունեությունը⁶⁶

⁶⁰ Հումարեն բնագրի հրատ. տես Gerard Garitte, *La Narratio de rebus Arméniae*, Louvain, 1952, Հ. Բարթիկյանի հայերեն թարգմանությունը տես «Բանքը Մատենադարանի», № 6, Երևան, 1962, էջ 457—470:

⁶¹ Հմտու. Կ. Կեկելիձեն, Աշվ. աշխ., էջ 129:

⁶² «Հանդէս ամսօրեաց», 1972, էջ 403—414:

⁶³ Ի. Արուլաձն, Աշվ. աշխ., էջ 0143—0149, Բնագրի հրատ. տես Աշվ. աշխ., էջ 80—84:

⁶⁴ Զետագիրի Ակարագրությունը տես R. Blake, Catalogue des manuscrits. géorgiens de la bibliothèque de la Laure diviron au Mont Athos, «Revue de l'Orient chrétien», 1931, No. 28, pp. 318—329. Հմտու. Պ. Մուրադյան, Ազգային պատմագրության խմբ, բագրությունները, էջ 112—120:


⁶⁵ Կ. Կեկելիձեն, Աշվ. աշխ., էջ 127—128:

թյանն առնչելու ի. Արովածեի վարկածը չի հաստատվում: Կարծում ենք, այդ է հաստատում նաև գրչագրի նախօրինակի «երկաթագիր» լինելու հանգամանքը: Մի բան պարզ է՝ այս հուշարձանների հայերեն բնագրերը գոյացել ու շրջանառել են ավելի վաղ, բան կատարվել է նրանց հին վրացերեն թարգմանությունն: Եվ քանի որ նրանք բոլորը բնագրական առնչություններ ունեն Խորենացու Պատմության հետ՝ Պատմահոր երկը այդ դարում արդեն կար:

Մեր եզրակացությունն արդեն պարզ է. կամ պիտի ապացուցել այս շուրջ երկու տասնյակ հուշարձանների, հիշված հեղինակների ու թարգմանությունների անվագերականությունը, կամ ընդունել, որ Խորենացին այն դարի ու միջավայրի հեղինակ է, որոնցով ինքը ներկայանում է: Կարծում ենք, գիտության, մանավանդ բնագրագիտության նորմերով ու մեթոդներով առաջնորդվող հետազոտողի համար այլևս տարակուսելու հնարավորությունն և ատիթ չպիտի լինի: Բայց այդ ամեննին չի նշանակում, թե պիտի բանադրել Խորենացու քննադատությամբ պարապողներին. Նրանց բերած նպաստը ևս թիշ չէ՝ եթե ուզում ենք մեր պատմությունը հիմնել աղբյուրագիտական վատահելի խարիսխների վրա: Խորենացու «Հայոց պատմությունը» կարուն է քննական հրատարակության, որով կզատորոշվեն ընդմիջարկություններն ու հետագա հավելումները, աղավաղումները կպարզվեն, և մենք ի նոր կսկսենք հասկանալ ու ճանաչել Պատմահորը: Մեր քննության առաջ հուշարձանները նշանակալի հյութ են ընձեռում այդ սպասելի գիտական հրատարակությունն իրացնելուն:

Եվ այսուամենայնիվ, մեր խոսքը ավարտուն չէր լինի, եթե չարձանագրեինք, որ հայոց մատենագրության ավանդա «երանելի փիլիսոփա», «մատենագիր», «ճարտասան», «քերթող, քերթողահայր», «Պատմահայր» և այլ որակումները պարզ հաճողաբարություններ չեն, այլ նրա իրական վաստակը ներկայացնող եզրեր: Դժվար է ցուց տալ մեկ այլ մատենագիր, որի ստեղծած երկը հաջորդ երկու հարյուր տարիների ընթացքում այդքան հաճախ և այդքան բարացի շրջանություն կատարեր, արգասավորելով ճառերի, վարքերի, վկայաբանությունների, ժամանակագրությունների ու թղթերի պատկանելի մի քանակությունն, որպիսիք են արդեն ներկայացված հուշարձանները: Փաստրեն Խորենացու տեղաշարժը խամաշփոթի կմատնի տակավ առ տակավ, օղակ առ օղակ հյուսված մատենագրության շղթան: Եթե Խորենացին պայմանավորում է իրենից օգտվող հեղինակների ու հուշարձանների երևան գալը 6—7-րդ դարերում, ապա վերջիններս ել պայմանավորում են Խորենացու կննաց ու գործի ժամանակը, նշանակությունը:





ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ «ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ» ՆՈՐ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

1991 թվականի Երևանի համալսարանի հրատարակությունը լույս ընդացեց Պետրոս Հովհաննեսի Հովհաննիայանի «Մովսես Խորենացու մատենագիտությունը» աշխատափրությունը:

Սույն ժողովածուն պարունակում է Մովսես Խորենացու «Հայոց պատմության» և ընդհանրապես Պատմահոր երկասիրությունների (նաև վերագրվող) հրատարակությունների մատենագիտությունը՝ ըստ նրանց տպագրության ժամանակագրական կարգի, առաջին՝ 1695 թ. տպագրությունից մինչև վերջին հրատարակությունը: Տրվում են նաև յուրաքանչյուր հրատարակության, նրանց էջերի բանակի, տպագրության վայրի ու տարեթվի, ինչպես նաև որոշ լրացուցիչ տվյալների մասին տեղեկություններ: Աշխատությունն ընդգրկում է նաև այլաբեզու թարգմանություններն ու հատվածական հրատարակությունների: Ուսումնասիրության վերջում գետեղված է երկանիրողների կենսագրական բառարանը:

Սույն մատենագիտությունը բաղկացած է հետևյալ գլուխներից.

- Ներածություն.
- Մատենագիտություն Մովսես Խորենացու «Պատմութիւն հայոց»-ի հրատարակությունների.
- Մատենագիտություն Մովսես Խորենացու Պատմության առանձին հատվածների հրատարակությունների.
- Մատենագիտություն Մովսես Խորենացու այլևայլ և նրան վերագրվող երկերի հրատարակությունների.
- Մովսես Խորենացու «Պատմութիւն հայոց»-ի երկասիրությունների կենսագրական բառարան:

Վերը նշված գլուխները իրենց հերթին բաժանված են առանձին ենթագլուխների:


Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը» առաջին ամսամ լույս է տեսել 1695 թվականին Թովմա եպիսկոպոս Վանանդեցու (Թովմա Նորիշ Նորիշշանյան) աշխատափրությամբ և ծախսով: Դիմելով համայն ընջանի Նորիշշանյան) աշխատափրությամբ և ծախսով: Դիմելով համայն դերցողներին, Պատմության աշխատափրությամբ Թովմա եպիսկոպոս Վանանդեցին, գրում է.


«Ես անպիտան և ունայն և թափոր յամենից լաւաց և օգտակարաց Թօմաս ծառայ ծառայից Սաստուծոյ ի վայելուց քաղաքէ Վանանդոյ Գողթնեաց, ձեռնամուխ եղեալ տպեցի զՉքնաղավէա՝ և գԳեղեցկաշատ Պատմոթիւնս, Նախնեաց մերոց, և Հայկագունեաց Տոհմի համեն՝ և ախորժալոր ոճի»:

Ի մեջ այլ մատենագիտական աշխատանքների, Մովսես Խորենացու «Հայոց պատմոթյան» մատենագիտությանն են անդրադարձել շատ և շատ հայ և օտար մտավորականներ, ինչպիսիք են Մ. Միհնարովը, Ք. Պատկանյանը, Կ. Կոստանյանը, Ա. Սալմալյանը, Գ. Զարրիանալյանը, Ա. Ղազիկյանը, Գ. Ծրումաֆը, Հ. Պետրոսյանը և ուրիշներ: Իսկ միմիայն ու հատուկ Մովսես Խորենացուն նվիրված մատենագիտություններ են Կազմել Մ. Էմինը, Վ. Լանգուան, Գ. Գովրիկանը, Պ. Ֆեթթերը, Խ. Ստեփաննեն, Գր. Խալաթյանը, Ն. Բյուզանդացին, Հ. Արմենը և ուրիշներ: Սակայն այս բոլորի մեջ առավել ամբողջականները Մ. Աբելյանի, Ստ. Մալխասյանցի և Ս. Մարաբյանի կազմած ցանկերն են:

Իր իսկ կազմած Մովսես Խորենացու «Հայոց պատմոթյան» սույն մատենագիտության մասին Պետրոս Հովհաննիսյանը «Ներածություն»-ում գլուխ է.

«Սսել, թե սույն ցանկը զերծ է վրիպակներից, ճիշտ չի լինի: Հայունի է, որ չկան ու չեն կարող լինել անթերի, վերջնական մատենագիտական ցանկեր: Ուստի մեծագույն շնորհակալությամբ կը նդունենք սույն մատենագիտության վերաբերյալ ընթերցողների հայտնած դիտողությունները, լրացուներն ու ցանկությունները, որոնք հաշվի կառնվեն Մովսես Խորենացու լիակատար մատենագիտությունը կազմելու ժամանակ»:






ЭЧМИАДЗИН*

ОФИЦИАЛЬНЫЙ ЖУРНАЛ ЭЧМИАДЗИНСКОГО КАТОЛИКОСАТА

(ИЮНЬ—ИЮЛЬ 1992 г.)

1. Энциклика Католикоса всех армян Вазгена I о создании Общеармянского Основного Капитала «Айастан», 17 марта 1992 г. (стр. 3—5).
2. Энциклика Католикоса Киликийского Домна Гарегина II о создании Общеармянского Основного Капитала «Айастан», 17 марта 1992 г. (стр. 6—9).
3. Слово Католикоса всех армян Вазгена I по случаю праздника соборного Св. Эчмиадзина, 21 июня 1992 г. (стр. 10).
4. Слово Католикоса всех армян Вазгена I армянскому народу по Ереванскому телевидению, 17 июля 1992 г. (стр. 11—14).
5. Решение Католикоса всех армян Вазгена I о лишении духовного сана священника Мартироса Чилингаряна и священника Давида Зелвеяна, 11 июля 1992 г. (стр. 15).
6. **Володя Абрамян**—Католикос всех армян Вазген I—почетный член Академии наук Республики Армения. По этому случаю помещено также слово благодарности Католикоса всех армян Вазгена I, 21 июля 1992 г. (стр. 16—19).
7. Торжество завершения учебного 1991—1992 гг. Духовной Академии Св. Эчмиадзина. Помещены также доклад инспектора Духовной Академии епископа Анания Арабаджяна и благословительное слово попечителя Духовной Академии архиепископа Нерсеса Позапаляна, 19 июня 1992 г. (стр. 20—26).
8. Церковная хроника первопрестольного Эчмиадзина за июнь—июль месяцы (стр. 27—28).
9. Проповедь архиепископа Шаге Аджемяна в Кафедральном соборе Св. Эчмиадзина, 27 июня 1992 г. (стр. 29—32).
10. Проповедь архиепископа Нерсеса Позапаляна в Кафедральном соборе Св. Эчмиадзина, 21 июня 1992 г. (стр. 33—36).
11. Проповедь архиепископа Нерсеса Позапаляна в Кафедральном соборе Св. Эчмиадзина на праздник Вардавара, 26 июля 1992 г. (стр. 37—40).
12. Освящение армянской молельни Св. Воскресения в столице Абхазии Сухуми 10 мая 1992 г. (стр. 41—42).
13. **Акоп Коосеян**—Святое Миро (исследование)—(стр. 43—45).
14. **П. А. Акопян**—Несколько вопросов исследований армянских мартирологов (исследование и оригинал)—(стр. 46—69).
15. **Ерванд Мелконян**—Мовсес Хоренаци в журналах «Аракат» и «Эчмиадзин» (исследование)—(стр. 70—84).
16. **Паруйр Мурадян**—Текстуальные следы «Истории Армении» Мовсеса Хоренаци в сочинениях VI—VII вв. (исследование)—(стр. 85—98).
17. Новая библиография «Истории Армении» Мовсеса Хоренаци (рецензия)—(стр. 99—100).



ETCHMIADZIN
OFFICIAL MONTHLY OF HOLY ETCHMIADZIN
(JUNE—JULY 1992)

1. Encyclical of His Holiness Vasken I, Catholicos of All Armenians, on the occasion of the creation of «Armenia» pan-Armenian fund, 17-th March 1992 (pp. 3—5).
2. Encyclical of His Holiness Garekin II, Catholicos of the Great House of Cilicia, on the occasion of the creation of «Armenia» pan-Armenian fund, 17-th March 1992 (pp. 6—9).
3. Address of His Holiness Vasken I on the occasion of the feast of Holy Etchmiadzin's Cathedral, 21-st June 1992 (p. 10).
4. Address of His Holiness Vasken I to the Armenian people from the TV of Yerevan, 17-th July 1992 (pp. 11—14).
5. Sentence of His Holiness Vasken I about the apostasy of Fathers Mardiros Tchilinguirian and David Zelveyan, 11-th July (p. 15).
6. **Volodya Abrahamian**—His Holiness Vasken I, Catholicos of All Armenians. Honorary member of the Republic of Armenia's Academy of sciences. On this occasion it is given also the address of thanks of His Holiness, 21-st July 1992 (pp. 16—19).
7. Festivity at the end of the 1991—1992 school year of Holy Etchmiadzin's Spiritual Seminary. It is given also the report of the director Bishop Ananya Arabadjian and the blessing address of Archbishop Nerses Bozabalian, chancellor of the Holy See and rector of the Spiritual Seminary, 19-th June 1992 (pp. 20—26).
8. Divine liturgy services and sermons delivered in the Holy Cathedral and description of church festivities in the Holy See during the months of June and July 1992 (pp. 27—28).
9. Sermon of Archbishop Shahé Adjemian in the Holy Cathedral of St. Etchmiadzin, 7-th June 1992 (pp. 29—32).
10. Sermon of Archbishop Nerses Bozabalian in the Holy Cathedral of St. Etchmiadzin, 21-st June 1992 (pp. 33—36).
11. Sermon of Archbishop Nerses Bozabalian in the Holy Cathedral of St. Etchmiadzin, on the occasion of the feast of Transfiguration, 26-th July 1992 (pp. 37—40).
12. Consecration of St. Resurrection chapel of Sookhoomy, capital of Abkhazya, 10-th 1992 (pp. 41—42).
13. **Hakob Keuseyan**—Holy Oil (study)—(pp. 43—45).
14. **Pion Hakopian**—A few questions of the study of Armenians' martyrology (study and original text)—(pp. 46—69).
15. **Yervand Melkonian**—Movses Khorenatzty in the monthlies of «Ararat» and «Etchmiadzin» (study)—(pp. 70—84).
16. **Parooyr Mooradian**—Textual traces of Movses Khorenatzty's «History of Armenians» in the work of the VI—VII centuries (study)—(pp. 85—98).
17. New bibliography of Movses Khorenatzty's «History of Armenians» (literary critic)—(pp. 99—100).



“ETCHMIADZINE”

ORGANE OFFICIEL DU SAINT-SIEGE D'ETCHMIADZINE (JUIN-JUILLET 1992)

1. Encyclique de Sa Sainteté Vasken Ier publiée le 17 mars 1992 à l'occasion de la création du Fonds «Arménie» (pp. 3—5).
2. Encyclique de Sa Sainteté le Catholicos Karékine II publiée le 17 mars 1992 à l'occasion de la création du Fonds «Arménie» (pp. 6—9).
3. Message de Sa Sainteté Vasken Ier prononcé le 21 juin 1992 à l'occasion de la fête de Saint-Etchmiadzine (p. 10).
4. Message de Sa Sainteté Vasken Ier adressé le 17 juillet 1992 au peuple arménien par la télévision d'Erévan (pp. 11—14).
5. Décret du 11 Juillet 1992 de Sa Sainteté annonçant que les prêtres Martiros Tchilingarian et David Zelyan ont été défrôqués (p. 15).
6. **Volodia Abrahamian**—Le Catholicos de tous les Arméniens Vasken Ier est élu membre d'honneur de l'Académie des Sciences de la République d'Arménie. Texte de l'allocution de Sa Sainteté prononcée à cette occasion (21 juillet 1992—(pp. 16—19).
7. Cérémonie de clôture de l'année scolaire 1991—1992 au séminaire théologique du Saint-Siège d'Etchmiadzine (Textes du rapport de l'évêque Anania Arabadjian et du message de bénédiction de l'archevêque Nersès Bozabalian (recteur du séminaire) adressé aux séminaristes (pp. 20—26).
8. Brèves informations concernant la célébration des saintes messes, les sermons prononcés à cette occasion et d'autres cérémonies religieuses qui ont eu lieu dans la cathédrale de Saint-Etchmiadzine au cours des mois juin—juillet 1992 (pp. 27—28).
9. Sermon de l'archevêque Chahé Adjémian prononcé le 7 juin 1992 dans la cathédrale de Saint-Etchmiadzine (pp. 29—32).
10. Sermon de l'archevêque Nersès Bozabalian prononcé le 21 juin 1992 dans la cathédrale de Saint-Etchmiadzine (pp. 33—36).
11. Sermon de l'archevêque Nersès Bozabalian prononcé le 26 juillet 1992 à l'occasion de la fête de la Transfiguration (pp. 37—40).
12. Consécration de la chapelle arménienne de la Ste. Résurrection à Soukhoumi (République autonome d'Abkhazie)—(pp. 41—42).
13. **Hakob Keusseyan**—«Le Saint Chrême» (étude)—(pp. 43—45).
14. **P. H. Hakopian**—«Quelques problèmes concernant l'étude des Actes des Martyrs» (étude et textes)—(pp. 46—69).
15. **Yervande Melkonian**—Movsès Khorénatsi dans les revues «Ararat» et «Etchmiadzine» (étude)—(pp. 70—84).
16. **Parourir Mouradian**—«Les traces textologiques de l'«Histoire d'Arménie» de Movsès Khorénatsi dans les ouvrages des VIe—VIIe siècles (pp. 85—98).
17. La nouvelle bibliographie de l'«Histoire d'Arménie» de Movsès Khorénatsi (pp. 99—100).

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՄԵՐԱՅԻՆ ՀԱՅՈՑ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ կոնդակը «Հայաստան»	3
Համահայկական Հիմնադրամի ստեղծման առթի	
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՑ Տ. Տ. ԳԱՄԵԳԻՒ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ կոնդակը «Հայաստան» Համահայկական Հիմնադրամի ստեղծման առթի	6
Տօն կաթողիկէ Սր. Էջմիածնի	
Ամենայն Հայոց Հայրապետ Տ. Տ. Վազգեն Ա-ի խօսքը ուղղուած նայ ժողովրդին Երևանի մեռուստացոյցից	11
Կարգագրկման հայրապետական վճիռ	
ՎՈՂՈՒՅԱ ԱԲՐԱՀԱՄՅՅԱՆ—Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը Հայաստանի Հանրապետության գիտությունների ակադեմիայի պատվավոր անդամ	15
Սուրբ Էջմիածնի հոգինոր նեմարանի 1991—1992 տասնմական տարվա փակման հանդեպ	16
ՄՄՅՐ ԱԹՈՌՈՒՄ—Եկեղեցական բնմ. լուրեր	20
Օսմէն արքափակուոսու Ամենայն քարոզը Մայր տաճարում	27
Ներսէն արքափակուոսու Պողապալյանի քարոզը Մայր տաճարում	29
Ներսէն արքափակուոսու Պողապալյանի քարոզը Մայր տաճարում Վարդապահի տոններ	33
Սույնումին Ս. Հարուրյուս Աղյուսառան օծումը	37
ՀԱԿՈԲ ՔՅՈՒԵՑԱՆ—Սրբազնու Մյուոռն	41
Պ. Հ. ՀԱԿՈԲՅԱՆ—Հայոց վկայաբանությունների ուսումնափրության մի քանի հարցեր	43
ԵՐՎԱՆԴ ՄԵԼՔՈՆՅԱՆ—Մովսէս Խորենացին «Արարատ» և «Էջմիածն» ամսագրերում	46
ՊԱՐՈՒՅՐ ՄՈՒՐԱԴՅԱՆ—Մովսէս Խորենացու «Հայոց պատմության» բնագրական հետքերը 6—7-րդ դարերի երկերում	50
Մովսէս Խորենացու «Հայոց պատմության» նոր մատենագիտություն «Էշմիաձն» օֆիցիալնայի շարքում	99
«Etchmiadzin» official monthly of Holy Etchmiadzin	101
«Etchmiadzine» organe officiel du Saint-Siege d'Etchmiadzine	102
	103

ԽՄԲԱԳԻՐ՝ ԵՐՎԱՆԴ ՄԵԼՔՈՆՅԱՆ

**ԽՄԲԱԳԻՐ ՀԱՅՈՑ ՀԱՅՈՒԹՅՈՒՆ ՀԱՍՏԵՆ
ՀԱՅՈՒԹՅԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ԷՇՄԻԱՅԻՆ
«ԷՇՄԻԱՅԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

Республика Армения, Эчмиадзин. Редакция журнала «Эчмиадзин».

Rédaction de la revue «Etchmiadzine», Etchmiadzine. Arménie.

Հանձնված է արտադրության 15.06.1992 թ.: Ստորագրված է տպագրության 28.08.1992 թ.:
Տպագրական 6,5 մամոլ + 1 մերդիր, թուղթ 70×108^{1/16}, պատվեր 58:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տպարան